ԵՐԵՎԱՆ

#5(70)
2021

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀ

«Անտարեսը»

► Ստեղծում է
ԿՐԹԱԿԱՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ

- գրքեր
- ձեռնարկներ
- դասագրքեր

► Ձգտում է ձևավորել
ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ

- մթնոլորտ
- մրցակցություն
- հասարակություն

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ մթնոլորտը ձևավորվում է այն մարդկանց միջոցով, որոնք կարևորում ու ձեռք են բերում ԿՐԹԱԿԱՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ գրքեր:
Ձևավորի՛ր մթնոլորտ:

Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374 10) 58 10 59, 56 15 26
antares@antares.am / www.antares.am

Հարություն Սարգսյան

Հիշո՞ւմ եք՝ կար ժամանակ՝ քովիդ չկար, անքովիդ ժամանակներում լիքը ճամփորդություններ կային: Դե հիշեք ձեր օտարերկրյա այցելություններից մեկը: Ասենք, ճակատագրի բերումով հայտնվել եք Փարիզում: Ինչն էր, որ էն գլխից պարտադիր տեսակցության ցանկում էր: Այո՛, Թանգարանները: Գոնե մի օր հատկացրել եք Լուվրին, չէ՞: Իսկ Բեռլինում քանի՞ ժամ եք շրջել Պերգամոնում ու Նոյես Մուզեումում: Նույնիսկ Եգիպտոս մեկնելիս, երբ զերնպատակը ծովափնյա հանգիստն է, միևնույն է, դեպի բուրգեր եք ուղևորվել, ճանապարհին էլ մտել եք Կահիրեի եգիպտական Թանգարան: Հեռու չգնանք, ընդամենը հարևան Թբիլիսի, ոնց էլ չլինի՝ և՛ Փիրոսմանիի հավաքածուն եք ուսումնասիրել (ու հաստատ առանց մազնիսների դուրս չեք եկել հուշանվերների խանութից), և՛ հետաքրքրության համար ծանոթացել եք Սովետական օկուպացիայի թանգարանին:

Ինչո՞ւ ենք անում այդ ամենը: Ոչ միայն փիառի կուտն ուտելու պատճառով: Ոչ միայն սելֆիների ու չեքինների համար: Այլ որովհետև թանգարանները թույլ են տալիս ավելի լավ հասկանալու այն երկրները, որտեղ մենք ճամփորդել ենք:

Իսկ հիմա հիշեք, թե երբ եք վերջին անգամ թանգարան գնացել Երևանում: Գիտե՞ք, որ մարդիկ կան՝ կյանքում չեն եղել նույնիսկ Էրեբունի արգելոց-թանգարանում: Էդ դեպքում ինչպե՞ս կարող ենք հասկանալ ու ճանաչել ինքներս մեզ:

Զստացվի, որ վերևից մեղադրում եմ մյուսներին, բնավ: Խոստովանեմ, ինքս Էրեբունիում վերջին անգամ եղել եմ դպրոցական տարիքում (դասարանով էքսկուրսիա էինք գնացել), իսկ մեր այս համարում այս կամ այն կերպ ներկայացված թանգարանների մի մասը նոր եմ բացահայտում, մյուսները գիտեի, բայց բացահայտում եմ նորովի:

Եկեք չսպասենք թանգարանների միջազգային օրվան, երբ մուտքն անվճար է լինում, այլ մեր սովորական առօրյայում մեզ մի քիչ տուրիստ զգանք մեր քաղաքում ու չռած աչքերով շրջենք մեզ հասանելի գանձերով լի դահլիճներում: Մենք չունենք Նիֆերտիտիին, ոչինչ, ունենք Սայաթ-Նովայի «Դավթարը»: Մենք չունենք Պերգամոնի շլացուցիչ Իշտարի դարպասը, բայց որտե՞ղ է գտնվում մարդկությանը հայտնի ամենահին կաշվե կոշիկը (մեր՝ Հայաստանի պատմության թանգարանում): Դինոզավրերի կմախքների ամենամեծ հավաքածուն, իհարկե, Բրյուսելում է, բայց մենք էլ մեր ձեռքի տակ՝ Բաղրամյան պողոտայում, ունենք ոչ այլ ինչ, քան մի ամբողջ հայկական մամո՛նտ (mammuthus armeniacus, ստուգեք Երկրաբանական թանգարանում, մուտքը՝ զավեշտալի 700 դրամ)... Եվ այսպես կարելի է շարունակել շատ երկար: Մի խոսքով, մեր գանձերը գուցե խալխի գանձերի պես պայծառ չեն փայլում, բայց միևնույն է՝ թանկարժեք են ու դեռ շատ բան ունեն պատմելու մեզ մեր մասին:

Գլխավոր խմբագիր
Արտավազդ Եղիազարյան

ՔԱՂԱՔԱՄԵՋ

04 Խառը կանաչի
Ամսվա ամփոփում
Գարեգրի փառապոն, Սարեն Անդուշյանի նոր գիրքն ու դպեխիպոների իմաստությունները:

06 Տեքստիլ
Օքրա
Արվեստի համագործակցությունը դեեքսդիլի հետ «Օքրա» բրենդի ներքո:

08 Հեռահաղորդակցություն
Տիեզերական կապի մեջ
Սապի թանգարանն ու Հայաստանում ապագայի կապ կառուցող «Մեկնելով Արմենիան»:

10 Բարձրություն
Իմ սիրտը տանիքում է
Երևանի դանիիլներն ու այնտեղ կբոնող երաստղները:

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

14 Խորհուրդ
Թանգարան այցելելու 10 պատվիրանները
Մեր խորհուրդները թանգարանային այցերն ավելի արդյունավետ դարձնելու համար:

16 Այլընտրանք
Թաքնված գանձեր
Բժշկություն, Առագին հանրապետություն, երկաթուղի և այլն. Երևանի 6 ոչ ակնհայտ թանգարան:

22 Համալրում
100 տարվա հավաքչություն
Ինչպես է համալրվում Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի հարուստ հավաքածուն:

26 Ուղեկից
Էքսկուրսավար. Թանգարանային սուպերհերոսների մասին
Էքսկուրսավարի մասնագիտության կարևորությունը Երևանի պատմության թանգարանի օրինակով:

29 Փորձառություն
«Վա՛յ, իմ տատիկի տանը կա սրանից»
Ժողովրդական արվեստների թանգարանում ոչ միայն ցուցադրում, այլև վերակենդանացնում են գոնեն ու ավանդույթները:

32 Համադրում
Ժամանակավոր, բայց մնայուն
Ինչպես են Կոմիտասի թանգարան-ինստիտուտում կազմակերպում բազմաստան ժամանակավոր ցուցադրությունները:

34 Համադրում
Խնամակալները
Ովքեր են համադրողները և ինչպիսի միջակում է մասնագիտությունը Հայաստանում:

38 Հետնաբեմ
Ձեռագրերի բժիշկները
Սեփական աչքերով դեռևս ենք, թե ինչպես են Մատենադարանի ռեստավրացիոն բաժնում վերակենդանացնում հնագույն մատյանները:

42 Շրջայց
Արարատն ու սեփական ինքնության բանալին
ARARAT թանգարանի նոր ցուցահանդեսն ու շրջայցը երեք երևանյան թանգարաններ:

44 Արգելոց
Էրեբունի. պեղումը՝ տեղում
Մեր թղթակիցն առագին անգամ այցելել է Էրեբունի արգելոց-թանգարանը (և հիացած է մնացել):

50 Խանութ
Ելքը՝ հուշանվերների խանութով
Երևանի թանգարաններից գնված հուշանվերներ. մեր ընտրանքը:

52 Ապագա
Մենք ենք մեր կինոն
Ինչպես է փրկվում հայ կինոյի արխիվը, որպեսզի հետո դառնա թանգարան:

56 Զևավորում
Կամո Նիգարյանի հեղինակային թանգարանները
Ինչպես Կամո Նիգարյանը փոխեց մեր պատկերացումները թանգարանային ցուցադրությունների մասին:

60 Կադրերի բաժին
Հայոց ցեղասպանության թանգարանի կառուցումը, 1995 թ.
Մի դրվագ Երևանի պատմությունից:

Գլխավոր խմբագիր՝
ԱՐՏԱՎԱԶԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Արտ-տնօրեն՝
ՆՈՆՆԱ ԻՍԱՋԱՆՅԱՆ
Թողարկող խմբագիր՝
ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
Գրական խմբագիր՝
ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Սրբագրիչ՝
ՀԱՍՄԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ
Ֆոտոմշակում՝
ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Էջադրում՝
ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Շապիկ՝
Հարություն Թումաղյան

ԵՐԵՎԱՆ #5(70) | 2021

Հեղինակներ՝
Մարգարիտ Միրզոյան, Հասմիկ Բարխուդարյան, Ամալի Խաչատրյան, Շուշանիկ Փափազյան, Արտավազդ Եղիազարյան

Լուսանկարներ և պատկերազարդումներ՝
Հարություն Մալխասյան, Մարիամ Հովհաննեսյան, Հրանտ Խաչատրյան, Հարություն Թումաղյան, Առնոս Մարտիրոսյան, Էմմա Հարությունյան, Արմենպրես, Կոմիտասի թանգարան-ինստիտուտ, ԳԱԿ, Երևանի կոնյակի գործարան, Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան, Մարինե Հարոյանի արխիվ

Տառատեսակ
Arek Armenian by Rosetta, Montserrat Arm հեղինակներ՝ Ջուլիետա Ուլանովսկի, Վահան Հովհաննիսյան

«Քաղաքի ամսագիր» ՍՊԸ
Տնօրեն՝
Արտավազդ Եղիազարյան

Հայաստանի Հանրապետություն, 0014, Երևան, Պարույր Սևակ 8
Էլ. փոստ՝ evnmag@gmail.com
Առցանց՝ evnmag.com

facebook.com/YerevanCityMagazine

instagram.com/evnmag

© 2011-2021 **«ԵՐԵՎԱՆ»**

Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«ԵՐԵՎԱՆ» ապրանքային նշանի իրավատեր է հանդիսանում Արտավազդ Եղիազարյանը:

Համարը տպագրության է հանձնվել՝ 27.07.2021

Տպագրված է Անտարես տպագրատանը, 0009, Երևան, Մաշտոցի 50ա/1

Տպաքանակ՝ 4000 օրինակ

Ամսագիրը ղեկավարվում է «Զանգվածային լրատվության մասին» և «Գովազդի մասին» ՀՀ գործող օրենսդրությամբ:

Ամսագրի նյութերը վերատպվում են միայն իրավատիրոջ գրավոր համաձայնությամբ: «ԵՐԵՎԱՆ» ամսագրին հղում կատարելը պարտադիր է:

«ԵՐԵՎԱՆ» ամսագրի ստեղծման գաղափարը պատկանում է «Երևան Փրոդաքշնս» ՓԲԸ-ին:

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Աջակցվում է Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի աջակցությամբ

ՎԻՇԱՊԱՎԱՔԱՐԻ ԳԱՂՏՆԻՔԸ



Նոր հայկական ֆենթըզի վեպ՝ մեր կողքին ապրող
վաղնջական առասպելական էակների մասին

Երևանի բոլոր գրախանութներում

գինը՝ 4990 դրամ

Զրից

Էս վիրուսն իհարկե կա, բայց իմ կարծիքով էնքան էլ վտանգավոր չի, ոնց որ ներկայացնում են: Ավելի շուտ առիթ էր պետք աշխարհը փակելու ու մի նոր բան ստեղծելու համար: Ոնց որ հարյուր տարի առաջ եղավ իսպանական վիրուսը, չէ՞, ու դրա ֆոնին ստեղծվեց ինչը՝ Սովետական Միությունը, մի լրիվ նոր տնտեսական միավոր: Հիմա էլ մի բան սպասվում ա, համոզված եմ:

***

Առավոտվա ինն ա, արդեն տես ինչ շոգ ա: Սա գլոբալ խնդիր ա, հեն ա՝ Բիլ Գեյթսը զգուշացրել ա, որ մի քանի տարի հետո ավելի ա վատանալու վիճակը:

***

Մարդիկ ընդհանրապես սովորություն ունեն միանգամից ծաղրելու էն, ինչ որ չեն հասկանում: Չեն էլ փորձում մի քիչ ավելի լեն նայեն աշխարհին: Օրինակ, ինձ թվում ա՝ մարդ, որ իսկապես ցանկություն ունենա, ամեն ինչ էլ կարա անի: Պետք լինի՝ կարա թռնի էլ: Բայց չեն ուզում էլի, ուզում են սենց էլ մնան, սաղ օր փնթփնթան, լեն նայողների վրա էլ ծիծաղան:

***

Երևի մտածում եք՝ էս ոնց եմ կարողանում սենց հանգիստ խոսել, տաքսիստները սովորաբար ինչ վատ բառ գիտեն, սկսում են ասել, չէ՞: Բա՛, քույրիկ ջան, մեր աշխատանքը շատ ա ներվեր քայքայում, տաքսիստը պիտի մի քիչ հոգեբան լինի, մի քիչ մանկավարժ, բոլորի հետ լեզու գտնի, բայց դե ամեն մեկը չի, որ կարողանում ա: Սիր, տաքսիստ չեն դառնում, տաքսիստ ծնվում են:

***

Մոսկվայում էն ինչ փոթորիկ արեց՝ մարդիկ լողալով էին տեղաշարժվում: Ընչից եմ մի քիչ վախում՝ իրանց մոտ էլ դրանից առաջ մեր նման դուխովկա արեց, հետո ռեզկի ջուր եկավ: Մեր մոտ էլ նույնից չլինի, խայտառակ ըլնենք:

***

Էս կորոնավիրուսը որ սկսվեց, դե կետ ունեի Վերնիսաժում՝ փակվեց, մտածեցի՝ ինչ կարամ անեմ, որ ընտանիքս պահեմ մի քանի ամիս: Ասեցի՝ դիմեմ էս փրկարարական ջոկատներին, հրշեջ, բան: Զանգեցի, ասեցին՝ պիտի սպասեք, հետո պատրաստվեք, հետո հերթագրվեք... Դե պարզ ա, որ լուրջ գործ ա, պատրաստություն ա պետք, բայց դե ինձ էլ պետք էր մի տեղ աշխատել: Էդ մեկը տենց էլ չստացվեց:

Ինչ անել

Գարեջրի և Սննդի Զուգակցման Օրեր 2021

Զաֆյան փողոց | օգոստոսի 14-15

Երևանի Գինու օրերի կազմակերպիչները հրավիրում են ամառվա շոգը զովացնելու գարեջրով ու զուգակցելու այն լավ սնունդով: Միջոցառման մուտքն ազատ է, սակայն գարեջուր ըմպելու համար անհրաժեշտ է ձեռք բերել համտեսման փաթեթ 5000 դրամ արժողությամբ, որը ներառում է գարեջրի մեծ գավաթ, պատյան և կտրոններ: Զաքյանի փառատոնային հատվածը բաժանված կլինի չորս գոտու՝ գարեջրի, սննդի, վարպետաց դասերի (այստեղ, օրինակ՝ կպատմեն, թե ինչ գարեջուր արժե պատվիրել ինչ սննդի հետ), խաղային:

Ջարդուփշուր

Հայֆիվ | օգոստոսի 14

Շատ յուրահատուկ ժամանց 18-ից բարձր տարիքի մարդկանց համար. հագնում ես պաշտպանիչ հագուստ, վերցնում ես մահակ կամ մուրճ, մտնում ես ապահով սենյակ ու ինչքան սիրտդ ուզի՝ ջարդուփշուր ես անում ինչ ասես՝ սառնարանից սկսած մինչև շշեր ու ձմերուկ: Հետո լիցքաթափված կարելի է գնալ պարելու (դիջեյներն են՝ QVANT project, Serjo, A.Chilla, M'AD, S.I.T.H):

Նոր նստավայր



Jellyfish Yerevan, Իսահակ Գասպարյան 34 (Զվարթնոց օդանավակայանի հարևանությամբ)

Եթե այս ամառ չհասցնեք մեկնել ծովափ, կարող եք զգալ ծովի ջերմությունը (գոնե՝ մասամբ) Երևանում: Jellyfish-ը, ինչպես հայտնում են ՖԲ էջում, «տրոպիկական կղզի է Երևանում»: Լողավազանն այստեղ շրջապատված է Միջերկրական ծովից բերված ավազով, իսկ ռեստորանը լի է ծովամթերքով: Պատկերն ամբողջացնում են բարձրորակ երաժշտությունն ու տրոպիկական կոկտեյլները:

Նոր նստավայր

Վայրապար, Չայկովսկու 30

Հիշում եք այն զարմանալի դիզայներական խանութը, որը բացվեց անցած աշնանը Նալբանդյան փողոցի լքված ավտոտնակներից մեկում: «Օրորի» հիմնադիրները կանգ չառան տեղում ու բացեցին «Վայրապար» community space-ը (այն է՝ հանրային տարածք): Այստեղ գաղափարապես միախմբված է մի քանի նախագիծ: Նախ, տարածքում կարելի է փորձարկել «Օրորում» վաճառվող իրերը՝ իրապես պատկերացնելու դրանց գործնական նշանակությունը: Բացի այդ, «Վայրապարում» գործում է Box Photolab-ը, որտեղ կարելի է թվայնացնել անալոգային ֆոտո ժապավենները, իսկ Berq Studio-ն առաջարկում է իր արտադրած փողոցային զգեստները: Տարածքում պարբերաբար կանցկացվեն աշխատարաններ, տեղի կունենան ցուցահանդեսներ:

Նոր գիրք



Սարեն Անտաշյան, «Դղոն», Գրանիշ

Հայ նոր պոեզիայի ամենաինքնատիպ ներկայացուցիչներից մեկը հրատարակել է իր երրորդ ժողովածուն: Ինչպես ասվում էր գրքի շնորհան - դեսի էջում, Անտաշյանի «Դղոնը» էքզիստենցիալ ճգնաժամի և ինքնության տարբեր ասպեկտների փլուզումի միջով իր պարտությունների վերջնագծին մոտեցած ժամանակակից մարդու պատում է, որն այնուամենայնիվ գտնում է ճանապարհ դեպի ապրելու բերկրանքը և նրա ուղեցույցը բնավ հույսի փողփողուն դրոշակը չէ: Գիրքն ամփոփում է հեղինակի վերջին տարիների աշխատանքը, իսկ բանաստեղծություններից շատերը հրապարակվել են Անտաշյանի ֆեյսբուքյան էջում: Ըստ Անտաշյանի՝ «Դղոնն» իր սերնդի ապրածի վկայությունն է:

Արմեն Գրիգորյան, «Արիզա»

Շատ հարմար ընթերցանություն՝ ամառային արձակուրդների մեջ գտնվող դպրոցականների համար: Արմեն Գրիգորյանի վիպակի գլխավոր հերոսը գնում է հեռավոր ճամփորդության, որտեղ պետք է կախարդական բաղադրատոմս գտնի: Արկածային ժանրի լավագույն ավանդույթների համաձայն՝ նրան սպասում են զանազան փորձություններ, որոնց օգնությամբ նա բացահայտումներ կանի սիրո և ընկերության մասին, ինչպես նաև ջիների ու կախարդների տիպի հեքիաթային կերպարներ: Հատուկ նշենք, որ գրքում տեքստի հետ զուգահեռ մեծ դեր են խաղում նկարազարդումները (նկարիչ՝ Մերի Սարմազյան):

Անտոնիո Մաբուկկի, «Պնդում է Պերեյրան», Անտարես

2021 թվականին Հայաստանում թարգմանված 1994 թվականի իտալական վեպ, որի գործողություններն ընթանում են 1938 թ. Պորտուգալիայում, որի գլխավոր հերոս լրագրող Պերեյրան թարգմանում է 19-րդ դարի ֆրանսիական գրականություն, բայց որի կյանքը փոխվում է, երբ գործի է ընդունում մի երիտասարդի, որն ընդհատակում պայքարում է իսպանական դիկտատոր Ֆրանկոյի ռեժիմի դեմ: Տաբուկկիի վեպը 20-րդ դարավերջի ամենանշանակալի իտալական վեպերից մեկն էր, դրա վկայությունն են զանազան մրցանակները: Հայերեն թարգմանությունը կատարել է Հասմիկ Եղիազարյանը՝ անտարեսյան «Օտար գիր» շարքի համար:

Վահան Թոթովենց, «Բաբու», Էդիթ Պրինտ

Վահան Թոթովենցին մենք գիտենք նախ և առաջ «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրականով ու մի քանի պատմվածքներով, այնպես որ նրա «Բաբու» վեպն ըստ էության կարելի է նորություն համարել: Անդրկովկասում դարասկզբի հեղափոխական իրադարձությունների մասին պատմող գիրքը լույս է տեսել 1930-1934 թվականներին և դրանից հետո այլևս չի վերահրատարակվել: Կապիտալիզմի վաղեմի թշնամի Թոթովենցի այս գրքում էլ հերոսը չքավորության մեջ հայտնված ամուսիններ Մարթայի և Վիրաբի որդի Լևոնն է, որը սովորական բանվոր է Բաքվի նավթային ոլորտում, աստիճանաբար տարվում է հեղափոխական գաղափարներով:

Մայքլ Քանինգհեմ, «Վայրի կարապը և այլ պատմություններ», Անտարես

Ժամանակակից կարևորագույն ամերիկացի գրողներից մեկի՝ Փուլիցերի դափնեկիր Մայքլ Քանինգհեմի «Վայրի կարապում» ներառված է 10 գործ՝ արքետիպային, բոլորիս հայտնի հեքիաթների (Ռապունցելի, Գեղեցկուհու և Հրեշի, Ռումպելշտիցկինի և այլոց մասին) ժամանակակից վերաշարադրումներն են՝ միանգամայն նորովի և անսպասելի մոտեցմամբ: Հայերեն թարգմանությունը կատարել է գրող Արմեն Հայաստանցին:

Օքրա

Եթե երբևէ մտածել ես սպասարել տեղական արտադրության, սիրում ես արվեստ ու մի քիչ էլ մրսկան ես, ապա արի քեզ պատմենք հայկական արտադրության բրդյա ծածկոցների՝ «Օքրա» բրենդի մասին:

Ինչպես ստեղծվեց Օքրան

Երկար ժամանակ Հայաստանում և Ռուսաստանում ժամանակակից արվեստի և մշակութային նախաձեռնությունների համար ֆոնդահայթայթման ոլորտներում ունեցած փորձառությունը, ի վերջո, Անուշ Զեյնալյանին, Ալինա Սարահիկինային և Նատալիա Գերասինային ստիպեց միավորվել ու մտածել որևէ յուրահատուկ ու նոր, բայց անկախ նախաձեռնությամբ հանդես գալու ուղղությամբ, ինչը հնարավորություն կտար լուծել ոչ միայն գեղարվեստական, այլև սոցիալական և կոմերցիոն խնդիրներ:

Այդպես ստեղծվեց «Օքրան»: Համահիմնադիր Անուշ Զեյնալյանն ասում է, որ իրեն և իր գործընկերուհիներին հատկապես հետաքրքիր էր սոցիալական ձեռնարկատիրության կոնցեպտը: Այս կոնտեքստում կարևոր էին արվեստն ու արվեստագետներին սատարելու գաղափարը, միևնույն ժամանակ՝ հայաստանյան սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին պատկերացումը:

Դրանից բացի «Օքրայի» թիմին շատ է ոգեշնչում Գյումրին և հենց այդ քաղաքից էլ սկսվել է ամեն բան, քանի որ Հայաստանի արդյունաբերության պատմության ուսումնասիրություններն իրենց հերթին ցույց տվեցին, որ Խորհրդային Միության տեքստիլի ամենամեծ գործարաններից մեկը եղել է հենց Գյումրիում: Բացի այդ՝ Շիրակը ոչխարաբուծության և բրդյա մանածագործության դարավոր ավանդույթներ ունի: Մյուս կողմից՝ ոգեշնչման աղբյուր էր Բաուհաուսի և Վխուտեմասի փորձառությունը: «Օքրան» միավորում և վերաիմաստավորում է արվեստագետներին, ավանդական արհեստները և խորհրդային արդյունաբերական ժառանգությունը:

«Հայաստանում արվեստային խնդիրները հիմնականում հասկանալի էին մեզ համար, սոցիալական խնդիրները՝ նույնպես,– ասում է Անուշը:– Սկսեցինք ուսումնասիրել, թե ինչ խնդիրներ կան բիզնեսի ոլորտում և հասկացանք, որ աշխարհի շատ երկրների տեքստիլի արտադրողներ Հայաստան են ուղարկում հումքն ու ստանում իրենց արտադրանքը Շիրակի և Լոռվա մարզերում գործող տեքստիլի գործարաններից՝ օգտվելով էժան աշխատուժի հնարավորությունից: Մեզ համար անչափ մտահոգիչ էր, որ Հայաստանը, փաստորեն, սպասարկում է այլ երկրների ընկերությունների գաղափարները»:

«Օքրան» ստեղծելու դրդապատճառներն այսքանով չեն սահմանափակվում: Խնդիրը ոչ միայն սոցիալական ու ձեռնարկատիրական է, այլև արվեստային: «Խնդիր ենք դրել արվեստը մոտ բերել մարդկանց: Ինչպես մենք, այնպես էլ մեզ հետ համագործակցող արվեստագետները գտնում են, որ արվեստը, արհեստներն ու կիրառական արվեստը պետք է մշտապես շրջապատեն մեզ առօրյա կյանքում»,– նշում է Անուշն ու հավելում, որ «Օքրայի» սոցիալական կոմպոնենտն օգնում է ոչ միայն մանածագործներին, այլև հենց իրենց՝ արվեստագետներին. «Շատ կարևոր է ստեղծել պայմաններ, որտեղ արվեստագետը կարող է ազատ ստեղծագործել և չմտածել ապրուստի մասին, ինչը, ցավոք, Հայաստանում քիչ է հանդիպում: Հենց այդ պատճառով կարևոր ենք համարում նախագիծը դարձնել եկամտաբեր, ինչը հնարավորություն կտա ստացված միջոցներն ուղղել արվեստային այլ անկախ նախագծերի իրականացմանը»:

Լավագույն հումքը

Հայաստանյան տեքստիլի ոլորտի ուսումնասիրություններն ու փնտրտուքները գործընկերուհիներին տարան դեպի Ամասիայում գործող բրդի գործարանը, որը 2019-ին վերաբացվել է Եվրամիության աջակցությամբ: Գործարանի բրդի մշակման և արտադրական տեխնիկան շատ մոտ են հնին, դրանք ըստ էության հին տեխնիկայի լրամշակված տարբերակներն են, աշխատում են կիսաավտոմատ ռեժիմով և հետևաբար՝ ստեղծված արտադրանքը ձեռքի աշխատանքի արդյունք է:

Բացի այդ՝ բուրդը հայկական նյութական մշակույթի մաս է, բրդյա իրերը մեծապես օգտագործվել են հայերի կենցաղում: Նաև կարևոր է, որ բրդի արտադրությունը, ի տարբերություն այլ կենդանական ծագում ունեցող հումքի տեսակների, չի վնասում կենդանիներին, բրդի ստացումը չի վտանգում բնության ու կենդանիների կենսաշրջանը: Այս ամենի հետ մեկտեղ բրդից ստացվող թելը երկարակյաց է, ունի բարձր առաձգականություն, ծալքեր գրեթե չի առաջացնում, պահպանում է ձևն ու ծառայում է երկար տարիներ:

Արվեստ և ոգեշնչում

«Օքրան» համագործակցում է երեք արվեստագետի հետ, որոնք ստեղծում են ծածկոցների էսքիզները: Արվեստագետներից մեկն Ալեքսեյ Մանուկյանն է, որի արվեստը մեծապես կապված է Գյումրիի լանդշաֆտի ուսումնասիրության հետ, Գոհար Մարտիրոսյանն էլ, չնայած որ այլևս Գյումրիում չի ապրում, հաճախ է վերադառնում և նույնիսկ դեռահաս տարիքում հաճախ է եղել Գյումրիի տեքստիլի գործարանում և այդ ամենի հետ նոստալգիկ կապ ու զգայունություն կա իր արվեստում: Սերգեյ Նավա-

Ավելի մանրամասն՝
ochre.am
facebook, instagram: ochre.origins

սարդյանի հետ աշխատանքում «Օքրային» հատկապես հետաքրքիր էր արվեստագետի գրաֆիկ դիզայնի փորձառությունն ու մոտեցումները: Անուշը նաև նշում է, որ իրենց հետաքրքիր էր սթրիթ արտի ոլորտում հայտնի Սերգեյի աշխատանքները դրսից բերել ներսի տարածքներ:
«Օքրայի» մասին խոսելիս Ալեքսեյ Մանուկյանը նշում է, որ այն այլ ոլորտի հետ առնչվելու և համագործակցելու հրաշալի հնարավորություն էր և մի նոր տարածք, որտեղ իր փորձը և գիտելիքը կարող է օգտակար լինել կիրակառական արվեստի այս ուղղությունը զարգացնելու համար: «Միայն մի մտահոգություն ունեի. ես միշտ ստեղծագործել եմ ինքնուրույն՝ հիմնվելով իմ ունեցած ռեսուրսի վրա: Իսկ այս դեպքում ես պիտի հաշվի առնեի նաև նախագծի կարիքները և նպատակները: Սակայն այդ տեսակ խնդիրները լուծվեցին նախագծի ընթացքում, որի համար շատ ուրախ եմ»,– նշում է նկարիչն ու հավելում, որ նաև խնդիր կար հասկանալու, թե արդյոք իրատեսական է այն, որ հեղինակային ստեղծագործությունները կարող են դառնալ կիրառական արվեստի գործեր: Ալեքսեյին ամենից շատ հետաքրքիր էր հենց այդ կայացման ընթացքը:
«Օքրային» Ալեքսեյը տրամադրել է 2010-ականների իր մի շրջանի աշխատանքները: Դա «մաքուր» շրջան էր, երբ նկարիչն ազատվեց նկարչական մակերեսի ավելորդություններից՝ թողնելով «մաքուր» գծային հետք, ուղի, ճամփա, արահետ: Բրդյա ծածկոցները գործելու հին տեխնոլոգիան, պարզվեց, պատկեր ստեղծելու տեսանկյունից ունի սուղ հնարավորություններ և Ալեքսեյի աշխատանքները հնարավոր եղան կյանքի կոչել շնորհիվ իր կնոջ՝ Արփինեի, ով արդեն գործված ծածկոցի վրա ասեղնագործեց պատկերը: Այս առումով, սակայն, Ալեքսեյը խնդիր չի տեսնում, ասում է. «Ես ազատությունը ստեղծագործական նյութի մեջ չեմ տեսնում: Այն պրոցեսի մեջ է: Արվեստագետն ունի տարբեր փուլեր, որի ընթացքում նյութը փոփոխվում է կամ ոչ: Իսկ ազատությունը լայն իմաստով արվեստագետի ներքին վիճակն է, որը կամ կա, կամ ոչ»:
Գոհար Մարտիրոսյանն էլ շատ է կարևորում այն հանգամանքը, որ «Օքրան» կարողացավ ընդգծել ու վեր հանել այն, ինչը մի տեսակ թերագնահատված ու անկնատ էր մնում Գյումրիում: «Այս շարքի համար օգտագործեցի հենց բրդի օրգանիկ գույները, ինձ համար կարևոր էր այդ հղումը մաքուր պահելը: Կոմպոզիցիոն առումով ստեղծեցի լայն, երկու կամ երեք տարածքներ, որոնք հատվում են ինչ-որ տեղ: Այդ առումով ոգեշնչված եմ Մարկ Ռոթկոյից, որի արվեստում երկրաչափական տարածքները խոսում են նաև ներքին տարածքների մասին: Ինձ համար միշտ կարևոր է եղել փորձելը, քիչ խոսելը, բայց ինչ-որ բան ասելը, ինֆորմացիայով չծանրաբեռնելը, ինչը, կարծում եմ, սպառողական մշակույթի մաս է դարձել, և ես փորձում էի իմ գործերում գալ ինչ-որ զրոյական կետի»,– պատմում է Գոհարն ու հավելում, որ «Օքրան» ինչ-որ առումով կոլեկտիվ աշխատանքի արդյունք է և նման է ծածկոցի, որտեղ թելերը միահյուսվում ու ստեղծում են ընդհանուր պատկերը, դա, ըստ Գոհարի, մի փոքր հասարակության մոդել է:
Սերգեյ Նավասարդյանին էլ հատկապես դուր եկավ «Օքրայի» և մասնավորապես Անուշի մոտեցումը նախագծին և այն միտքը, որ արվեստագետներին կարելի է ներգրավել նման արտադրության մեջ: Ըստ նրա՝ հետաքրքիր էր, թե ինչ կստացվի վերջում, քանի որ ի սկզբանե ինքն էլ չէր պատկերացնում վերջնական արդյունքը: «Ես սիրում եմ փորձել, էքսպերիմենտներ անել ու «Օքրան» էլ ինքն իրենով էքսպերիմենտալ է: Այն միանգամայն նոր է ինձ համար: Ծածկոցների հետ աշխատանքը հետաքրքիր է նրանով, որ դրանք ստեղծվում են հին տեխնիկայով, ձեռագործ են և հենց դա էլ, ըստ իս, «Օքրայի» հիմնական առանձնահատկությունն է: Բայց այդ տեխնիկան բավական շատ սահմանափակումներ ունի և միշտ չէ, որ այն, ինչ մտածել ես, հնարավոր է իրականացնել նույնությամբ: Բավական երկար պրոցես է, պետք է հասկանալ ֆորմաները, ընտրել գույները, հղկել այնքան ժամանակ, մինչև որ տեխնիկական սահմանափակումներն ու քո ներքին ազատությունը հնարավորինս մոտեցնես իրար, ինչը բերում է էլ ավելի լավ արդյունքի»,– նշում է Սերգեյը:
Այժմ «Օքրան» ներկայացված է ոչ միայն Հայաստանում, այլև Սանկտ-Պետերբուրգում: Այդ համագործակցությունն Անուշը շատ կարևոր է համարում հատկապես հայ արվեստագետներին միջազգային հարթակներում տեսանելի դարձնելու տեսանկյունից:

«Օքրա» սոցիալական ձեռնարկության առաջնահերթությունն իրականացվում է Հայաստանում Եվրոպական միության պլուրալիզմի ֆինանսավորմամբ՝ «Համագործակցություն հանուն սոցիալական ազդեցության» ծրագրի «ԿՈՎԻԴ-19-ի հաղթահարման ԵՄ ֆոնդի» շրջանակում և Ինֆոպակ Հաբ Երևանի ազակցությամբ:
Ծրագիրն ազակցություն է ստացել ՄԱՌ-ի Զարգացման ծրագրի/Նորբա լաբի կողմից՝ Ռուսաստանի Դաշնության ֆինանսավորմամբ:

Սույն հրապարակությունը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական ազակցությամբ:
Սույն հրապարակության բովանդակության բացառիկ պատասխանատվությունը կրում է «Օքրա» սոցիալական ձեռնարկությունը և այն ոչ մի կերպ չի կարող արտահայտել Եվրոպական միության տեսակետները:

Հասմիկ Բարխուդարյան
Հարություն Մալխասյան, Նատալյա Ռատրուբաևա
@nasty.rr՝ @usta_k_ustam ապրանքանիշի համար



Սիեկերական կապի մեզ

ԵՐԵՎԱՆը եղել է հայոց կապի անցյալի, ներկայի և ապագայի պահոցում. պատմում ենք նախկին «ԱրմենՏելի» շենքում տեղակայված Կապի թանգարանի և շենքում բնակություն հաստատած «Տելեկոմ Արմենիա» ընկերության մասին, որն այսօր վերահմաստավորում է կապի ոլորտը Հայաստանում:

Սիեկերական շենքը

Ազատության պողոտայով անցնելիս անպայման մի պահ կանգ ես առնում և հայացքդ գցում քարե զարդանախշերով և բարձրաքանդակներով պատված շինության վրա: Մոլորակներ, տիեզերագնացներ, արև, աստղեր, հեռախոսով զրուցող կերպարներ, մարդիկ, որոնք իրենց ուսերի վրա տանում են մի ամբողջ իմաստնություն: Ամբողջ պատկերն ասես շարժման մեջ լինի: Նախկին «ԱրմենՏելի» շենքն իր ամբողջ տեսքով հուշում է, որ ներսում գաղտնիք ունի, այստեղ տիեզերական գործընթացներ են տեղի ունենում: Եվ իրոք, այս շենքի պահոցներն իրենց մեջ զետեղում են Հայաստանի հեռահաղորդակցական անցյալը, ներկան և արդեն՝ ապագան: Շենքը մշտապես կապի մեջ է:

Հարյուր տարի առաջ

«Շարի՛, գալիս եմ»: Մոտավորապես այսպիսի բովանդակություն ուներ հեռավոր 1997 թվականին գրված Հայաստանում երբևէ ուղարկված առաջին էլեկտրոնային տեքստային հաղորդագրությունը: Նամակի հեղինակն այն ժամանակվա Կապի նախարար Գրիգոր Պողպատյանն էր, ով ցանկանում էր շախմատ խաղալ իր ընկերոջ՝ «ԱրմենՏելի» գլխավոր տնօրեն Վահրամ Սողոմոնյանի հետ:

Նման դրվագներ և այլ հետաքրքիր երևույթներ հայոց հեռահաղորդագրական պատմության մեջ շատ են եղել և այդ ամենը պահվում է հենց այդ տիեզերական շենքում գտնվող Կապի թանգարանում: 2012 թվականին բացված թանգարանի նմուշներն այցելուներին տանում են մեկ հարյուրամյակ հետ՝ դեպի 1913 թվական, երբ

← Կապի նախկին նախարար Գրիգոր Պողպատյանը՝ Կապի թանգարանում

Ամիրյան փողոցում գտնվող մի հեռագրային գրասենյակի երկրորդ հարկում տեղադրվեց առաջին հեռախոսային կայանը, որը հեռախոսակապ էր տրամադրում շուրջ 200 բաժանորդի:
Թանգարանը մեզ տեղափոխում է հետ՝ այն օրերը, երբ զանգեր հնարավոր էր կատարել միայն հեռախոսավարուհու միջոցով, ով հեշտությամբ կարող էր լսել ձեր խոսակցությունը, երբ մի ամբողջ բազմաբնակարան շենք օգտվում էր միայն մեկ հեռախոսից, երբ հենց այդ նույն հեռախոսը չուներ անջատման կոճակ, իսկ փողոցում տեղադրված հեռախոսին հնարավոր էր խաբել՝ զցելով թելով կապած կոպեկը և խոսակցության ավարտին հետ քաշել: Ի դեպ, թանգարաններում ներկայացված սարքավորումների մեծ մասն աշխատում է, կարելի է զանգահարել սենյակի մի հեռախոսից մյուսին՝ վերարտադրելով տասնամյակներ առաջ եղած հեռախոսային փորձառությունները:

Նոր սերնդի ցանցը

Շարունակելով շենքի տիեզերական տրամադրությունը՝ այսօր այնտեղ է գտնվում «Տելեկոմ Արմենիա» ընկերության գլխամասը: Շաբաթներ առաջ ընկերությունը ձեռնարկեց օպտիկամանրաթելային ապագայի NGN (Next Generation Network) սերնդի ցանցը, որը յուրաքանչյուր բաժանորդին կարող է տրամադրել 25 Գբիթ/վրկ արագություն: Պարզապես պատկերացում կազմելու համար ասենք, որ ներկայումս օգտագործվող GPON ցանցերի արագությունը կազմում է 1 Գբիթ/վրկ: Է՛լ ավելի պարզ հասկանալու համար նշենք, որ ընկերության տնօրեն Հայկ Եսայանի խոսքով այսօր Հայաստանի բնակիչները բոլորը միասին օգտագործում են ընդամենը 500 Գբիթ/վրկ արագություն:
Նոր՝ տիեզերական արագությամբ COSMO կապը դեռևս հասանելի է միայն Դավթաշեն թաղամասում, բայց մոտակա ուղղությունն Արաբկիր վարչական շրջանն է, որտեղ աշխատանքներն արդեն մեկնարկել են: Ցանցի գործարկումից ընդամենը երկու օր անց օպերատորն արդեն ուներ իր հարյուրերորդ հաճախորդը: Այսօր շուրջ 500 հոգի բաժանորդագրվել է և նրանց մեծ մասն արդեն իսկ միացված են ցանցին: Ընկերությունը պլան ներ ունի մեկ տարում նման օպտիկական մանրաթելերով պատել ամբողջ Երևանը և մի քանի այլ քաղաք Հայաստանում:

Գրեթե անսահմանափակ կապ

Այս լուծման նպատակը միայն նորարարությունը չէ, այլ ընդհանուր ծառայության որակի բարձրացումը, դրա համար սկսեցին համագործակցել ոլորտում աշխարհի առաջատար Nokia ընկերության հետ՝ կիրառելով նոր սերնդի սարքավորումներ, ներառյալ Wi-Fi ուժեղացուցիչներ և տրամադրելով մի շարք այլ առավելություններ:
Բնականաբար, օպտիկական մանրաթելերի օգտագործումը Հայաստանում արդեն իսկ կիրառվում է այլ օպերատորների կողմից, սակայն վերջիններս, օգտագործելով այդ տեխնոլոգիան, մեկ մանրաթելը բաշխում են մի շարք բաժանորդների միջև: NGN ցանցը, իր հերթին, յուրաքանչյուր բաժանորդին տրամադրում է մեկ օպտիկական մանրաթել, որը հետագայում հեշտությամբ կարելի է վերազինել ապագայի տեխնոլոգիական նորամուծություններին համապատասխան: Բացի այդ, այսօր էլ բաժանորդը կարող է ստանալ գրեթե անսահմանափակ արագություն՝ կիրառելով համապատասխան տեխնիկա:
«Տելեկոմ Արմենիան» իր բաժանորդներին չի կապում երկարաժամկետ պայմանագրային պարտավորություններով, քանի որ վստահ է տրամադրած լուծման որակի վրա և որ հաճախորդը, միանալով ցանցին, դեռ երկար կմնա իրենց հետ: Ընկերության Բրենդի և հասարակայնության հետ կապերի կառավարման վարչություն ղեկավար Աշոտ Բարսեղյանի համոզմամբ՝ Cosmo-ն այն հենքային ցանցն է, որի վրա հնարավոր կլինի ապագայում կառուցել ցանկացած տիպի ցանց: Երբ ընկերությունն ավարտին հասցնի իր աշխատանքները, Հայաստանն այլևս ցանց կառուցելու հարցի առջև չի կանգնի, վերազինելով արդեն առկա ցանցը՝ հնարավոր կլինի զարգացնել հեռահաղորդակցական ենթակառուցվածքները:



***

Հենց այս ամբողջ հարստությունն էլ թաքնված է Ազատության պողոտայում տեղակայված շենքի ներսում: Առաջին հարկի թանգարանում պահվող պատմության հիման վրա մի քանի հարկ վերև՝ «Տելեկոմ Արմենիայի» լուսավոր գլխամասի սենյակներում, ծնվում է հայոց կապի ապագան:

Մարգարիտ Միրզոյան
Հարություն Մալխասյան, «Տելեկոմ Արմենիա»

Իմ սիրտը տանջիքում է

Իրենց երակողների սերունդ համարող երիտասարդներն ինչ են փնտրում Երևանի կրուրներում: Փորձել է պարզել մեր թղթակիցը, որը նույնպես սիրում է ֆաղաֆին նայել վերևից:

Իմ պատմությունը սկսվում է 2005 թվականից, երբ տանիքին խորոված անելու «սուրբ արարողությանը» ես էլ ներկա գտնվեցի հորս, քրոջս, մորս և տատիս ներկայությամբ: Իմ առաջին տանիք բարձրանալուց շատ ժամանակ է անցել ու եկել են փոխարինելու երևանյան նոր վարդագույն ու կարմիր տանիքները, որտեղ մնացել են համբույրներ, կիսատ-պռատ երգի բառեր ու աշխարհը փոխելու հիմար մտքեր: Երբ փոքր էի, մեր տանիքը Դավթաշեն թաղամասի բարձրահարկ շենքերից մեկին էր: Տատս մինչև հիմա այդ բարձրահարկի վերջին հարկում է՝ տանիքի բանալին սենյակի պատից կախած: Ինձ առհասարակ թվացել է, թե ընտանիքիս մեջ առանձնահատուկ մի բան կա: Օրինակ՝ տատս մեր տանիքի պահապանն է, ով խնամքով թաքցնում է մեր և իրեն լրիվ անծանոթ մարդկանց պատմությունները: Ժամանակ առ ժամանակ այդ տանիքի դարպասները բացվում են ու աշխարհն այնքան է կլորանում, որ տեղավորվում է վեցամյա աղջնակի գրպանում:
Երբ երրորդ կուրսի ուսանող էի, սկսեցի ծանոթանալ երիտասարդներ-ի հետ, որոնք ևս սիրում էին տանիքներում թափառել: Չգիտեմ էլ ինչպես ստացվեց, բայց բոլորս մեզ անհույս երազողներ էինք կարծում և շուտով դարձանք «իսկական երազողների սերունդ», ովքեր հետևում են մարդկանց, իսկ իրենց գոյության մասին որևէ մեկը գաղափար անգամ չունի:
Ավելի հաճախ մենք հանդիպում էինք որևէ տանիքում և խոսում ամենահիմար թեմաներից, ասես այդ առավոտ ջեռոցում մոռացած ելակով թխվածքի տխուր պատմությունն իր կարևորությամբ չի զիջում նախագահական այցերին:
Կարծում եմ՝ սա ամենագրավիչն է տանիքների պատմությունների մեջ, երբ թեմաները, որոնք ներքևում այնքան աննշան են, այստեղ դառնում են կարևոր ու մտածելու տեղիք տալիս: Սակայն կան թեմաներ, որոնց մասին տանիքին մտածելը բացում է քո «երրորդ աչքն» ու թևավորում քեզ: Արևը, որ խփում է գլխիդ, կամ գիշերվա քամին, որ սրթսրթացնում է մարմինդ, կարող է դրդել քեզ ամենահիմար քայլերի, օրինակ՝ համբուրվել մեկի հետ, որին տեսնում ես առաջին անգամ կամ հայհոյել մեկին, որը հասցրել է վեցերորդ անգամ կոտրել սիրտդ:

Կպուրային գրույցներ. բարև՛, սիրելի Վրեժ

Ապրիլի երկուսի երեկոյան ժամը ութն էր: Պուշկին փողոցի փաբերից մեկում «երազողների սերնդից» երեքով նստած էինք ես, Վրեժը և Էրիկը: Դրանից օրեր առաջ տանիքից նոր լուսանկարներ ունեի ու երեքով քննարկում էինք դրանք, երբ Վրեժը հարցական նայեց ինձ ու ասաց. «Բա չե՞ս ուզում մեզ էլ նկարել ու գրել մեր մասին»: Է՜, ինչու՞ ոչ:
Ապրիլի վեցն արևոտ ու պայծառ էր և տանիքին էլ կրկնակի շոգ էր լինելու՝ ի տարբերություն տանիքային մեր առաջին հանդիպմանը, երբ թվում էր, թե քամին շուտով թիթեղներից մեկը կշպրտի մեզ վրա:
Շատերը Վրեժին ճանաչում են որպես «Թեյնիկի» հիմնադիր, սակայն միայն մտերիմները գիտեն, որ հենց այս տանիքին է հղացել գաղափարը՝ երևանյան և դիլիջանյան խոտաբույսերից ստեղծելու անուշահոտ թեյեր:
Մենք արդեն տեղում էինք և շուտով բնակիչներից մեկը պատրաստվում էր շենք մտնել՝ իհարկե, մենք էլ այցելում էինք մեր վատառողջ ընկերոջը: Բարձրացանք աստիճաններով և իսկական հիասթափություն՝ փոքրիկ կողպեքներով երկու մուտքերն էլ փակ էին: Մտածեցինք, թե մեր բախտից է, որովհետև շաբաթներ առաջ դրանք չկային:

Շուտով կանգնած էինք հաջորդ մուտքի մոտ, երբ որոշեցինք շենքի դոմոֆոնի միջոցով բացել երկաթյա դուռը: Կոճակները հերթով սեղմեցինք: Խոսեցի ես, քանի որ ինչպես Վրեժն ասաց, ինքը տղա է՝ չէին վստահի իրեն: Ոռպեներ անց մենք Վրեժի տանիքին էինք և արևը խփում էր մեր գլխին: Լուսանկարվելու հարմար վայր էինք փնտրում, երբ նկատեցինք մի աղջկա, որը ևս տանիքին էր: Վրեժը նայեց ինձ՝ ժպտացինք: Ուրեմն ինքն էլ «երազողների սերնդից» է, որին չէինք էլ ճանաչում: Ինքն էլ մեզ ժպտաց և թվում էր, թե իր գնալուց հետո միայնակ էինք, երբ բավական տնային հագնված բարետես մի կին հայտնվեց մեզնից տասը քայլի վրա և համարյա բղավելով ասաց.
— Դուք քայլում եք մեր գլուխների վրայո՜վ: Գոնե գիտե՞ք, որ ձեր կոշիկները վնասում են մեր առաստաղները:
Տիկնոջ հետ պայմանավորվեցինք կես ժամից այլևս չքայլել իրենց գլուխների վրայով: Սակայն երեքս էլ (լուսանկարիչն էլ) զարմացանք, երբ մեր գոյության մասին մոռացան և անգամ երեք ժամ անց էլ որևէ ստուգման չեկան:

Losing my religion

Մեր առաջին հանդիպումը տանիքին բավական անսովոր էր, որովհետև շուրջ մեկ ժամ լռել ենք՝ նայելով, թե ինչպես են սև ամպերը հեռվում կուտակվում շենքերից մեկի գլխին: Վրեժն այն համուզմունքին է, որ տանիքներում ամենաճիշտը լռելն է, մանավանդ երբ ինչ-որ մեկի հետ ես: Տասնչորս ծխախոտի գլանակ, և մենք հասնում ենք զրույցի այն հատվածին, երբ խոսում ենք տանիքում տաք և դառը հիշողություններից: Երկուսս էլ այն մտքին ենք, որ տանիքները դրդում են անսպասելի արարքների, ասես քամու հետ մի ձայն ասում է՝ «միևնույն է, դա կմնա այստեղ», և մենք այդ ձայնին ենթարկվում ենք: Այժմ Վրեժը համարում է, որ դա տանիքի ամենամեծ առեղծվածներից է և երևանյան տանիքներից մեկին



հասցրել է ենթարկվել այդ ձայնին՝ համբուրվելով աղջկա հետ, որն այդ ժամանակ ընկեր է ունեցել:
Վրեժն այս անգամ էլ խոսելիս երկար է լռություն պահպանում, զգում է քամին, որ խաղում է ծխախոտի ծխի և մազերի հետ և հետո միայն շարունակում է պատասխանել հարցերին: Ասում է, որ ուզում է վերադառնալ այն ժամանակներ, երբ տանիքներին կիթառով ինչ-որ բան էր նվագում:
Շարունակելով կիթառի ու երաժշտության թեման՝ հայտնում է, որ այս տանիքն ունի հատուկ անուն՝ Losing My Religion՝ 90-ականներին թնդացող R.E.M.-ի անմահ հիթի պատվին: Մենք էլ, երբ առաջին անգամ հանդիպում ենք այս տանիքին, իր ընտրությամբ այս երգն է հնչում, ասես «ծիսակատարություն», որն ազդարարում էր իմ՝ այս տանիքի անդամ լինելը:

Բանգլադեշում տանիքներ սիրող

Սերգեյ Գրիգորյանը ծնվել և մեծացել է «մեռնող ճշտի վերջին ասպետների» երևանյան թաղամասերից մեկում՝ Բանգլադեշում: 2015 թվականից սկսվում է «երազողների սերնդից» Սերգեյի (նույն ինքը՝ Նիք) տանիքներ բարձրանալու պատմությունը ու շարունակվում է մինչև օրս՝ շաբաթական 1-2 անգամ:
Նիքն իր պատմությունը բաժանում է երեք հատվածի՝ Բանգլադեշի, Գլենդելի և Պուշկինի «տանիքային արկածներ», որոնց շնորհիվ, ինչպես ինքն է ասում, այնպիսինն է, ինչպիսին հիմա կա: Ամեն ինչ սկսվում է իր դասախոսներից մեկի պատմածներից՝ Ֆրանսիայում տանիքներ բարձրանալու խոր պատմություն ունեցող մշակույթի մասին: Ինքն էլ հետաքրքրվող ուսանող էր և որոշում է ունենալ երևանյան սեփական փորձառությունը:
Սկզբնական շրջանում Բանգլադեշի իրենց տանիքում հավաքվում էին մի քանի ընկերներով: Այնուհետև Նիքը տանիքներում փնտրում է իսկական սիրային արկածներ ու դրանք բերում են դեպի Պուշկինի փողոց: Ջրույցի այս մասում դեմքը ստանում է յուրահատուկ արտահայտություն: Հիշում է՝ սիրային առաջին փորձառությունը հենց տանիքին էր: Սակայն տանիքային ժամադրություններն ու ընկերական հավաքներն առժամանակ դադարում են, երբ Նիքը մեկնում է զինվորական ծառայության:

Մեր առաջ բացվում է տեսարան, որտեղ բնակելի շենքերից մարդիկ ներս ու դուրս են անում իրենց պատշգամբներ: Նիքին տանիքներում հենց սա է դուր գալիս:
— Տեսնես էն կինն ինչի վրա էր բարկացած,- բարձրաձայն մտածում եմ ես:
— Այ դա էլ հարցն է: Չգիտես ու ենթադրում ես, բայց դե երևում է՝ ոչ թե ինչի, այլ ում վրա է բարկացած՝ այ, նույն տղամարդու:
— Զգուշացե՛ք, ձեզ հետևում են,— ասում է Նիքն ու շարունակում հետաքրքրությամբ հետևել մարդկանց անցուդարձին: Պատմում է, որ հաճախ եղել են դեպքեր, երբ ընկերներով գրազ են եկել այս կամ այն իրադարձության վրա՝ այս կինը շուտով տուն կգնա կամ այս տղամարդը շուտով ծխախոտը կվառի և այլն: Կեսկատակ ասում է, թե տանիքներից կարգին փող կարելի է աշխատել ու զվարճանալ:

Երկու ընկեր տանիքին

Մի հեքիաթ կա երեք ընկերոջ՝ Փուսի, Փիթի ու Փաթիի մասին: Թե ինչպես երեք ընկեր մեջք մեջքի տված կտուրին էին մեկնվել ու աստղազարդ երկնքից աչք չէին կտրում: Նույն այս հեքիաթին է նման «երազողների սերնդից» երիտասարդների պատմությունը՝ բացառությամբ, որ նրանք երկուսն են՝ Մովսեսն ու Հրաչը:
Դեռ մանկուց այս երկու ընկերներին միավորել է տանիք բարձրանալն ու երազելը, սակայն այս մասին իմանում են ավելի ուշ՝ երբ մտերմանում են:
Իրենց պատմությունը սկսվում է նույն ժամանակից, նրանք երկուսն էլ 12-ամյա տղաներ էին, ովքեր տանիքներին արկածներ են փնտրում:
«Մի տուփ ծխախոտ՝ հինգ հոգու համար». այսպես է սկսվում Հրաչի պատմությունը, ով այժմ տանիքներ բարձրանում է ստեղծագործելու համար: Իրեն Նիքը չի ճանաչում, բայց երկուսն էլ գրոտում են երաժշտություն հենց տանիքներին: Տասներկուամյա Հրաչին տանիքում միանգամից գրավում է երևանյան բարձրահարկ շենքերի տեսարանն ու մինչ մյուսները ծխախոտի գլանակներն էին փոխում մեկը մյուսի հետևից, ինքը հասցնում է առաջին անգամ «թևերին զգալու ազատությունը» և ինչպես ինքն է հիշում, սկսվում է տանիքներ բարձրանալու իր պատմությունը:

Մովսեսը, ի տարբերություն ընկերոջ, առաջին անգամ տանիք բարձրացել է «գործով»։ Հայրենիք Թաղամասում հարևան Կառլենը որպես «օգնող ձեռք» տանիք է տանում իրեն։ Տանիքներ վերանորոգող հարևանն անընդհատ տալիս էր իր անունը, սակայն տասներկուամյա տղան անգործության մատնված տանիքին վայելում էր օրվա արևը։ Իհարկե, տանիքագործ հարևանը դժգոհ է մնում տղայից, սակայն մտքով չի էլ անցկացնում, որ այդուհետ պատանին դառնալու էր «երազողների սերնդից»։
Հրաչն ու Մովսեսը, երբ մտերմանում են, սկսում են միասին տանիքներ բարձրանալ։ Վերջին անգամ բարձրացածից «կարգին բան» հասկացել են հունվար ամսին, երբ բարձրացել են տանիք և վարդի իսկական գինի են խմել։ Որպես կանոն, տանիքին խմիչքն ու ընկերական հավաքներն «աշխարհից փախչելու» միակ միջոցներն են իրենց համար։
Հիշո՞ւմ եք հեքիաթը, երբ ընկերները տանիքում հավաքվում երազում էին։ Ահա հիմա, մենք երազում էինք տանիքներ կապող կամրջակների մասին։ Ինչպես հեքիաթում, այնպես էլ այստեղ կամրջակները կկապեն մեզ իրար, որովհետև, ինչպես նշում են ընկերները «մեր սիրտը տանիքներում է»։

Լեռներիս՝ տանիքներ

Մարիա Մանուկյանի մանկությունն անցել է Կիևյան փողոցի իրենց բակի բոլոր ավտոտնակների տանիքներին մեկ առ մեկ մագլցելով։ Հիմա ժպիտով է հիշում ժամանակները, երբ բակի երեխաներով «երազողների ջոկ» էին կազմել ու մագլցում էին ավտոտնակների տանիքներին։
Մարիան իսկական երազող է, որովհետև ինչպես ինքն է հաճախ ասում՝ «սիրտը տարել՝ թողել են լեռներում»։ Որքան էլ հետաքրքիր է՝ Մարիան բարձրություն և տանիքներ սկսել է նախընտրել նաև իրենց բակի թթի ծառ բարձրանալով։ Մաշայի պատմությունը բաժանվում է երեք հատվածի՝ ծառեր և ավտոտնակներ, լեռներ ու տանիքներ։
Անգամ երբ տանիքում էինք, իրեն դժվար էր «բռնեցնելը» մեկ դիրքով նստած՝ բարձրանում էր գունավոր թիթեղներին ու զննում տարածքը։ Առհասարակ տանիքներ սկսել է բարձրանալ ընկերների հետ՝ ի տարբերություն լեռների, երբ նախընտրում է մենակությունը։
2015 թվականին Երիտասարդական ճոպանուղու փողոցի բաց տանիքներից մեկում ընկերուհու հետ որոշում են հանդիպել և սուրճ խմել։ Կարելի է ասել, թե այս տանիքը պահում է իր «աղջկական խոսակցությունների» հալալ կեսը։ Այդտեղ, ասում է, Երևանը դառնում է «կծելու, սուրճով խմելու քաղաք»։ Այդ տանիքի հետ այնքան էր կապվել, որ չէր դադարում գալ նույնիսկ, երբ ոտքը կոտրված էր. կան անփոփոխ արժեքներ, ի վերջո։

Կախարդական թուրմը

Արդեն երեկո էր և մեր մտքին գալիս են ամենահիմար թեմաները և կանգ ենք առնում պատմությունների վրա, թե վերջին անգամ երբ են կոտրել մեր սրտերը։ Ասես տանիքային իր պատմության մեջ այս տանիքին աղջկական խոսակցություն վարելու դիմաց մեծ գումարման նշան է դնում և մտածում հաջորդ՝ մեկ օրում չորս գագաթ բարձրանալու մասին։ Տպավորություն է, թե մի մեծ ցուցակ է մտքում, որի այս կամ այն կետի դիմաց գրոտում է։
Նման մի կետ էլ եղել է, երբ Ֆրանսիա թռիչքից առաջ ուշ երեկոյան հավաքվել են նույն տանիքին, որոշել «հրաժեշտի երեկո» կազմակերպել և հաստատել է հենց տանիքին խմել «կախարդական թուրմը», որի ալկոհոլային բաղադրությունը մինչև այժմ իրեն և մյուս ընկերներին անհայտ է։ Ընկերական նեղ շրջապատում ոգելից այդ խմիչքի խառնուրդը, որը պատրաստվել է նախկինում հայտնի «Յամայկա» փաբում ընկերներից մեկի ձեռքով, ստացել է «տանիքի կախարդական թուրմ» անվանումը և եթե բախտներդ բերի և երբևէ համտեսեք այս խմիչքը, քամին կխաղա ձեր մազերի հետ և դուք կմոռանաք ձեր կոտրված սրտի մասին։

Աշխարհի վերջը չեղավ՝ գնացինք տանիք

Մարիամ Հովհաննիսյանը լուսանկարիչ ու դիզայներ է։ Երբ տանիքին լուսանկարում էի Մարիամին, ինձ ընթացքում ասաց, թե միշտ թվացել է՝ իրեն ինչ-որ տեղից նկարում են։ Այդ իսկ պատճառով դեռ փոքրուց նախընտրել է տանիքներում թաքնվել և որոշել է լուսանկարչությամբ զբաղվել՝ մյուսներին «կինոյի ջահել» տեսնելու։
Տանիքներ բարձրանալու իր պատմությունը սկսվում է 17 տարեկանից, երբ ծննդյան ամբողջ գիշերն անցկացնում է տանիքին։ Հիշում է, իսկական աստղաթափ էր, սակայն, թե ինչ երազանք է պահել, այդպես էլ չկարողացավ մտաբերել։
Մենք նստած ենք իր տանիքներից մեկին, որտեղ վերջին անգամ եղել է կրկին երազելու համար՝ մի փոքր էլ գինովցած։ Առհասարակ, տանիքների պատմության լավագույն դրվագներից է, երբ թեթև հարբած ես և մայրամուտ դիտելու հնարավորություն կա բարձրից, այն դեպքում, երբ քեզ թվում է, թե ինչ-որ տեղից նկարում են քեզ։
Մինչև 21 տարեկանը երևանյան գրեթե բոլոր տանիքները թաքցնում են Մարիամի սիրահարությունները, սակայն հիշում է, թե ինչպես է հասցրել տանիքներից մեկին կորցնել իր օրագիրը, որի մեջ իր «ջահել ժամանակների հիմարություններն էին»։ Մտածում եմ, թե ինչ հետաքրքիր կլիներ գոնե մի անգամ թերթել այդ կորած փաստաթուղթը, բայց հետո հիշում եմ, որ ուրիշի օրագիր կարդալը ճիշտ չէ։
Տանիքներից է սկսվել երևանյան ճարտարապետությամբ հետաքրքրվելը։ Ինձ էլ ձեռքի սահուն շարժումներով մեկը մյուսի հետևից ցույց է տալիս այս կամ այն շենքի կամ կառույցի սխալներն ու մեջբերում դասախոսներից մեկի խոսքերը, թե երևանյան ճարտարապետությունը քաոսային է իր քաոսային բնակիչների նման։ Սակայն որքան էլ տեսանելի են այդ քաոսային շարժումներն ու պատկերները, տանիքներին Մարիամը կտրված է դրսի աշխարհից և փակված իր ներսում։ Երազել սովորել է հենց տանիքներից և եթե 25-ամյա Մարիամին հնարավորություն տրվեր փոխելու ինչ-որ բան, ապա կրկին կավելանային նոր և շատ տանիքներ բարձրանալը։
«Զգուշացե՛ք էլեկտրասյուներից»՝ ասում է Մարիամի տանիքային պատմությունը. մի քանի անգամ անզգուշության պատճառով վնասվածքներ է ստացել։ Ինչպես շատերը, այնպես էլ Մարիամը հաճախ տրվել է պահի գայթակղությանն ու մոռացել զգուշավորության մասին, սակայն սիրում է իր օրինակով ցույց տալ, թե ինչպես չի կարելի անել։ Այնպես որ հաջորդ անգամ տանիքներ բարձրանալ պլանավորելուց հիշեք, այնուամենայնիվ, դուք կքայլեք մարդկանց գլուխների վրայով և կլինեն էլեկտրական սյուներ։

Կյանքը կանիքիկ կանիք

Երազողների անկախ սերունդը եղել է երևանյան գրեթե բոլոր հայտնի ու անհայտ տանիքներին ու թողել հետքեր, ինչպես ֆիլմերում, երբ հերոսները գլուխ են գովում, թե այստեղ եղել ենք մենք։ Կարճ ասած՝ մյուսների աչքին մենք իսկական տարօրինակներ ենք։ Չի կարելի ասել, թե մենք ապրում ենք համոզմունքով, թե առանձնանում ենք մյուսներից։ Սակայն ավելի հաճախ մենք ապրում ենք վերևում, քան ներքևներում։ Երազանքը՝ զգալու թևերի ազատությունը, միավորում է մեզ և դարձնում հարազատ։ Մեզնից շատերն ինքնամոռաց խմում ու ծխում են, սիրով են զբաղվում տանիքներում ու երբ վերելակն ազդարարում է, թե առաջին հարկն է արդեն, կյանքն ավելի սրընթաց է դառնում, ասես ժամերը կաթում ու ծորում են գլխումդ և ապրելուդ ժամանակը մոտենում է հաջորդ տանիք բարձրանալու ժամանակին։

Շուշանիկ Փափազյան
Մարիամ Հովհաննեսյան

Թանգարան այցելելու 10 պատվիրանները

Թվում է՝ ինչ կա՞ որ, թանգարան է, էլի, կայցելեմ, կնայեմ: Բայց իրականում հնարավոր է թանգարանից վերցնել առավելագույն գիտելիքներ, ստանալ առավելագույն բավարարվածություն և ցանկանալ վերադառնալ այնտեղ նորից ու նորից՝ հետևելով մի քանի հիմնական սկզբունքների: ԵՐԵՎԱՆի խորհուրդները՝ թանգարանային այցելությունից հնարավորինս ավելին քաղելու համար:

Նախապատրաստվե՛ք

Կարևոր է թանգարան մտնել ճիշտ տրամադրվածությամբ և ճիշտ ակնկալիքներով: Ակնկալիքների և իրականության մեծ տարբերությունից խուսափելու համար նախ կարելի է որևէ ընդհանուր տեղեկություն կարդալ թանգարանի մասին: Ձեզ հետաքրքրող ուղղվածության թանգարանը գտնելուց հետո տրամադրվեք, որ նոր գիտելիքներ եք ձեռք բերելու և նոր բան տեսնելու: Վերաբերվեք այդ այցին ինչպես մի փոքր ճանապարհորդության ժամանակի մեջ: Իհարկե, իրական ճանապարհ չեք գնալու, բայց պատրաստ եղեք նաև քայլելու, այնպես որ հագեք հարմարավետ կոշիկներ:

Պահպանե՛ք թանգարանում սահմանված կանոնները

Ինչպես ցանկացած հաստատություն, այնպես էլ թանգարաններն ունեն կանոններ, որոնց անհրաժեշտ է անպայմանորեն հետևել: Թանգարանի հիմնական գործառույթը պատմական և մշակութային արժեք ներկայացնող առարկաների պահպանությունն է, այնպես որ, բարձրարժեք, հաճախ էլ անգին այդ իրերի անվտանգությունը վեր է ամեն ինչից, այդ թվում՝ այցելուի համար հարմարավետ ցուցադրություն կազմակերպելուց:

Ուշադիր եղեք թանգարանում տեղաշարժվելիս: Ապակյա ցուցափեղկերը հաճախ շատ փխրուն են, երբեմն էլ ցուցանմուշները ցուցադրվում են բաց վիճակում և առավել խոցելի են: Մի սպասեք, որ թանգարանի աշխատակիցը դիտողություն անի, մի՛ դիպչեք իրերին: Մի փորձեք ուտել կամ խմել ցուցասրահում թափված ջրի նույնիսկ մեկ կաթիլը երբեմն կարող է վնասել հազարամյակների խորքից մեզ հասած որևէ նմուշ:

Անպայման հարցրեք աշխատակցին, թե արդյոք կարելի՞ է լուսանկարել (հաճախ արգելքը պայմանավորված է նմուշները հավելյալ լույսից պաշտպանելով): Ի դեպ՝ կարիք չկա ամեն բան լուսանկարել, նախ, դուք այդ լուսանկարների մասին մի քանի օր հետո ուղղակի մոռանալու եք, հետո՝ միշտ հնարավոր է գտնել լավ վերատպություն: Իսկ որ ամենակարևորն է, պետք չէ նմուշներին նայել տեսախցիկի միջով, վայելեք պատմության հետ իրական շփման հնարավորությունը:

Մի՛ թերագնահատեք էքսկուրսավարի դերը

Թանգարանի ցուցադրության մասին ամբողջական պատկերացում կազմելու ամենաճիշտ տարբերակն էքսկուրսավարի ծառայությունից օգտվելն է: Երբեմն ցուցանմուշն աննշան է, բայց մեծ ու հետաքրքիր պատմություն ունի և միայն էքսկուրսավարի ուղեկցությամբ թանգարանում շրջելը կարող է արդյունավետ դարձնել այցը, իսկ լսածն ու տեսածն էլ՝ ավելի համակարգված ու հասկանալի:

Մի՛ խնայեք

Հայաստանում թանգարանների մուտքի տոմսի արժեքը տատանվում է 200-2000 դրամի սահմաններում: Իսկ այժմ փորձեք հիշել, թե որքա՞ն գումար եք պատրաստ վճարել սրճարանում մեկ գավաթ սուրճի, ասենք՝ ամերիկանոյի համար: Իրականում հայաստանյան թանգարանների մուտքի տոմսի արժեքը բավական մատչելի է, ինչպես և էքսկուրսավարների ծառայության արժեքը և չափազանց ոչ համարժեք այն նյութին, որը ցուցադրվում կամ ներկայացվում է: Այնպես որ, խնդրում եմ, մի խնայեք, ընկալեք դա իբրև ներդրում և հավատացած եղեք, որ այն, ինչ տեսնելու եք, միանշանակ արժի շատ ավելին:

Ընթերցեք ուղեկցող տեքստերը

Եթե այնուամենայնիվ որոշել եք չօգտվել էքսկուրսավարի ծառայությունից և ինքնուրույն շրջել թանգարանում, ապա անպայման կարդացեք անոտացիոն տեքստերն ու պիտակները: Դա հնարավորություն կտա հնարավորինս լավ պատկերացում կազմել տեսածի, սեղմ ժամանակում ընդհանուր գիտելիքներ ձեռք բերել ցուցադրվող նյութի մասին, ինչպես նաև պատկերացում կազմել դրա ժամանակաշրջանի, նյութի, տեխնիկայի և էլի շատ այլ կարևոր հատկանիշների մասին: Ուշադրություն դարձրեք նաև ուղղորդող ցուցանակներին: Ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած որոշ թանգարաններում ուղեկցող տեքստերը գուցե փոխարինված լինեն QR կոդերով և այդ պարագայում հեռախոսի առկայությունն իհարկե առավելություն է:

Դիտարկեք թանգարանը որպես մի ամբողջություն

Այցելությունը թանգարան լիարժեք չի լինի, եթե ուշադրությունը կենտրոնացնեք միայն առանձին ցուցանմուշների վրա: Շատ կարևոր է դիտարկել թանգարանը որպես մի ամբողջություն, որտեղ ցուցադրված յուրաքանչյուր ցուցանմուշ ամբողջի մաս է միայն: Թանգարանը պատմություն է պատմում, որտեղ յուրաքանչյուր ցուցանմուշ այդ պատմության մի էջն է: Ուշադրություն դարձրեք ցուցադրության կազմակերպմանը, դասավորվածության տրամաբանությանը, հաջորդականությանը, խմբավորմանը:
Պակաս կարևոր չէ նաև արձանագրել որոշ տիպիկ թանգարանային դրվագներ, ինչպես, օրինակ, այն, թե ինչպես է ցուցադրված նյութը, ինչպես է լուսավորված և այլն: Շատ հաճախ պատմամշակութային արժեք ներկայացնում են ոչ միայն ցուցադրված իրերը, այլև հենց ինքը՝ թանգարանի շենքը:



Մի՛ շտապեք, գտե՛ք ձեր ռիթմը

Թանգարանում քիչ ժամանակ անցկացնելու մեջ, իհարկե, ոչ մի ամոթալի բան չկա: Սակայն, եթե այցի նպատակը գիտելիքն ու տպավորություններն են, ցանկալի է չշտապել: Անշուշտ, այս շտապողականությունը հասկանալի է մեծ թանգարանների պարագայում, երբ ամենամեծ ցանկության դեպքում անգամ դժվար է մեկ այցի ընթացքում տեսնել ամեն ինչ: Սակայն, հավատացնում եմ, ավելի լավ է լինել միայն մեկ սրահում, բայց լիարժեք ու առանց ավելորդ ցայտնոտի ծանոթանալ միայն այդ մեկին, այլապես թանգարանը հիշողության մեջ տպավորվում է որպես հոգնեցնող ու խառը ինչ-որ վայր:
Ոչ մեծ թանգարանների պարագայում պարզապես գտեք ձեր ռիթմը, մի խնայեք ժամանակը մանրամասն ուսումնասիրելու համար: Հոգնելու դեպքում միշտ կարելի է որևէ նստելու տեղ գտնել: Ի դեպ՝ հատակին նստելը թանգարաններում միանգամայն նորմալ է:

Մի՛ կենտրոնացեք միայն նկատելի ցուցանմուշների վրա

Թանգարան այցելելիս միշտ հիշեք, որ ամենաարժեքավորն ու հետաքրքիրը ոչ միշտ է ամենանկատելին, չափսերով մեծը կամ գեղեցիկը: Հաճախ ամենաանշան ցուցանմուշը կարող է մի ամբողջ պատմություն ունենալ իր հետևում: Իհարկե, ձեր անձնական նախասիրությունները կարևոր են, միշտ ինչ-որ բան ձեզ ավելի է գրավելու, քան մյուսները: Բայց թանգարանից առավել ամբողջական պատկերացմամբ և գիտելիքներով հեռանալու համար ուշադրություն դարձրեք նաև մանրուքներին:

Գնե՛ք որևէ բան թանգարանային խանութից

Թանգարանները, որպես կանոն, ունենում են փոքրիկ խանութներ, որտեղ վաճառվում են տարատեսակ հուշանվերներ, թանգարանի հավաքածուի հետ կապված իրեր, աքսեսուարներ, գրքեր, կատալոգներ, փոստային քարտեր և էլի ինչ ասես: Ընդ որում, այն ամենը, ինչ վաճառվում է թանգարանային խանութներում, որպես կանոն՝ չկա ուրիշ ոչ մի տեղ: Եվ դա լավ է: Թանգարանից գնված ամենափոքրիկ իրն անգամ ամբողջովին այլ նշանակություն է ստանում և միանգամայն այլ բավարարվածություն է պատճառում: Ցուցադրությունը դիտելուց հետո թանգարանից գնումներով հեռանալիս կարծես տուն տանես տեսածդ արժեքավոր արտեֆակտներից, որ դեռ երկար են հիշեցնելու անցկացրածդ լավ օրվա մասին: Դա չափազանց հաճելի փորձառություն է:

Վերադարձե՛ք

Թանգարանային հավաքածուներն ու մշտական ցուցադրությունները հաճախ համալրվում և փոփոխվում են, այնպես որ, յուրաքանչյուր թանգարան մեկ անգամ այցելելն ամենևին էլ բավական չէ: Բացի դա, թանգարաններում հաճախ են լինում ժամանակավոր թեմատիկ ցուցադրություններ, ցուցահանդեսներ, դասախոսություններ և այլ ինտերակտիվ միջոցառումներ: Չետևե՛ք դրանց: Դիտարկեք թանգարանը որպես գործող ու ակտիվ հաստատություն, որտեղ միշտ կարելի է մի նոր բան տեսնել:

Համլիկ Բարխուդարյան
Հարություն Թումանյան

Թաքնված գանձեր

Ես ապրում ու զարմանում եմ Երևանում, երբ ճշմարտանման է դառնում Դիջերի հայտնի երգը, թե «Երևանը քաղաք է, ուր գրեթե ամեն բան թաքուն է»: Այդ թվում՝ այնպիսի թանգարաններ, որոնց գանձերն ավելի մեծ ուշադրության են արժանի: Բացահայտում եմ հատուկ ԵՐԵՎԱՆի ընթերցողների համար:

Ռադիոտեխնիկայի թանգարան

Հասցե.
Արշակունյաց 5

Մուտքն ազատ է, բայց պեքտ է նախօրոք պայմանավորվել՝ զանգահարելով 094 436106:

Իմ ցուցակում առաջինը Ռադիոսպորտի ֆեդերացիայի թանգարանն էր: Նախևառաջ պետք էր ծանրաբեռնված 8 համարի երթուղայինով հասնել Դավթաշեն թաղամասի ժամանակին հայտնի «Եղնիկ» հանրախանութի մոտ, այնտեղից էլ՝ 196 դպրոց: Այդպես հայտնվում եմ Հայաստանի ԴՕՍԱՖ համահայկական միության մասնաշենքի դիմաց, որի առաջին հարկում էլ իր հերթական այցելուին էր սպասում ռադիոտեխնիկայի թանգարանը:
Ինձ դիմավորում է թանգարանի աշխատակից Գարիկ Սահակյանը, որը մինչ վերջերս այս շենքում դասավանդել է ապագա կապավորների և նախընտրում է իրեն դիմելաձևի «ընկեր Սահակյան» տարբերակը: Ընկեր Սահակյանը պատմում է, որ թանգարանը կյանքի է կոչվել 2013 թվականին Արկադի Տեր-Թադևոսյանի (Կոմանդոս) հետ համագործակցությամբ: Ցուցանմուշները հավաքվել են ԴՕՍԱՖ միության Մաշտոց մարզատեխնիկական կազմակերպության նախագահ Ռաֆայել Գրիգորյանի և իր աջակիցների նվիրատվությունների շնորհիվ:
Առաջինը, որ ընկեր Սահակյանը ձեզ ցույց կտա այս թանգարանում, կլինի այն, թե ինչպես են 1956 թվականին դիտել հեռուստացույց: Ուղիղ իմ առաջ այն տեսարանն է, թե ինչպես է սենյակային ջուրն անցնում ոսպնյակի միջով՝ մեծացնում ափիս չափ էկրանն ու թույլ տալիս դիտել միակ հեռուստաալիքը: Բայց սա դեռ կարելի էր պատկերացնել, շատ ավելի անհավատալի էր, երբ տեսա նամակներ փոխանցող աղավնիների ուղին կոորդինացնող սարք: Մեծ ոգևորությամբ ընկեր Սահակյանը պատմում է, որ թանգարանի այդ ցուցանմուշը եկել-հասել է Հոլանդիայից:

Եթե թանգարանի անվանման մեջ կա «ռադիո» արմատը, ուրեմն պատից պետք է փակցված լինեն տարատեսակ ռադիոընդունիչներ: Դրանց միջի գեղեցկուհին ժամանակին հայտնի «Հրազդան» գործարանի սպիտակ ռադիոն է: Ասում են՝ ժամանակին առավոտ շուտ ցուցանմուշի գծային ռադիոն արթնացնում էր Երևանը հանրապետության հիմնով: Իսկ երեկոյան կարելի էր լսել դասական երաժշտություն կամ փորձել որսալ «Ամերիկայի ձայնը»:
Կապի հաջորդ հաղորդակցության միջոցները վերաբերում են արցախյան և հայրենական պատերազմներին և եթե ձեր բախտը կբերի, ապա դուք կպատկերացնեք, թե ինչպես է աշխատում իսկական ծածկագրեր պատրաստող սարքը՝ մորզեի այբուբենով: Գիծ, կետագիծ, կետ և կրկին գիծ՝ հետախուզական ֆիլմերի պես ու լսվում է իրար հաջորդող մատներիս տկտկոցը և կարելի է պատկերացնել, թե ինչպիսինն է Խորհրդային Միությունում ինչ-որ մեկի աշխատասենյակում ծրարի մեջ դրված այս ժապավեններով հավաքված ծածկագիրը:
Այստեղ կարելի է գտնել նաև հեռախոսներ, որոնց լարերը կարելի է ձգել ամբողջ բնակարանով մեկ կամ օգտագործել գրասենյակներում՝ հազարավոր անհասկանալի ստեղներով: Այս բաժնում կարելի է տեսնել այնպիսի նմուշ, որն օգտագործում էր տատս, այնուհետև մեր բնակարանի հեռախոսը, երբ յոթ տարեկան էի: Ռադիոընդունիչը և հեռուստացույցը նույնպես: Միանշանակ ես կարող էի հավատալ, որ ցուցանմուշներից որոշները ծնողներս կամ իրենց ծնողներն են բերել այստեղ թողել, որ դառնան իսկական թանգարանային նմուշներ:



Հայաստանի երկաթուղային թանգարան

Հասցե.
Երևանի երկաթուղային կայարանի շենք, Տիգրան Մեծի պողոտա 80

Աշխատանքային օրերին սկսած ժամը 09:00-ից: Մուտքն ազատ է:

Իմ հաջորդ թանգարանին հասնում եմ մետրոյով. իջնում եմ «Սասունցի Դավիթ» կայարանում, անցնում գետնանցումով, հետո հայտնվում նույնանուն, բայց երկաթուղային կայարանի սպասասրահում: Թանգարանը հարևան սրահներից մեկում է, հուշում են ցուցանակները:
Թանգարանը կյանքի է կոչվել 2009-ին, իսկ ներկայիս տնօրեն Նիկողայոս Տեր-Կարապետյանը շուրջ վեց տարի է, ինչ խնամքով պահում և այցելուներին ներկայացնում է «ռելսերի վրայի կյանքը»: Սկսում ենք հերթով տնտղել լուսանկարները, որտեղ Երևանի կայարանն է՝ տարբեր տարիներին, հատուկ հանդերձանքով մեքենավարները, «դեպոյի պետերը և հրամանատարները» և այլն:
Հետո անցնում ենք Գյումրու, Վանաձորի և հայաստանյան այլ կայարանների փայտե ֆիգուրների, զինվորական նշանակության, մարդատար և բեռնատար (ձկնափոխադրող) գնացքների կողքով: Ցուցադրության մյուս հատվածներում ներկայիս մանկական երկաթուղու կառուցման պատմությունն է, պատերազմի և Սպիտակի երկրաշարժի հետևանքներն արտացոլող լուսանկարներն են:
Մինչև մենք կանգ էինք առել 1956 թվականի վրա, երբ Երևանի կայարանը վերանորոգվում և ստանում է մեզ ծանոթ տեսքը, սրահն ընդունում է իր մշտական այցելուին՝ Խաչատրյան Մարգարիտային, որը թանգարանում ցուցադրված մարդկային պատմություններից մեկի անմիջական կրողն է: Երբ այցելեք թանգարան, լուսանկարներից մեկում կկարդաք Անդրանիկ Խաչատրյանի անունը, որը Երկրորդ համաշխարհայինի տարիներին, վարելով շոգեքարշներ, կյանքեր է փրկել: Տիկին Մարգարիտան ասում է, թե միայն այստեղ է կարողանում վերադարձնել հոր մասին հիշողություններն ու ամեն առիթով Գյումրիից գալիս է Երևան:
Թանգարանում մի ուշագրավ լուսանկար էլ կա՝ արված Կրեմլում 1982 թվականին՝ Կարեն Դեմիրճյանի և այլ պաշտոնյաների մասնակցությամբ: Դրա նախապատմությունը պատմում է Վլադիմիր Նիկոյանը, ով այժմ զբաղեցնում է Հարավկովկասյան երկաթուղու տնօրենի հայաստանյան խորհրդականի պաշտոնը: Բախտս բերեց, քանի որ նա հաճախ մտնում է թանգարան մի բաժակ սուրճի: Ես էլ իմացա այս պատմությունը. 1982-ի ձմռանը, երբ պարոն Նիկոյանը Ջաջուռ կայարանում ավագ կոորդինացնողի պաշտոնին է եղել, կայանալու էր Խորհրդային Միության Կոմկուսի 24-րդ համագումարը, որին ներկա էր գտնվելու նաև Կենտկոմի քարտուղար Կարեն Դեմիրճյանը: Առատ ձյան հետևանքով գնացքների աշխատանքը դադարեցվում է: Հայաստանյան պատվիրակությանը Ռուսաստան հասցնելու համար պարոն Նիկոյանը ձեռնամուխ է լինում կազմակերպելու ձնամաքրման աշխատանքները և դրանց ավարտը երևում է երեք օր անց միայն: Այդ օրերի մասին այժմ պատմում է ընդհատված լռություններով՝ նշելով, որ կարգին հանգստանալ իր կյանքի ընթացքում չի հասցրել՝ գիշեր-ցերեկ աշխատելով երկաթգծերի վրա:
Այ այսպես, թվում էր, թե գնացքների ու երկաթգծերի թանգարան է, իսկ իրականում՝ անվերջ մարդկային պատմությունների դարան: Դրանց գումարվում է յասամանի անանման փունջը, որը նվիրում է թանգարանի կից այգում այգեպան Վահագը, և ես նստում եմ մետրոյի վագոնը՝ վստահ լինելով, որ էլի եմ գալու:

Կարեն Դեմիրճյանի թանգարան

Հասցե.
Փարպեցու 7

Մուտքն ազատ է, աշխատանքային ժամերը՝ 11:00-17:00 (երկուշաբթիից շաբաթ):

Երբ երկաթուղային թանգարանում տնօրենը, ցույց տալով Կոմկուսի 24-րդ համագումարի լուսանկարը, ասաց, թե ջահել եմ ու պատկերացում անգամ չեմ ունենա Կենտկոմի քարտուղարության մասին ու ոչ էլ կիմանամ՝ ով էր Կարեն Դեմիրճյանը, հասկանում եմ, թե որն է հաջորդ թաքնված թանգարանս:
Կարեն Դեմիրճյանի թանգարանը գտնվում է փաբերի ու գինետների օրրան Փարպեցի փողոցում: Ինձ դիմավորում է թանգարանի ավագ գիտաշխատող Արմենուհի Այվազյանը, սակայն մինչև անցնելը թանգարանի սրահներով պետք է կատարել մի քանի գործողություն: Մենք քայլում ենք դեպի հանդիսությունների ամառային բացօթյա սրահ և այգի միայն 36.4 ջերմաստիճանով, ախտահանված ձեռքերով և գրանցամատյանում կոկիկ ձեռագրով անունազգանունս հայտնվելուց հետո:
Այնուհետև նեղ միջանցքով հայտնվում ենք թանգարանի առաջին սրահում, որտեղ Կարեն Դեմիրճյանի կյանքին և գործունեությանը վերաբերող լուսանկարներն են, հուշամեդալներն ու թանգարանին նվիրատվությունները: Երկրորդ սրահում մեզ սպասում է հուշասենյակը, որտեղ ներկայացված է Կենտկոմի գրասենյակի կահույքը, Կարեն Դեմիրճյանի աշխատանքային միջավայրը՝ ամենայն մանրամասնությամբ:
Նախքան թանգարանի շենք դառնալը այստեղ մանրէաբանության գիտահետազոտական կենտրոն է եղել, իսկ 2007-ին պաշտոնապես բացվել է 2001 թվականի ՀՀ կառավարության որոշմամբ այս շենքում հիմնադրված Կարեն Դեմիրճյանի թանգարանը: Արմենուհին այստեղ աշխատում է 2008 թվականից և երբ այցելության գաք, իր սովորության համաձայն՝ որպես ավագ գիտաշխատող՝ շրջայցը կսկսի մի հետաքրքիր դիպվածով: Պատմության կենտրոնում ոչ այլ ինչ է, քան վիրաբուժական մկրատ: 1980 թվականին, երբ գործարկվում է Արփա-Սևան ջրատարը, պարզվում է, որ Կենտկոմի առաջին քարտուղարը չի կարող կտրել կարմիր ժապավենը, քանի որ մոռացել են վերցնել մկրատը: Իրավիճակը փրկում է Ծովինար գյուղի վիրաբույժը, որը Դեմիրճյանին է փոխանցում իր վիրաբուժական մկրատը, որի օգնությամբ բարեհաջող իրականացվում է բացման արարողությունը: Երբ գործարկվում է թանգարանը, վիրաբույժ Մկրտչյանն իր ձեռքով թանգարանին հանձնում է այս մկրատը:
Ընդհանրապես, Դեմիրճյանի թանգարանն ուշագրավ է որպես կարևոր դարաշրջանի վկայություն: Այստեղ կարելի է տեսնել Երևանի մետրոյի, Կուկուռուզնիկի և մարզահամերգային համալիրի գործարկման խորհրդանշական բանալիները և զանազան այլ նմուշներ՝ ընկույզների սորտերի ցուցատախտակից մինչև բրնձի հատիկի վրա մակագրված դիմում:
Թանգարանի հաջորդ հուշասենյակը կահավորված է այնպես, ինչպես աշխատել է Կարեն Դեմիրճյանը Կենտկոմի քարտուղարի և Ազգային ժողովի նախագահի պաշտոններում: Հին ռադիոընդունիչ, Լենինի դիմանկարն աշխատասենյակի պատին, իսկ աշխատասեղանին Դեմիրճյանի գրանցամատյանն է, ակնոցը, անգամ թեյի բաժակն ու գդալը: Անցնելով թանգարանի այս հատվածը՝ կարելի է մի պահ պատկերացնել, թե ինչպես են անցել Կենտկոմի քարտուղարության նիստերը, իսկ Արմենուհին կպատմի ձեզ, թե սեղանին մշտապես դրված գրանցամատյանում ինչ գրառումներ է կատարել թանգարանի գլխավոր հերոսը:
Հիմա կարող եմ վերադառնալ Երկաթուղային թանգարան ու վստահ ասել, որ թանգարանի շնորհիվ արդեն պատկերացում ունեմ և՛ Հայաստանի խորհրդային շրջանի, և՛ կոնկրետ Կարեն Դեմիրճյանի գործունեության մասին:

Լուսիկ Ագուլեցու տուն-թանգարան

Հասցե.
Մուրացանի 79

Մեծահասակների համար՝ 1000, երեխաների համար՝ 500:
Աշխատում է ամեն օր՝ 12:00-ից 19:00:

Նորից մետրո, նորից «Սասունցի Դավիթ», միայն թե այս անգամ կանգնում եմ մեջքով դեպի երկաթուղային կայարանը և շրջանցելով առևտրի մեծ ու փոքր կետերը, հարցուփորձ անելով և պարզելով, որ պետք է առաջին լուսացույցից թեքվել աջ՝ հայտնվում եմ Մուրացան փողոցի բնակելի տների մոտ: Մի քիչ էլ պրպտելուց հետո հայտնվում եմ ուղիղ N79 երկհարկանիի առաջ, որտեղ ինձ վերջնականապես կողմնորոշում է թանգարանի մուտքն ազդարարող ցուցատախտակը:
Այս թանգարանը գործում է դեռևս հայտնի ազգագրագետ ու նկարչուհի Լուսիկ Ագուլեցու կենդանության օրոք՝ 2013 թվականից, սակայն այն ժամանակ դա նաև բնակության վայր էր: Այդ պատճառով թանգարանը հյուրեր ընդունում էր միայն նախնական պայմանավորվածությամբ: 2019-ից՝ Լուսիկ Ագուլեցու մահից հետո, ընտանիքը տեղափոխվեց, իսկ տունը դարձավ լիարժեք թանգարան:
Բայց թանգարանի առաքելություններից մեկը գանձերը ոչ միայն պահպանելն է, այլև դրանք ստեղծելու մշակույթի ավանդույթների փոխանցումը սերնդեսերունդ: Այդ պատճառով այստեղ գործող արվեստ կենտրոնում շուտով կսկսվեն դասընթացներ, որտեղ կսովորեցնեն ազգագրական երգ ու պար, կավագործություն և այլ արհեստներ: Կենտրոնի հիմնական վայրը կլինի տան բակը, որտեղ այժմ կարելի է տեսնել Լուսիկ Ագուլեցու գեղանկարչական ու նրա ամուսնու՝ Յուրիկ Սամվելյանի քանդակագործական աշխատանքները:
Բակից գնում ենք հյուրասենյակ, որտեղ Լուսիկ Ագուլեցու հարսը՝ Գայանեն, վերհիշում է, թե ինչպիսի համադամ ուտեստներ են մատուցել հյուրասենյակի ընդարձակ սեղանին և ինչ զրույցներ են լսել սենյակի պատերը: Նույն այդ պատերի մեջ մեզ սպասում են Լուսիկ Ագուլեցու շուրջ 40 տարվա հավաքչական աշխատանքներից շատ ցուցանմուշներ՝ սպասք, կաթսաներ, լամպեր, ձեռագիր մատյաններ, գորգեր, դաշույններ և այլ իրեր: Իսկ յասամանի անուշաբույրը և հյուրասենյակի կահավորանքը հնարավոր են դարձնում պատկերացնել, թե ժամանակին ինչպիսի անցուդարձ է տիրել այս սենյակում:
Ննջարան մուտքն ազդարարում է 17-րդ դարի ֆրանսիական զարդատուփի մեղեդին: Այստեղ կարելի է տեսնել հայկական գոտիների լայն հավաքածու, ազգային տարազի նմուշներով իր զգեստապահարանն ու զարդասեղանը:
Հաջորդ սրահում ձեզ կողջունեն հին ռադիոյի ձայնն ու վինիլային ձայնարկչից հնչող ազգային հին երաժշտության ելևէջները, որոնք լցնում են հին ժամացույցների, հեռախոսների և այլ գործիք-ցուցանմուշների սենյակը:
Վերնասրահում ձեզ կսպասեն Աշորայի, Վանատուրի, Ամանորի, Անահիտ աստվածուհու և շատերի փոխակերպված արձանիկ-տիկնիկները, որոնք կպատմեն, թե ինչ տեսք են ունեցել ջրաբեր, անձրևաբեր կամ արևաբեր աստվածությունները և այլ տարբեր կերպարներ: Լուսիկ Ագուլեցին այս տիկնիկների ստեղծման վրա աշխատել է 2012-15 թվականներին՝ ստեղծելով տոնածիսական մշակույթի առանձնահատուկ փոխակերպումներ:
Դուրս եմ գալիս հստակ զգացողությամբ, որ սա ոչ այնքան առանձնատուն էր, որտեղ ապրել են տարիներ շարունակ, ու ոչ միայն թանգարան՝ իր յուրահատուկ ցուցանմուշներով, այլ մի ամբողջ Հայաստան՝պարզապես խտացված ու պարփակված չորս պատերի ու երկու հարկերի մեջ:

Երևանի բժշկության թանգարան

Հասցե.
Արշակունյաց 44/1
(մուտք 4-րդ)
բնակարան 43

Մուտքն ազատ է, սակայն այցելելու համար հարկավոր է նախօրոք պայմանավորվել (հեռ. +374 93 30 92 37):

Մի ամբողջ թանգարան է, բայց տեղավորվում է ընդամենը 65 մ. տարածքի մեջ, որն էլ իր հերթին գտնվում է Արշակունյաց պողոտայում: Երեք սենյականոց այս բնակարանում ներկայացված է հավաքորդ Հարություն Մինասյանի շուրջ 30 տարվա հավաքչության արդյունքում ձևավորված անձնական հավաքածուն: Ավելի ստույգ՝ 30 հազար կտորցուցանմուշ՝ հայ և համաշխարհային բժշկության ոլորտից: Առաջին սենյակ-ցուցասրահը պայմանականորեն ստացել է «նախնադար» անվանումը: Այս հատվածում ներկայացված են պեղածո-հնագիտական նմուշներ, բժշկական անդամահատման գործիքներ, կմախքներ, քարեդարյան գործիքներ, սպասք, գուռ, առողջարանային ջրեր ընդունելու հարմարանքներ և այլ իրեր: Պարոն Մինասյանը հպարտությամբ ներկայացնում է 5000 տարվա վաղեմություն ունեցող գանգոսկրի ախտաբանությամբ մարդկային գանգը՝ գտնված Արտաշատի Ջրահովիտ գյուղի պեղումներից մեկի ժամանակ: Ընդ որում, այն պեղել է ինքը՝ պարոն Մինասյանը: Թանգարանի այս մասում կարելի է պատկերացում կազմել, թե ինչպես է զարգացել բժշկության պատմությունը, երբ պարոն Մինասյանը ձեզ պատմի, թե ինչպես են հնում օգտագործվել անդամահատման գործիքները կամ իրականացվել է ներքին օրգանների հետազոտություն:
Մենք անցնում ենք հյուրասենյակ, որը կրկին բաժանված է ժամանակաշրջանների: Առանձին ցուցադրությամբ կարելի է գտնել ցուցանմուշներ, որոնք վերաբերում են բուսաբուժությանը: Նաև այստեղ կլսեք, թե ինչպես են ժամանակին նոտաների միջոցով բուժել նյարդային լարվածությունը կամ այլ հոգեկան առողջության խնդիրներ:
Հյուրասենյակի տարբեր անկյուններում հնարավոր է տեսնել իսկական բժշկական գրասեղաններ, կոկիկ դասավորությամբ բժշկական կանացի և տղամարդու պայուսակներ, հանդերձանք, ժամանակին հայտնի հայ և օտարազգի բժիշկների, բժշկական համալսարանի ուսանողների և այլոց լուսանկարներ, անձնական իրեր, որոնք թանգարանին նվիրաբերվել են ժառանգների կողմից կամ գնվել են հավաքորդի անձնական միջոցներով:
Դեպի պատշգամբ տանող ճանապարհին ձեզ կհանդիպեն 18-20-րդ դարերում օգտագործված անվանական ցուցատախտակներ, որոնք ազդարարում էին այս կամ այն բժշկի բնակարանի հասցեն, ինչպես նաև տարբեր ժամանակների կենցաղային իրեր՝ ինքնաեռներ, երկաթյա արդուկներ և այլն, որոնք օգտագործվել են բժշկական նպատակներով, գուցե հենց նույն բժիշկների, որոնց ցուցանակները նույնպես այստեղ են:
Թանգարանի ցուցադրությունը մենք ավարտում ենք կրկին վերադառնալով հյուրասենյակ՝ հարմար տեղավորվելով հյուրասեղանի առաջ: Այստեղ ինձ սպասում էր թանգարան հիմնելու և իր պատմությունը: Սկզբից բժշկի մասնագիտությունն ընտրում է իրեն, հետո ինքը սկսում է զբաղվել ոչ միայն բժշկությամբ, այլ նաև ընտանիքի անձնական կամ բժշկական իրերի հավաքչությամբ:
Եթե թանգարանային գիշերը կամ ցանկացած այլ օր ձեր մտքով անցնի կեսգիշերին թակել այս զարմանալի բնակարան-թանգարանի դուռը, ապա ինչպես նախկինում մեկ անգամ պատահել է, ձեզ կսպասի թեյախմության սեղանն ու հայ բժշկության պատմությունը:

ՀՅԴ պատմութեան թանգարան

Հասցե.
Միեր Մկրտչյան 12/1

Մուտքն ազատ է:
Թանգարանն իր դռները բացում է յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 11:00-ից մինչև 16:00:

Հանրապետության հրապարակի մետրոյից քայլում եմ դեպի Միրզոյան սրճարան-գրադարանի կողմն ու ճանապարհին հասցնում մտածել, թե ինչո՞ւ նախկինում չեն հետաքրքրել այս փողոցի այլ վայրերը: Պատասխան չեմ հասցնում գտնել, քանի որ գրադարանից թեքվում եմ դեպի ձախ ու հասնում ՀՅԴ գրասենյակին: Այնտեղ ներսում էլ գտնվում է թանգարանը: Ես անցնում եմ գրասենյակի նեղ միջանցքով և ինձ դիմավորում է տիկին Անուշը, որը թանգարանի սկզբնավորումից ի վեր աշխատում է այստեղ: Հենց սկզբից պարզ է դառնում, որ այստեղ ցուցադրված են ոչ միայն Դաշնակցության կուսակցական գործիչների անձնական իրերը, այլ նաև այս ցուցանմուշներից շատերն ամփոփում են Առաջին հանրապետության ստեղծման պատմությունը:
Յուրաքանչյուր ցուցատախտակի առաջ տիկին Անուշն առանձնացնում է նմուշներ և մանրակրկիտ ներկայացնում դրանց, ինչպիսիք են՝ Դրոյի անձնական իրերը, Սողոմոն Թեհլերյանի անվանն առնչվող փաստաթղթերը, Առաջին հանրապետության թղթադրամները (հայկական ռուբլիները) և այլ օրինակներ:
Այն ամենը, ինչ կարելի է տեսնել այստեղ, հավաքվել և թանգարանի է վերածվել երեք փուլելով: Հավաքչական աշխատանքները սկսվել են դեռևս 19-րդ դարի վերջից՝ ՀՅԴ նշանավոր գործիչ Ռոստոմի խորհրդով՝ հասնելով մինչև 2006 թվական, երբ ցուցանմուշներից շատերը Ֆրանսիայից տեղափոխվել են Երևան: Այսօր թանգարանում շատ ցուցանմուշներ ներկայացված են ժամանակավոր ցուցադրության, քանի որ ցուցատախտակներն անընդհատ թարմացվում են, ինչպես Սողոմոն Թեհլերյանի անձնական լուսանկարներն ու իրերը, որոնք ամեն տարի թանգարանային գիշեր ծրագրի շրջանակներում հայտնվում են թանգարանային մյուս ցուցանմուշների կողքին, այնուհետև պահոցում:

Երբ ես և տիկին Անուշն անցնում ենք թանգարանի միջանցքով և պայմանականորեն հայտնվում մշակույթի բաժնում, առաջին ցուցանմուշը, որի մասին պատմում է նա, սուրճի երկու բաժակներ են, որոնք պատկանել են Լևոն Շանթին: Ցուցանմուշն ունի թաքնված խորհուրդ. ժամանակին այնքան են կարևորվել դպրոցն ու կրթությունը, որ հաճախ դրանցով զբաղվող գործիչներն անգամ ժամանակ չեն ունեցել մեկ բաժակ սուրճ խմելու և հետևաբար սուրճի բաժակները պետք է հիշեցնեին անհրաժեշտ հանգստի մասին:
Ցուցասրահի այս հատվածում կարելի է գտնել նաև հայ հասարակական-մշակութային տարբեր կին գործիչների լուսանկարները, որոնց մասին տիկին Անուշը պատմում է առանձնահատուկ ոգևորությամբ՝ յուրաքանչյուր արտահայտություն եզրափակելով ձեռքի յուրահատուկ շարժումներով, որոնք սահում են ցուցափեղկի վրայով և ընդգծում, օրինակ՝ Դիանա Աբգարի (Առաջին հանրապետության դեսպանը Ճապոնիայում և առաջին կին դեսպանը պատմության մեջ) և այլոց դիմագծերը կամ հագուստի եզրերը:
Թանգարանի վերջին հատվածը նվիրված է Հայաստանի առաջին Հանրապետությանը. փաստաթղթեր, Փետրվարյան ապստամբությանն առնչվող լուսանկարներ, Առաջին հանրապետության դրոշը և շատ այլ նմուշներ: Անցնելով թանգարանի այս հատվածով՝ դուք հնարավորություն կունենաք մանրամասն զննելու 1919 թվականին կազմված Հայաստանի և հարակից երկրների քարտեզը, որը ձգվում է ամբողջ պատով: Այցելուներից շատերն այդ քարտեզի վրա փորձում են գտնել իրենց նախապապերի կորսված բնակավայրերը:
Առաջին հանրապետության պատմությունը կարճ էր, բայց վառ ու կարևոր Հայաստանի համար: Նույն պատճառով էլ կարևոր է այս թանգարանը, որը պետք չէ դիտարկել զուտ կուսակցական տեսանկյունից:

Շուշանիկ Փափազյան
Մարիամ Հովհաննեսյան



100 տարվա հավաքչություն

Պապկերապրեֆ մի թանգարան, որն այս պարի արդեն ուղիղ 100 պարեկան է, որը գրեթե ամեն օր համալրում է իր հավաքածուն և որի ֆոնդապահոյնե-ում մեկ միլիոնից ավելի նյութ կա։ Ու դա միանգամայն հնարավոր է, ավե-լին՝ հենց Երևանում՝ Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանն է։
Հավաքածուի համալրման, նվիրաբ-վությունների ու միզթանգարանային սոլիդարության մասին ԵՐԵՎԱՆ-ը կրուցել է թանգարանի տնօրեն, գրող և գրականագետ Կարո Վարդանյանի և գլխավոր ֆոնդապահ Օֆելյա Կարապետյանի հետ։

Հավաքչական բաժինն էլ չկա

Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանն աչքի է ընկնում հավաքածուի հաճախակի համալրումներով։ Դա եղել և մնում է թանգարանի թերևս ամենակարևոր և ակտիվ իրականացվող գոր-ծառույթներից մեկը։ Դա պայմանավորված է ոչ միայն թանգարանի բնույթով, այլև տարիների ընթացքում ձևավորված ավանդույթներով ու աշխատակիցների սրտացավ աշխատանքով։
Խորհրդային շրջանում թանգարանն ուներ առանձին հավաքչական բաժին, որի գործառույթը նոր նմուշներ գտնելն ու թանգարան բերելն էր։ Դա իրականացվում էր տարբեր կերպ։ Տնօրեն Կարո Վարդանյանը նշում է, որ այդ տարիներին պետական աջակցությունը մեծ էր, թան-գարանի բյուջեում մի պատկառելի գումար նախատեսված էր լինում արխիվային նյութեր ձեռք բերելու համար։ Որպես կանոն՝ բաժինը կապ էր հաստատում արվեստի ոլորտի երևելիների կամ նրանց ընտա-նիքների հետ, համոզում, որ արխիվի պահպանության համար ճիշտ հասցեն հենց թանգարանն է, հավաստիացնում, որ նյութերը լավա-գույնս պահպանվում են։
Հին աշխատողներից Գոհար Ազնավուրյանը, օրինակ, մեծ վստահու-թյուն էր վայելում Սփյուռքում։ Հենց նա էր, որ կարողացավ Գրիգոր Զոհրապի դստերը՝ Դոլորեսին, համոզել ԱՄՆ-ից Երևան ուղարկել գրո-ղի ողջ արխիվը, այդ կերպ թանգարանում իր տեղը գտավ նաև Դանիել Վարուժանի արխիվը։ Թանգարանում պահպանել են այդ բոլոր նամա-կագրությունները, որտեղ թանգարանի աշխատակիցները բանակ-ցում են Սփյուռքի մեր հայրենակիցների հետ, համոզում, բացատրում

↑ Սայաթ-Նովայի «Դավթարը»



↑ Հովհաննես Թումանյանի առաջին բանաստեղծության ձեռագիրը



→ Եղիշե Չարենցի ձեռագիր «Սոման»

արխիվը թանգարան տեղափոխելու կարևորությունը: Թանգարանի հին աշխատակիցներից Հովակիմյանն էլ, օրինակ, ամեն անգամ որևէ բեմադրության պրեմիերայի կամ գրքի շնորհանդեսի այցելելով, թանգարան էր բերում պաստառ, աֆիշ, հրավիրատոմս կամ գիրք: Որոշ աշխատակիցներ էլ արտերկիր մեկնելու հնարավորության դեպքում հետդարձի ճամպրուկը նվերների ու իրենց համար կատարված գնումների փոխարեն լցնում էին այս ու այն տեղից գտնված արխիվային նյութերով:

Այժմ ֆոնդապահոցները գնման ճանապարհով համալրելու հնարավորություն թանգարանը, ցավոք, չունի, չկա նաև հավաքչական բաժինը և դրա բացակայության պարագայում թանգարանի բոլոր աշխատակիցներն էլ անում են ամեն ինչ թանգարանի հավաքածուն համալրելու համար: Դա անընդհատ ու անվերջ աշխատանք է:

Թանգարանի գլխավոր ֆոնդապահ Օֆելյա Կարապետյանը հպարտությամբ է նշում, որ թանգարանում պահվող նյութերի քանակն արդեն անցել է մեկ միլիոնը, հետո արագ գտնում է ցուցակներն ու կարդում, որ 2019-ին հավաքածուն համալրվել է 2713, իսկ 2020-ին՝ 1663 նմուշով: Իսկ 2021-ի առաջին եռամսյակն ընդհանրապես ռեկորդային է եղել, տարին դեռ նոր է սկսվել, բայց արդեն 1580 համալրում կա: Ուրախությամբ է նշում, որ այս տարի Մհեր Մկրտչյանի արխիվն են ստացել նրա տիկնոջ՝ Թամար Հովհաննիսյանի կողմից, ինչպես նաև աշխարհի տարբեր երկրներից Կոստան Զարյանի, Հակոբ Կարապենցի, Խաչիկ Խաչերի ձեռագրերից, Ջոն Տեր-Թադևոսյանի և Կարապետ Փոլադյանի արխիվային նյութերից ու էլի շատ բաներ:

Դրանց մի մասը հավաքվել է աշխարհի տարբեր ծայրերից ոչ միայն թանգարանի աշխատակիցների, այլև հայ մշակույթի պահպանության համար մտահոգ մարդկանց շնորհիվ: Այսպես՝ Եգիպտոսում մի հայ բժիշկ շուկայում նկատել է, որ մի արաբ վաճառում է հայերեն ձեռագրեր: Պարզվել է՝ Դանիել Վարուժանի և Ավետիք Իսահակյանի ձեռագրերն են: Գնել է և ուղարկել թանգարան: Իսկ Լոնդոնի ազգային գրադարանի աշխատակից Վրեժ Ներսիսյանը զբաղվում է ակտիվ հավաքչությամբ ու գտածոներն ուղարկում Երևան:

Միջթանգարանային սոլիդարություն

Թանգարանների մասին օրենքը Հայաստանում չի կարգավորում թանգարան հանձնվող նյութերի համապատասխանությունը տվյալ թանգարանին: Երբեմն նյութերը հայտնվում են այնտեղ, որտեղ չպետք է հայտնվեին: Այդ դեպքերում շատ կարևոր է, որ թանգարանի աշխատակիցներն իրենք չընդունեն նյութն ու նվիրատուին ուղղորդեն այն թանգարան, որն առավել համապատասխան է:

Օրինակ՝ տարիներ առաջ ԳԱԹ-ը, չընդունելով Վարդգես Սուրենյանցի արխիվը, ուղղորդեց այն Ազգային պատկերասրահ: Ցավոք, բոլորը չէ, որ այդպես են վարվել: Այսպես, օրինակ՝ Եղիշե Չարենցի ձեռագրերի մի մեծ հավաքածու հայտնվել է Մատենադարանում, Սերո Խանզադյանի արխիվը՝ Ազգային արխիվում, մինչդեռ այդ արխիվների ճիշտ հասցեն հենց ԳԱԹ-ն է: Իզուր չէ, որ Չարենցը հենց ինքն է ստեղծել իր արխիվն այս թանգարանում հեռավոր 30-ականներին՝ թանգարանին հանձնելով «Սոմայի» ինքնագիրը, երբ թանգարանը դեռ Գրական թանգարան

↑ Թատերական և երաժշտական պատկերներ

էր կոչվում: Հետո էլ յուրաքանչյուր գործի մամուլում կամ առանձին տպվելուց հետո Չարենցն ինքն էր ձեռագիրը թանգարանին հանձնում: Նույն կերպ վարվում էին շատ-շատերը:

Անհանգիստ նվիրատուներն ու նվիրատվության կարևորությունը

Շատ նյութեր թանգարանում հայտնվում են մշակույթի գործիչների կտակի հիման վրա, կամ էլ հետնորդների նախաձեռնությամբ: Կլինի ընդամենը մեկ թերթ ձեռագիր, թե մի ամբողջ ճամպրուկ, մարդիկ հաճախ ցանկանում են նախ տեսնել, թե ինչ պայմաններում է պահպանվելու իրենց կողմից թանգարանին վստահված նյութը: Երբեմն նախօրոք այցելում են ու խնդրում ցուցադրել ֆոնդապահոցները, ցանկություն հայտնում ծանոթանալու թանգարանի հավաքածուին:
Սա միանգամայն հասկանալի ցանկություն է և թանգարանի աշխատակիցներն ամեն անգամ մեծ ուրախությամբ են ուղեկցում հյուրերին, պատմում, թե հայ մեծանուն գրողներից, երաժշտարվեստի, թատերարվեստի ու կինոյի գործիչներից, որոնց արխիվներն են պահպանվում թանգարանում: Լինում են նաև այնպիսի նվիրատուներ, ովքեր ժամանակ առ ժամանակ նույնիսկ Սփյուռքից այցելում կամ զանգահարում են իմանալու իրենց կատարած նվիրատվության որպիսությունը: Ու կրկին բոլորը բավարարված են լինում լսածով ու տեսածով:
Այժմ թանգարանը ջանք չի խնայում հայ, այդ թվում և սփյուռքահայ հասարակությանը իրազեկելու, որ Գրականության և արվեստի թանգարանն ուրախ է հյուրընկալել հայ երևելիների արխիվները և որ շատ կարևոր է, որ այդ նյութերը գտնեն իրենց պահպանության ճիշտ տեղը: Կարո Վարդանյանը նշում է, որ հատկապես հիմա, երբ Սփյուռքում շատերի արդեն 4-րդ սերունդն է բնակվում, կարևոր է արխիվային նյութերը բերել Հայաստան:
«Եթե նրանց ծնողների, տատերի ու պապերի համար այդ արխիվներն արժեք էին, ապա նոր սերնդից ոչ բոլորն են գիտակցում, թե ինչ մեծ կարևորություն ունի այն ճամպրուկը, որն իրենց համար բեռ է դարձել,– բացատրում է նա:– Ցավոք, այս հարցի հանդեպ մեր երկրում պետական մոտեցում չկա»: Տնօրենը ցավով նշում է, որ ոլորտը չի համակարգվում, կապեր չեն հաստատվում Սփյուռքի հայ համայնքների հետ այս հարցով ու, առավել ևս, նվիրատվություն կատարելու կամք հայտնելու պարագայում չի հոգվում ճանապարհածախսը:

Նոր ցուցանմուշն ու ֆոնդապահը

ԳԱԹ-ն ունի գրական, թատերական, երաժշտական ֆոնդեր, կինոֆոնդ, ինչպես նաև տեսաձայնադարան ու գրադարան: Նախքան այդ ֆոնդերից որևէ մեկում իր տեղը գտնելը յուրաքանչյուր նոր նյութ ցուցակագրվում և մանրամասն ուսումնասիրվում է: Ձեռագրերն ընթերցվում են, արձանագրվում է դրանց բովանդակությունը, նյութը, թվագրությունը և այլն: Այս բոլոր ընթացակարգերից հետո միայն նյութը դրվում է հանրության առջև:
Սա պատասխանատու, միևնույն ժամանակ սրտացավություն և ուշադրություն պահանջող աշխատանք է: Իսկ որ ամենակարևորն է՝ այս աշխատանքը շատ սեր է պահանջում: Թանգարանի գլխավոր ֆոնդապահ Տիկին Օֆելյան, որ Թանգարանում է աշխատում 1978-ից, այսպես է բնութագրում իր աշխատանքը. «Ես միշտ ասում եմ՝ ձեռագրատունը մեր սրբության սրբոցն է: Եթե մեկ անգամ ձեռքդ վերցնես Թումանյանի ձեռագիրն ու երկյուղ զգաս, այլևս չես կարողանա հեռու լինել դրանից: Հիվանդության նման մի բան է: Հայտնի փաստ է, մեզ մոտ թանգարաններում աշխատավարձերը ցածր են և այլ տեղ աշխատելու գայթակղությունը միշտ մեծ է եղել, բայց ես այլ կերպ ուղղակի չէի կարող, չէի կարող հեռու մնալ այս ամենից: Ամեն անգամ, երբ պատկերացնում եմ, թե օրինակ մեր եղեռնամահ գրողների ձեռագրերն ինչեր են տեսել նախքան իմ ձեռքում հայտնվելը, մարմնովս սարսուռ է անցնում»:

Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան

Եղիշե Չարենցի անունը կրող գրականության և արվեստի թանգարանի պատմությունը սկիզբ է առնում 1921 թվականից: Այն ստեղծվել է իբրև Հայաստանի Լուսավորության ժողովրդական կոմիսարիատին կից Երևանում ստեղծված պետական կուլտուր-պատմական թանգարանի պատմագրական բաժին: Առաջին ղեկավարը եղել է պատմաբան Երվանդ Շահազիզը (1856-1951), որը Նոր Նախիջևանից Երևան էր բերել և թանգարանին հանձնել Միքայել Նալբանդյանի, Ռափայել Պատկանյանի և ուրիշների արխիվները, հնատիպ գրքեր և այլ նյութեր: Դրան զուգահեռ Հովհաննես Թումանյանի միջոցով թանգարանին էր հանձնվել Սայաթ-Նովայի երգերի ինքնագիր տետրը՝ Դավթարը: 1967-ից կրում է Եղիշե Չարենցի անունը: 1977-ին թանգարանում հանգրվանեցին նաև հայ կինոարվեստին վերաբերող ֆոնդերը: Այժմ թանգարանում պահվում և ցուցադրվում են 18-րդ դարից մինչև նորագույն ժամանակաշրջանի գրականության, թատերարվեստի, երաժշտարվեստի և կինոարվեստի գրեթե բոլոր խոշոր գործիչների արխիվները և այդ շրջանում գործած մշակութային և կրթական հաստատություններին վերաբերող հավաքածուներ:

Հասմիկ Բարխուդարյան
Հարություն Մալխասյան

← Օֆելյա Կարապետյանը

Էքսկուրսավար. թանգարանային սուպերհերոսների մասին

Յուրաքանչյուր թանգարանում միշտ կա այն մեկը, որը կարող է այդը թանգարան վերածել մի իրական Խանապարհորդության: Էքսկուրսավարի մասնագիտության, դրա դժվարությունների, լավ էքսկուրսավար լինելու բանաձևի ու կրթական ծրագրերի կարևորության մասին ավելին իմանալու համար ԵՐԵՎԱՆ-ն այցելել է Երևան քաղաքի պատմության թանգարան, որը, ի դեպ, այս տարի նշում է իր 90-ամյակը:

Ժամանակին ինքս լինելով ԵՊԹ գիտաշխատող՝ գերծանրաբեռնված օրերին մի քանի անգամ ստանձնել եմ էքսկուրսիա վարելու բարդ գործն ու հավատացեք, գիտեմ, թե ինչ եմ ասում՝ գործն իսկապես բարդ է: Բավական չէ, որ ելույթ ես ունենում մի խումբ անծանոթների առջև, պիտի ոչինչ բաց չթողնես, ցանկացած պարագայում լինես կենսուրախ, քաղաքավարի ու ոչ ձանձրալի, դեռ մի բան էլ պիտի պատրաստ լինես պատասխանել բոլոր հնարավոր հարցերին: Հիշողությունս թարմացնելու համար այցելեցի նախկին աշխատավայրս՝ Երևան քաղաքի պատմության թանգարան ու հանդիպեցի թանգարանի էքսկուրսիոն բաժնի ղեկավար Մարինա Խաչմանուկյանին ու բաժնի աշխատակիցներին:

Սալու և վերցնելու արվեստը

Դժվար է պատկերացնել մեկին, ով ավելի շատ է սիրում իր մասնագիտությունը և այդչափ խանդավառությամբ է խոսում դրա մասին, որքան Մարինան, ով արդեն գրեթե 30 տարի էքսկուրսավար է: Մարինան խոստովանում է, որ երբեք չի մտածել էքսկուրսավար լինելու մասին, այդպես ստացվել է հանգամանքների բերումով. «Մասնագիտությունս սկսեցի սիրել ժամանակի հետ: Սկզբում այն պարզապես աշխատանք էր: Սիրում եմ գործս, որովհետև այն հնարավորություն է տալիս մարդկանց հետ շփվելու: Ինչպես ցանկացած մարդկային շփման մեջ, այստեղ ևս թե՛ տալիս ես ու թե՛ վերցնում, ոչ միայն սովորեցնում, այլև սովորում: Ես ուրախ եմ, որ կարող եմ զբոսաշրջիկներին պատմել Երևանի պատմությունը: Փոքրիկ հայրենասիրական տարր կա այս գործի մեջ: Լինելով Երևանի քաղաքապետարանի հետ միևնույն շենքում՝ ունենում ենք բազմաթիվ բարձրաստիճան հյուրեր, աշխարհի տարբեր քաղաքների քաղաքապետեր են այցելում մեր Թանգարան, և ինձ դուր է գալիս, որ հենց ես հնարավորություն ունեմ Երևանը լավագույնս ներկայացնելու»:

Ըստ Մարինայի, էքսկուրսավարը թանգարանի դեմքն է: Եվ իսկապես, թանգարանից ստացած տպավորությունները մեծապես կախված են էքսկուրսավարից: Թանգարանային աշխատանքն անշուշտ բազմազան է, չի կարելի թերագնահատել, օրինակ, գիտաշխատողների ու ֆոնդապահների, սրահի ու տոմսարկղի պատասխանատուների աշխատանքը, բոլորի, այդ թվում և հենց տնօրենի աշխատանքն էլ ի վերջո հանգում է նրան, որ թանգարանն առավելագույնս հարմարավետ ու հետաքրքիր լինի այցելուի համար: Սակայն հենց էքսկուրսավարի հետ է ամենաշատն առնչվում այցելուն և հենց էքսկուրսավարից է կախված, թե ինչ տպավորություններով կհեռանա այցելուն և կցանկանա՞ արդյոք կրկին վերադառնալ, թե ոչ:

Իր բաժնի աշխատակիցներին և ուսանողներին Մարինան հաճախ հիշեցնում է իր իսկ փորձի հիման վրա դուրս բերած արհեստավարժ էքսկուրսավար լինելու 1+4 բանաձևը: Նախ, պետք են խորքային գիտելիքներ. շատ կարևոր է, որ էքսկուրսավարը տիրապետի ոչ միայն թանգարանի հիմնական ցուցադրությանը վերաբերող նյութին, այլև հարակից ինֆորմացիային: Հետո պետք է զգալ ու հասկանալ այցելուին, սա արդեն

→ Մարինա Ռաշմանովյանը

← Գոհար Ամալյանը

հոգեբանություն է: Մյուս կողմից՝ էքսկուրսավարը պետք է լինի նաև մանկավարժ՝ կարևոր է երեխայի հետ ճիշտ շփվելու, նյութը տարիքին համապատասխան, մատչելի և հետաքրքիր մատուցելու կարողությունը: Դա նաև ենթադրում է հոռետորի հմտություններ. միատոն խոսքը շատ արագ կարող է հոգնեցնել այցելուին: Կարևոր են նույնիսկ դիմախաղն ու ժեստերը:

Եվ, ի վերջո, յուրաքանչյուր էքսկուրսիա փոքրիկ ներկայացում է, որտեղ էքսկուրսավարն ինքը թե՛ սցենարիստն է, թե՛ ռեժիսորն ու թե՛ դերակատարը: Պետք է ամեն անգամ մտնել այդ դերի մեջ ու ավարտել ներկայացումը պատվով: Մարինան վստահ է, որ որքան էլ ավելանան տարատեսակ աուդիոգիդերը, այնուամենայնիվ, իրական մարդկային շփման ու փոխանցած էմոցիաներին ոչինչ չի կարող փոխարինել:

Երևանի դեսպանները

Մարինան գտնում է, որ հատկապես հետպատերազմյան շրջանում շատ կարևոր է մեր մշակութային ժառանգության, մեր ինքնության հարցը շեշտադրելն ու վերաիմաստավորելը: Ահա թե ինչու հատկապես Երևան քաղաքի պատմության թանգարանում էքսկուրսավարներն ինչ-որ առումով Երևանի դեսպաններ են, ովքեր ներկայացնում են մայրաքաղաքի պատմությունը ոչ միայն մեր քաղաքացիներին, այլև աշխարհի տարբեր կողմերից Երևան ժամանած զբոսաշրջիկներին: Ի դեպ՝ այս առումով աշխարհագրությունը բավական մեծ է. Ռուսաստան, Հնդկաստան, Իրան, ԱՄՆ, եվրոպական մի շարք պետություններ և այլն:

Իհարկե, էքսկուրսավարի մոտեցումն ու մատուցվող նյութը փոխվում է կախված նրանից՝ այցելուն տեղացի է, թե արտերկրից: Դե, ենթադրվում է, որ տեղացիներն արդեն գիտեն որոշ հիմնական բաներ մեր քաղաքի ու մեր մասին (չնայած, Մարինան ցավով նշում է, որ ոչ միշտ է այդպես): Իսկ ահա արտերկրից ժամանած այցելուներին նյութը մատուցվում է այնպես, որ նրա մոտ տպավորվեն ամենակարևոր փաստերը, Երևանի ու հայերի հիմնական բնորոշիչները, ինչպես նաև այն հանգամանքը, որ Երևանի տարածքը մեր նախնիների կողմից բնակեցված է եղել դեռևս անհիշելի ժամանակներից:

Անշուշտ, այստեղ անհնար կլիներ, առանց օտար լեզուների տիրապետող էքսկուրսավարների, ովքեր զբոսաշրջիկի համար այցը թանգարան դարձնում են առավել հարմարավետ: Ինքը՝ Մարինան, հաճախ էքսկուրսիաներ է անցկացնում ռուսերենով, սակայն ռուս զբոսաշրջիկները, ինչպես հայտնի է, Հայաստան շատ են այցելում և Մարինան իհարկե, մենակ չէ: Բաժնի աշխատակիցներից Սիմա Գրիգորյանցը, ով ի դեպ նաև մանկական հոգեբան է և մշակութաբան, ոչ միայն հայերեն, այլև ռուսերեն էքսկուրսիաներ է վարում, այսպես ասած՝ ունիվերսալ զինվոր է: Առաջին հայացքից, իհարկե, ոչ մի բարդ բան, ընդամենը ռուսերեն էքսկուրսիա, բայց, հավատացեք, ռուս զբոսաշրջիկներն աչքի են ընկնում հետաքրքրասիրությամբ և շատ են սիրում հարցեր տալ: Թանգարանում արդեն գիտեն, որ եթե Սիման գնաց էքսկուրսիա վարելու, ապա մոտակա մեկ ու կես ժամն անիմաստ է նրան սպասել: Անգլերենի հարցում պատասխանատու է Գոհար Ամալյանը, ով ևս հայտնի է բարեխիղճ

Երևան քաղաքի պատմության թանգարանը *հիմնադրվել է 1931-ին: Հիմնադրման պահին գտնվել է Երևանի հրշեջ վարչության շենքի 2-րդ հարկի սենյակներից մեկը: 1936թ. տեղափոխվել է Կապույտ մզկիթ: 1994-1997թթ. գտնվել է նախկին Հոփփսիմյան իգական գիմնազիայի, իսկ 1997-2005թթ.՝ Շահումյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցի մասնաշենքում: 2005-ին թանգարանը հաստատվել է Խարբերդապետ Ջիմ Թորոսյանի նախագծած Երևանի քաղաքապետարանի շենքում (Արգիշտի 1/1)՝ քաղաքապետարանի հետ կազմելով միասնական խարբերդապետական համալիր: Թանգարանում պահպանվում է հնագույն ժամանակներից մինչև մեր օրերն ընդգրկող շուրջ 94 հազար առարկա. հնագիտական, ազգագրական, դրամագիտական, կերպարվեստի, գրավոր աղբյուրների, լուսանկարների և այլ հավաքածուներ, այդ թվում՝ Երևանյան քարայրից հայտնաբերված ավելի քան 100 հազար տարիա պատմություն ունեցող վանակապե գործիքները:*

↑ Սիմա Գրիգորյանը

→ Ասպրամ Զաքարյանը

ու մանրամասն էքսկուրսիաներով: Այս մարդիկ հոգնել բառն ուղղակի չգիտեն: Գերմաներեն լեզվի հարցում բաժնին օգնության է հասնում Երևանի նորագույն պատմության բաժինը՝ հանձինս բաժնի ղեկավար Մեխակ Իզմիրյանի և գիտաշխատող Արմինե Կորեկյանի: Այս երկուսը գերմանացուն հատուկ ճշտապահությամբ արագ ու արդյունավետ կերպով օգնում են իրենց գործընկերներին:

Միայր հայայցի անհրաժեշտությունը

Դասական էքսկուրսիաներից բացի Երևան քաղաքի պատմության թանգարանում մշակվում և անցկացվում են երեխաների տարբեր տարիքային խմբերի համար նախատեսված կրթական ծրագրեր: Դրանցից ամենասիրելին թերևս «Ճանաչիր Երևանը» խաղ-էքսկուրսիան է: Այս էքսկուրսիայի հիմնական պատասխանատուն Ասպրամ Զաքարյանն է: Խաղի շնորհիվ երեխաները նախ ծանոթանում են ամբողջ ցուցադրությանը, ապա երկու խմբի բաժանվում Երևանի 17-19-րդ դարի մանրակերտի շուրջ, որը, ի դեպ, կարող է կենդանանալ հատուկ լուսաձայնային պրոյեկցիայի շնորհիվ և մրցելով, հարց ու պատասխանի միջոցով ամփոփում գիտելիքները:

Ասպրամն էլ իր հերթին անում է ամեն ինչ, որ երեխաները թանգարանից հեռանան ոչ միայն նոր գիտելիքներով, և խաղից ստացած վառ տպավորություններով, այլև այն գիտակցությամբ, որ միշտ հաղթում է ընկերությունը: Ի դեպ՝ թանգարանում բոլորը գիտեն, որ Ասպրամի վարած էքսկուրսիաների ընթացքում երեխաները զարմանալի կարգապահ են լինում: Ասպրամը հաճույքով է խոսում այդ չարաճճիների մասին. «Անգամ ամենաանկարգ երեխաներին հնարավոր է ներգրավել ու հետաքրքրություն առաջացնել, միայն թե պետք է համբերատար լինել: Իհարկե, լինում են պահեր, երբ ստիպված եմ լինում խիստ հայացք նետել նրանց ուղղությամբ, կամ լռել այնքան, մինչև որ հասկանան, որ ողջ խումբն իրենց է սպասում: Որպես կանոն՝ ամաչում են ու սթափվում»: Երկու որդիների մշակութաբան մայրիկը շատ լավ գիտի, թե ինչպես է պետք մատուցվող նյութը հետաքրքիր դարձնել բոլոր չարաճճի բալիկների համար: Թանգարանի Երևանի նոր պատմության բաժինն էլ՝ ի դեմս բաժնի ղեկավար Սուսաննա Հարությունյանի, մշակել է երկու դաս էքսկուրսիա՝ դպրոցականների համար: «Երևանի բերդի առումը» և «Երևանի 1724-ի հերոսական պաշտպանությունը» արդի թեմաներով, որոնք նախատեսված են այն աշակերտների համար, ովքեր դպրոցում Հայոց պատմություն առարկայի շրջանակում արդեն ծանոթացել են թեմային: Սուսաննա Հարությունյանը, ով նախկինում ինքն էլ դպրոցում պատմության ուսուցչուհի է եղել, բավական մանրամասն ներկայացնում է նյութը: Կան և այլ կրթական ծրագրեր. «Գիտունիկ», «Վերականգնենք միասին», «Երևանի 2800-ամյակի գորգը» և այլն: Ու մինչ մենք զրուցում ենք նոր կրթական ծրագրերից, լսվում է էքսկուրսիոն բաժնի հեռախոսի ձայնը: Նոր էքսկուրսիա գրանցվեց, ես էլ հիշեցի, թե ինչ զավեշտալի զանգեր էին լինում: Որոշ մարդիկ որոշում էին, որ զանգահարել են Երևանի տուն-թանգարան, որոշները՝ քաղաքապետի տուն-թանգարան, մեկին հետաքրքրում էր Վարդան Սամիկոնյանի թրի քաշը, մյուսներն էլ չէին կողմնորոշվում, թե ո՞վ է իրենց ուղեկցելու թանգարանում՝ պատմիչը, ասիչը, քույրիկը, մորաքույրը, թե՞ այնուամենայնիվ էքսկուրսավարը: Ասում եմ, չէ՞, հեշտ գործ չի:

Հասմիկ Բարիսուդարյան
Հարություն Մալխասյան

«Վա՛յ, իմ տատիկի տանը կա սրանից»

Աբովյան 64 հասցեում, ավելի կոնկրետ՝ Պլանի գլխում է գտնվում Ժողովրդական արվեստների թանգարանը, որտեղ պահպանվում են հայ ժողովրդի կենցաղն ու սովորությունները: Բայի հիմնական հավաքածուի ցուցադրումը թանգարանը նաև շատ ակտիվ նշում է մեր ավանդական տոներն ու պահպանում սովորույթները: Երգ, պար, դասախոսություն, վարպետաց դաս ու նման յանկապած միջոցառում տեղի է ունենում թանգարանի առաջին հարկում գտնվող ամենաէներգետիկ սենյակում:

Այս սրահը հատուկ կառուցած է հայկական ավանդական տան մոդելով՝ հազարաշեն տանիքով, մանկական օրորոցով, խնոցիով ու դազգահով, որպեսզի յուրաքանչյուրս զգա թանգարանի նշանակությունն ու արժեքը: Ժողովրդական արվեստների թանգարանի Հասարակայնության հետ կապերի պատասխանատու Նազելի Ութուջյանը մեզ հետ զրույցում մանրամասն պատմել է թանգարանի առաքելության ու հասարակությանն իր արմատներին մոտեցնելու՝ թանգարանի ջանքերի մասին:

Մեկ հեր կողջ կողջի ապրող թանգարան

Շատերը չգիտեն մեր տեղը, կարծես թաքնված թանգարան լինենք. մարդկանց մի մասն այստեղ միայն երեխա ժամանակ է եղել, մի զգալի մաս էլ նոր է բացահայտում:

Մեր թանգարանը հետաքրքիր է նրանով, որ այն մարդկանցից կտրված ու օտար չէ: Մարդիկ, տեսնելով այստեղի ցուցադրված նմուշները, միշտ ասում են. «Վա՛յ, իմ տատիկի տանը կա սրանից», կամ՝ «Իմ մաման էլ ա սենց բաներ գործում»:

Թանգարանում ցուցադրված են ոչ թե հնարավորինս հին նմուշներ, այլ ժողովրդական արվեստ՝ իր տարբեր ոլորտներով. փայտի փորագրություն, մետաղի և քարի գեղարվեստական մշակում, ասեղնագործություն, ժանյակագործություն, գորգագործություն, կարպետագործություն, խեցեգործություն: Բոլոր այս ոլորտներն ու մեր ժողովրդի մտածողությունը թանգարանում ներկայացված է միաժամանակ, մեր ցուցասրահներում կարող ես շրջել ու միևնույն զարդանախշը տեսնել և՛ քարի, և՛ փայտի, և՛ մետաղի վրա:

ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՑՈՒՑԱԴՐՎԱԾ ԵՆ ՈՉ ԹԵ ՀՆԱՐԱՎՈՐԻՆՍ ՀԻՆ ՆՄՈՒՇՆԵՐ, ԱՅԼ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ՝ ԻՐ ՏԱՐԲԵՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՎ

Մեղը տեղին տոնելով

Երբ նայում ես մեր Թանգարանում ցուցադրված նմուշներին, հասկանում ես, թե ինչքան գեղեցիկ ու իմաստավորված ենք մենք ապրել. ինչո՞ւ ոչ, հիմա էլ փորձենք ձգտել դրան ու այսօր էլ այն բերենք կենցաղ: Ու գուցե կենցաղային իրերի վրա արված այս հրաշալի փորագրություններն ու սիմվոլները, որոնցից յուրաքանչյուրն ունեցել է շատ խոր իմաստ, հիմա էլ մեր կյանքում ինչ-որ բան փոխեն: Ուստի, մեր կողմից

Հիմնականում դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշներ են, որոնք հավաքվել են 1930-ականներից սկսած ազգագրագետ, բանահավաք Հարութիւնակ Բաբայանի կողմից: Թանգարանը հիմնադրվել է 1978-ին նկարիչ և էթնիկ մշակույթի նվիրյալ Հովհաննես Շարամբեյանի ջանքերով, սակայն մինչ այդ 1930-ականներից այս կառույցը եղել է ժողովրդական ստեղծագործության տուն. այստեղ հավաքվել են հայկական ժողովրդական վարպետներ, աշխատել են ու ցուցադրել իրենց աշխատանքները: Հավաքածուի կատարելագործման աշխատանքներն ընթացել են Մարտիրոս Սարյանի, Հակոբ Սոզոյանի և Գաբրիել Գյուրջյանի անմիջական ազդակությամբ: Այսօր թանգարանում հին նմուշները 18-19-րդ դարի են, օրինակ՝ գաթանախիշներն ու դազերը, հիմնականում ներկայացված են 20-րդ դարի նմուշներ, որոնք բայի հավաքչությունից, հատուկ պատրաստվել են վարպետների կողմից ու նվիրաբերվել թանգարանին:

Ճիշտ չէր լինի Թանգարանում միայն ցուցանմուշներ ունենալ. չէ՞ որ ունենք նաև ազգային տոներ, որոնք մինչև հիմա շատերը գուցե նշում են, բայց չգիտեն դրանց բովանդակությունն ու խորհուրդը:
Ժողովրդական արվեստների թանգարանում մենք բոլոր տոներին անդրադառնում ենք եթե ոչ տոնելով, ապա գոնե առցանց հարթակում հրապարակումներով: Ժողովրդական արվեստը շատ լայն հասկացություն է, դրա համար մեր գործունեությունն էլ է շատ բազմակողմ: Մեր վերջին միջոցառումներից մեկն, օրինակ, նվիրել էինք Բարեկենդան և Տյառընդառաջ տոներին, որի ժամանակ ներկայացրել էինք հասարակության մեջ արմատացած թե՛ ժողովրդական, թե՛ կրոնական ավանդույթները:
Նման տոները մեզ մոտ ունեն ընդհանուր խորագիր՝ «Վերադարձ ինքնությանը»: Մենք տալիս ենք և՛ գիտելիք, և՛

գործնական կիրառություն, այսինքն՝ մեր միջոցառումների մասնակիցները սկզբում դասախոսության նման լսում են այդ տոնի մասին, հետո տեսնում դրա ծիսական բովանդակությունը, ցանկության դեպքում էլ մասնակից դառնում պարերին ու երգերին... Բարեկենդան և Տյառընդառաջ տոների համար համագործակցել էինք «Վարք հայոց» ավանդական երգի-պարի խմբի և ազգագրագետ Հարություն Փանոսյանի հետ: Ազգագրագետը ներկայացրել էր տոների խորհուրդը, իսկ խումբը՝ ծիսական հատվածը: Թանգարանի դրսում տոնի կապակցությամբ նաև խարույկ էինք վառել ու շուրջը պահպանել բոլոր ավանդույթները: Ի դեպ, Թանգարանի աշխատակիցներով մեր ժողովրդական վարպետների հետ նախօրոք նաև տիկնիկներ էինք պատրաստել՝ Բարեկենդանի խորհրդանիշ Ուտիս տատին և հաջորդիվ նրան փոխարինող Պաս պապին:

Սոն լինի, նշենք

Թանգարանում այս տարի յուրօրինակ կերպով նշել ենք նաև Սուրբ Սարգսի տոնը: Ինչպես Կաղանդի և Սուրբ Ծննդյան տոների ժամանակ, այդպես էլ այս անգամ ներկայացրել էինք տոնի խորհուրդն ու բովանդակությունը՝ ապահովելով որակյալ ուղիղ հեռարձակում Թանգարանից: Այս տոնի առիթով Դիլիջանի մեր մասնաճյուղից բերել էինք Երազանքների աթոռը, որպեսզի այն օգնի ամենահաս Սրբին հասցնել բոլորի իղձերը (ի դեպ, Աթոռը դեռևս մեզ մոտ է):
Այդ օրը Թանգարանի այցելուներն ունեցան թեմատիկ տաղավարներում անվճար լուսանկարվելու հնարավորություն (օրինակ՝ բամբակով գորգի վրա գրված «Երջանկություն նորապսակներին» ֆոնին): Ի դեպ, միջոցառման ընթացքում տեղի ունեցավ նաև ամուսնության անակնկալ առաջարկ. մեր հարկի տակ, կարելի է ասել, սկիզբ դրվեց մի նոր հայ ընտանիքի կազմավորմանը:
Տոնին ընդառաջ Թանգարանը նաև վաճառքի հանեց յուրօրինակ նվեր-փաթեթներ. միևնույն կանաչ-կարմիր թելով հյուսված ձեռագործ ճակատազարդ՝ կնոջ և թևնոց՝ տղամարդու համար, աղի բլիթներ, հայկական ավանդական փոխինդ և հալվա: Բոլոր տուփերին կցել էինք Սուրբ Սարգսին ուղղված ժողովրդական աղոթքներից մեկը, որը վերաբերում էր ամենահաս Սրբի՝ մեզ համար այդ օրերին շատ կարևոր գործառույթներից մեկին՝ գերիներին ազատություն պարգևելուն:
Մեր բոլոր միջոցառումների լսարանը շատ տարասեռ է՝ դպրոցականներ, մեծահասակներ, երիտասարդներ, ընտանիքներ, զույգեր... Գալիս են շատ տարբեր մարդիկ, կոնկրետ մի խումբ չէ, որ մշտապես մասնակցում է: Նման միջոցառումները սովորաբար բաց են ու անվճար, որովհետև հատկապես հիմա կարևորում ենք մեր ժողովրդին ազգային արժեքներին հաղորդակից դարձնելը:

ՄԵՆՔ ԿԱՐԾՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ՄԵՐ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՄԱՐԴԻԿ ԼԱՎԱԳՈՒՅՆՍ ԿԱՐՈՂ ԵՆ ՄՈՏԵՆԱԼ ԻՐԵՆՑ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆԸ

Մեկ անգամ փորձես, ֆան հայկար անգամ լսես

Մեզ մոտ յուրաքանչյուր էքսկուրսիա կամ միջոցառում յուրատեսակ մի արտ-թերապիա է դառնում, ու մենք զգում ենք, որ մարդիկ դրա կարիքն այսօր շատ ունեն: Փորձում ենք լինել շատ ակտիվ, որ ոչ միայն նմուշներ ցուցադրող մշակութային կառույց լինենք, այլև ակտիվ դերակատարություն ունենանք մարդկանց հասարակական կյանքում, որ նրանք մոտ լինեն իրենց ազգային ինքնությանը, ճանաչեն իրենց ու իրենց մշակույթը:
Շատ հաճախ տարբեր կրթական ծրագրեր ենք կազմակերպում ու հնարավորություն ենք տալիս ինքնուրույն ստեղծել մեր ցուցադրած ժողովրդական արվեստի նմուշները: Պատկերացրեք՝ ինչպիսի մեծ տարբերություն կա՝ եթե երեխան նայում է որևէ նմուշի պարզապես ցուցադրված վիճակում ու այդ նմուշն ինքնուրույն է փորձում ստեղծել: Այդպես մենք սովորեցնում ենք, օրինակ, գորգ գործել կամ գոնե հայկական հանգույցներին ծանոթացնել, կարպետագործության տեխնիկայով թևնոցներ պատրաստել, թաղիքից որևէ գեղեցիկ նմուշ ստանալ, փայտի վրա զարդանախշեր գունավորել...
Դիլիջանի մեր մասնաճյուղում հաջող փորձառությունից հետո Թանգարանում նաև ստեղծել ենք նոր ձևաչափ, երբ այցելուները կարող են մասնակից դառնալ մեկանգամյա կրթական-ժամանցային միջոցառման՝ կլոր սեղանի շուրջ հավաքվելով և համատեղ ստեղծագործելով իրենց ընտանիքի անդամների, ընկերների, գործընկերների հետ: Սա առանձնահատուկ մթնոլորտ է ստեղծում ժողովրդական արվեստին հաղորդակցվելու ճանապարհով առավել ջերմացնել միջանձնային, գործընկերային հարաբերությունները:
Մենք կարծում ենք, որ մեր Թանգարանում մարդիկ լավագույնս կարող են մոտենալ իրենց ազգային ինքնությանը, ճանաչել ու կրել այն, իսկ հետո փոխանցել սերունդներին: Այդ պատճառով հիմնել ենք նաև Թանգարանային դպրոց՝ «Ինքնության դարբնոց» անունով ու ամիսներ շարունակ տարբեր տարիքային խմբերի հնարավորություն ենք տալու մեզ մոտ թե՛ տեսական, թե՛ գործնական գիտելիք ստանալ, օրինակ, գորգագործությունից, փայտագործությունից, ասեղնագործությունից...

Ամալի Ռաչայրյան
Ժողովրդական արվեստների թանգարան

Ժամանակավոր, բայց մնայուն

ԵՐԵՎԱՆՆ ստուգել է ժամանակավոր ցուցադրությունների բազմազանությամբ և որակով աչքի ընկած Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տնօրեն Նիկոլայ Կոստանդյանի, համադրող Նայիրի Խաչատուրեանի և թանգարանագետ Մարինե Հարոյանի հետ և փորձել պարզել, թե ինչ առավելություններ ունի թանգարանում ցուցադրություն իրականացնելը:

↓ → «Հնչյուն և լռություն», 2017



Համադրող, գիտական խորհրդատու, ցուցադրության խորհրդատու, ձևավորող, ճարտարապետ. այսպիսի մասնագիտություններ ունեցող մարդկանց անունները հաճախ չէ, որ կարելի է հանդիպել Հայաստանի թանգարաններում իրականացվող ժամանակավոր ցուցադրությունների մասին պատմող տեքստերում: Պատճառները տարբեր են՝ ռեսուրսների և համապատասխան մասնագետների պակաս կամ էլ պատվախնդրության ավելցուկ թանգարանի աշխատակազմում ու էլի շատ բաներ: Այնուամենայնիվ, Կոմիտասի թանգարան-ինստիտուտում հիմնադրումից ի վեր կազմակերպվում և հաջողությամբ իրականացվում են ժամանակավոր ցուցադրություններ թանգարանի ամբողջ ներուժի օգտագործմամբ:

Համադրող Նայիրի Խաչատուրեանը պատմում է, որ 2015-ին Ֆրանսիայից տեղափոխվելուց հետո աշխատանքի անցնելով թանգարանում՝ առաջարկել է ռազմավարություն՝ ելնելով Կոմիտասի գործունեությունից (Կոմիտասը թե՛ ժառանգություն հետազոտող գիտնական և թե՛ ստեղծագործող արվեստագետ), ըստ որի տարվա մեջ երկու անգամ կազմակերպվեն ցուցադրություններ. ցուցադրություններից մեկը պետք է լիներ պատմական թեմաներին և հավաքածուներին նվիրված, որի շրջանակում թանգարանը կհամագործակցեր այլ պետական թանգարանների և մասնավոր հավաքորդների հետ, իսկ մյուսով կներկայացներ այսօր ստեղծագործող արվեստագետներին: Ըստ Նայիրիի՝ շատ կարևոր է ցուցադրությունների միջոցով կապ ստեղծել այսօրվա ստեղծագործողների հետ և ամբողջացնել շփումը հասարակության հետ, ինչը, ցավոք, հայաստանյան այլ թանգարաններ հիմնականում չեն փորձում անել: Նայիրին կարևորել է նաև ցուցադրության պատկերագրքի ստեղծումն ու տպագրումը: Նա նշում է, որ ձգտել են յուրաքանչյուր պատկերագրքի մոտենալ յուրովի՝ կախված ցուցադրության բովանդակությունից և ձևաչափից և արել այնպես, որ այդ երկլեզու պատկերագրքերը մտնեն գիտական շրջանառության մեջ և գիտական հիմք հանդիսանան ուսումնասիրողների համար: Այս մոտեցումները շարունակել է նաև հետագա տարիներին՝ համագործակցելով թանգարանի հետ արդեն իբրև ազատ համադրող 2019-ին:

2015-ին թանգարանում տեղի ունեցավ առաջին ժամանակավոր ցուցադրությունը՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին: Հաջորդը՝ նույն թվականին «Մողեռնից պոստմոդեռնն» էր: Գիտացուցադրական բաժնի հիմնումից հետո՝ 2016-ին, թանգարանը հյուրընկալեց Քեթրին Քուքի «Ծառերի հիշողություն» լուսանկարչական նախագիծը (համադրող՝ Նայիրի Խաչատուրեան), ինչպես նաև իրականացրեց «Կուտինայի հայկական հախճապակու արվեստը» ցուցադրությունը (համադրող՝ Նայիրի Խաչատուրեան): 2017-ին տեղի ունեցավ «Հնչյուն և լռություն» երաժշտական գործիքների արվեստին նվիրված ցուցադրություն (համադրող՝ Նայիրի Խաչատուրեան) ու «Ընտրանին», որը ցուցադրեց հայ կերպարվեստը մասնավոր հավաքածուներից: Նույն թվականին «Գոյնէն անդին» ցուցադրությամբ ներկայացվեցին ֆրանսիահայ արվեստագետ Ռուբէն Նաճարեանի մատիտանկարները (համադրող՝ Նայիրի Խաչատուրեան), իսկ 2018-ին տեղի ունեցավ «Հասկաքաղը»՝ նվիրված Կոմիտասի աշակերտ Միհրան Թումաճանի գործունեությանը (համադրող՝ Նայիրի Խաչատուրեան): 2019-ին Կոմիտասի 150-ամյակի շրջանակներում տեղի ունեցան Անուշ Ղուկասյանի և Վահրամ Գալստյանի «Կտոր-կտոր» ինստալացիան՝ ստեղծված հատուկ այդ ցուցահանդեսի համար՝ համադրողի հորդորով (համադրող՝ Նայիրի Խաչատուրեան) ու «Ապագայ մտածողը» ազդագրերի բացօթյա ցուցահանդեսը (համադրող՝ Նայիրի Խաչատուրեան): Հաջորդիվ տեղի ունեցան Կոմիտասի սաներին նվիրված «Ուսուցիչը» ցուցադրությունը (համադրող՝ Մարինե Հարոյան) և թանգարանի վերջին ցուցադրությունը՝ քանդակագործ Արա Հարությունյանի ստեղծագործությանը նվիրված «Կոմիտասից Կոմիտասը» (համադրող՝ Մարինե Հարոյան): Հաշվի առնելով, թե որքան երիտասարդ է այս թանգարանը՝ տպավորիչ է ցուցադրությունների քանակն ու բազմազանությունը, այնպես չէ՞:

Մեծ ընդանիք

Անշուշտ, համադրողն այն մարդն է, որ հետազոտում և ձևավորում է ցուցադրության հայեցակարգն ու կառուցվածքը, սակայն, ըստ Նիկոլայ Կոստանդյանի՝ դրա իրականացումն անհնար կլինի առանց թանգարանի ողջ ներուժի ներդրման: «Ցուցադրությունն իրականություն դարձնելու համար աշխատում ենք թիմով՝ միասին: Ներգրավում ենք թանգարանի աշխատակազմը, անհրաժեշտության դեպքում՝ թանգարանից դուրս այլ մասնագետների:



↑ «Գոյնէն անդին», 2017

↓ «Ծառերի հիշողություն», 2016

Համադրող, ձևավորող, ճարտարապետ, գիտական և տեխնիկական մասի պատասխանատուներ, խմբագիրներ և այլն. դա մի մեծ ընտանիք է, որը պետք է մի ձևով շնչի, մի ուղղությամբ նայի, միասին մի երկար ճանապարհ անցնի, որպեսզի ցուցադրությունն ի վերջո իրականություն դառնա: Առանց յուրաքանչյուրի աջակցության անհնար կլիներ,– նշում է Կոստանդյանը, ապա առանձնացնում գլխավոր հերոսին.– իսկ եթե փորձենք միայն մեկ հոգու անվանել, ով պատասխանատու է այս ամենի համար, ապա դա իհարկե Կոմիտասն է, որի շուրջ ձևավորվեց այս թանգարանը»:
Թանգարանագետ Մարինե Հարոյանը, որը հաճախ հանդես է գալիս որպես ժամանակավոր ցուցադրությունների խորհրդատու և համադրող, մեծապես կարևորում է տարբեր մասնագետների ներգրավումը թանգարանի ներսում իրականացվող ցուցադրություններին: Համադրող Նայիրի Խաչատուրեանն էլ, որը 2015-2018 թթ. ղեկավարել է Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտացուցադրական բաժինը, կարևորում է նաև թանգարանի տնօրենի մոտեցումներն ու աջակցությունն աշխատանքին: Ըստ նրա՝ տնօրենի և համադրողի միջև փոխադարձ վստահությունն ու համաձայնությունն աշխատանքի հաջողության գրավականն են:

Ամենը՝ Վարդապետի հետ կապված

Ըստ Նիկոլայ Կոստանդյանի՝ մեծ պատասխանատվություն է Կոմիտասի անունը կրող թանգարանում ցուցադրություն իրականացնելը: Այս տարածքն անհնար է ընկալել որպես պարզապես սրահ և տրամադրել ցանկացած ցուցադրության համար: Գիտական խորհրդի կողմից շատ խիստ հսկողություն է սահմանված ցուցադրության ստեղծագործական մտքի և գիտական հենքի հանդեպ: Կոմիտասի թանգարան-ինստիտուտում կազմակերպված բոլոր ցուցադրություններն այս կամ այն կերպ առնչվում են Կոմիտասի կյանքի ու ստեղծագործության հետ: Սա թանգարանի որդեգրած սկզբունքային մոտեցումն է: Մյուս կողմից՝ սկսած թանգարանի ճարտարապետությունից (շենքի հեղինակն Արթուր Մեսչյանն է) և հիմնական ցուցադրության ձևավորումից՝ Կոմիտասի թանգարան-ինստիտուտը փորձ է անում համադրել արդին և դասականը՝ ինչպիսին էր հենց Կոմիտասի ստեղծագործական գործունեությունը:

Առավելությունների մասին

Ժամանակավոր ցուցադրությունների կայացման գործին մեծապես նպաստում է թանգարանի հեղինակությունը, ռեսուրսը, բաժինների աշխատակիցների ներգրավվածությունը, ինչպես նաև համապատասխան կահավորմամբ սրահի առկայությունը: Ըստ Նիկոլայ Կոստանդյանի՝ թանգարան-համադրող կապն այս բոլոր առավելությունների պարագայում շատ ավելի լավ արդյունք կարող է տալ, չէ՞ որ համադրողն այլևս ստիպված չի լինում հոգալ այդ բոլոր խնդիրները: Կարևոր առավելություններից է նաև թանգարանային տարածքի անվտանգությունը, քանի որ այլ պետական թանգարաններից կամ մասնավոր հավաքածուներից բերված նմուշները հնարավոր է ցուցադրել միայն որոշակի անվտանգային և կլիմայական պայմանների առկայության դեպքում:
Մարինե Հարոյանն էլ հավելում է, որ թանգարանային առարկայի հետ աշխատելիս պետք է շարժվել հստակ կանոններով և սա թերևս թանգարանում ցուցադրություն անցկացնելու գործում ունի իր թե՛ դրական և թե՛ բացասական կողմերը: Նայիրի Խաչատուրեանը թանգարանում ցուցադրություն իրականացնելու առավելությունների մասին խոսելիս նշում է. «Քանի որ աշխատում ես հաստատության հետ, ձեռքիդ տակ ունես նրա ողջ համակարգը, գործիքակազմը, կապերը: Այդպիսով աշխատանքդ շատ ավելի համակարգված է լինում՝ ի տարբերություն այն դեպքերի, երբ անկախ համադրող ես

↑ «Կուպինայի հայկական հախճապակու արվեստը», 2016

և ստիպված ես շատ հարցերով ևս ինքդ զբաղվել ու ժամանակ վատնել»:
Նայիրին ևս մեծապես կարևորում է թանգարանի ողջ ներուժի օգտագործումը: Նա մասնավորապես շեշտում է գիտական բաժնի կարևորությունը. «Շատ կարևոր է աշխատանքում ներգրավել թանգարանի գիտական բաժինը, ինչպես նաև արխիվը, հանրային կապերի բաժինն ու մյուս աշխատակիցների ուժերը: Կոմիտասի թանգարան-ինստիտուտում հիանալի համագործակցություն եմ ունեցել թանգարանի գիտական բաժնի երիտասարդ ու շատ պատրաստված երաժշտագետների հետ՝ հետազոտությանն աջակցելու, տեքստերի խմբագրման և գիտական ճշգրտումներ անելու տեսանկյունից»: Ըստ նրա՝ շատ կարևոր առավելություն է նաև այլ թանգարանների հետ աշխատանքի դեպքում տարվող փաստաթղթաշրջանառության դյուրինությունը, որն ամբողջությամբ արվում է կրկին թանգարանի կողմից և համադրողին հնարավորություն տալիս կենտրոնանալ հետազոտական և ստեղծագործական գործընթացի վրա:

Հարմարվել նորմերի սահմանների մեզ

Անշուշտ յուրաքանչյուր աշխատանք ունի իր բարդ կողմերը թե՛ ֆինանսական, թե՛ տեխնիկական և թե ժամանակի ու մարդկային ռեսուրսների հետ կապված: Այստեղ կարևոր է հստակեցնել գաղափարը: Նիկոլայ Կոստանդյանը բացատրում է. «Մենք երբեք չենք եկել զումարից դեպի ցուցադրություն կամ տեխնիկական մասից դեպի ցուցադրություն: Մենք միշտ ելնում ենք գաղափարից, ձևավորված մտքից: Անկախ նրանից եղել է ռեսուրս, թե ոչ, մեր բոլոր գաղափարներն իրականություն են դարձել: Եթե սկսենք խնդիրներից, ոչինչ էլ չի ստացվի: Իհարկե, պետական թանգարանների դեպքում շատ ու շատ օրենքներ սահմանափակում և նորմավորում են ստեղծագործ մարդկանց, ստիպված ես տեղավորվել նորմերի մեջ, ու դրանց շրջանակում ունենալ հարաբերական ազատություն: Բայց յուրաքանչյուր աշխատանք ունի դժվարություններ, այլ կերպ անհնար է»:

Հ.Գ.

Զրույցի ընթացքում Մարինե Հարոյանը մեզ մի գաղտնիք ասաց. թանգարանում պատրաստվում են նոր ցուցադրություն: Պարզվում է, որ «Ուսուցիչը» ցուցադրությանը պատրաստվելու ընթացքում բացահայտվել է Կոմիտասի մեծ գրադարանը, որի մասին էլ ամենայն հավանականությամբ կպատմի հաջորդ ժամանակավոր ցուցադրությունը:

Հասմիկ Բարխուդարյան

Կոմիտասի թանգարան-ինստիտուտի արխիվ, Նայիրի Խաչատուրեանի արխիվ

Խնամակալները

Ինչո՞ւ ժամանակակից ոչ մի թանգարան չի կարող գոյություն ունենալ առանց համադրողների, որն է այդ մասնագետների՝ երբեմն այցելուների համար անտեսանելի դերակատարումը և ինչպիսին է մասնագիտության վիճակը Հայաստանում. ԵՐԵՎԱՆը հարցուփորձ է արել անկախ համադրող Էմմա Հարությունյանին և Գաֆէսճեան արվեստի կենտրոնի ցուցադրությունների գծով տնօրեն Արմեն Եսայանին:

Եկեք նախ փորձենք հասկանալ, թե ինչ է համադրողը: Ինչո՞վ եք զբաղվում դուք և ձեր գործընկերները, ինչ տարբերություն կա ձեր միջև:

Արմեն. Ես կսկսեի նրանից, որ հայերեն բառը մի փոքր խնդրահարույց է, որովհետև չիմացող մարդը կարող է կարծել, թե համադրողը պարզապես բառացիորեն համադրում է աշխատանքներն իրար հետ ու ստեղծում ցուցահանդեսը: Էդ իմաստով ավելի ընդգրկուն է միջազգային «կուրատոր» եզրույթը: Նաև իմաստ ունի նշելու, որ մեր պատկերացրած կուրատորական աշխատանքը ձևավորվել է ընդամենը վերջին 50-60 տարվա ընթացքում, սա շատ նոր երևույթ է ոչ միայն Հայաստանում, այլև աշխարհում:

→ *Արմեն Եսայանը*

Էմմա. Ընդհանրապես, կուրատոր, այսինքն՝ կուրատորություն անել՝ curare, նշանակում է հոգ տանել որևէ մեկի կամ ինչ-որ բանի մասին: Դրա համար Հին Հռոմում այսպես էին անվանում մարդկանց, ովքեր պատասխանատու էին հասարակական բաղնիքների համար, իսկ միջնադարում կուրատոր էին կոչում հոգևորականներին, ովքեր փրկում էին մոլորված հոգիները: Սա մի քիչ մոտենում է մեր ժամանակակից ֆունկցիային:

Արմեն. Հա, ըստ էության, մենք խնամակալն ենք մեզ հանձնված հավաքածուների: Ինչևէ, կուրատորները շատ տարբեր են: Կա ինստիտուցիոնալ համադրող, երբ դու կցված ես որևէ կոնկրետ կառույցին: Բայց էնտեղ էլ լինում են համադրողներ, որոնք զբաղվում են հետազոտական աշխատանքներով, մյուսները՝ կոնկրետ թեմաներով կամ ժամանակաշրջաններով: Ես, օրինակ, կցված եմ Գաֆէսճեան արվեստի կենտրոնին ու իմ գործունեության 95 տոկոսը կապված է էդ հաստատության հետ: Լինում են անկախ, ֆրիլանս կուրատորներ, օրինակ՝ Էմման: Նրանք աշխատում են տարբեր անհատների ու կազմակերպությունների հետ:

Իսկ ինչպե՞ս են դառնում կուրատոր:

← Էմմա Հարությունյան



→ «Աղբյուր» ֆանդակային դիզայնի պարագաների ցուցահանդես, համադրող՝ Էմմա Հարությունյան

Արմեն. Դե էդպես էլի... Համենայն դեպս էս պահին կուրատորներն ամենատարբեր ոլորտներից են մտել մասնագիտություն: Ես արվեստաբան եմ, ակադեմիական կրթություն ունեմ, Էմմայի հետ նույն ամբիոնում ենք սովորել, ի դեպ, ու ինձ համար կարևոր էր իմ սովորածին կիրառական իմաստ տալ: Ես իմ բնույթով այդքան էլ գիտնական չեմ՝ մաքուր ակադեմիական իմաստով: Սակայն միշտ ցանկություն եմ ունեցել ակադեմիական կրթության հիման վրա առավել պրակտիկ գործ անել, այդպես դարձա համադրող: Արդյունքում, մասամբ գիտական գործունեություն եմ ծավալում, մասամբ պրակտիկ, որոնք մեկմեկու լրացնում են:

Էմմա. Ամենաճիշտը կլինի ասել, որ կուրատոր դառնալու համար պետք է նայել, նայել և նայել: Պետք է անընդհատ լինել արվեստի մեջ ու հետ: Հա, ու գրել մտքերը, կոնցեպտները, անգամ եթե դրանք ոչ ոք չի կարդում: Ես անկախ կուրատոր եմ, թեպետ աշխատել եմ Հայաստանի մի քանի թանգարանների հետ: Ավաղ, երբեմն անգամ թանգարանների տնօրենները պարզապես չգիտեն, թե ով է կուրատորը, ինչու է նա պետք: Ինձ դիմել են որպես դիզայներ, կազմակերպիչ, կոորդինատոր, էն աղջիկ, ամեն ինչ, բացի կուրատորից: Էդ հասկացությունը պարզապես օտար է շատ թանգարանների համար: Դե իրականում սա էլ հասկանալի է, քանի որ արվեստի համադրողը գեղարվեստական ամենաերիտասարդ մասնագիտությունն է: Իրականում, ես էլ համադրող դարձա ոլոր-մոլոր ճանապարհով: Ուսումնասիրում էի միջնադարյան արվեստը, բայց նաև ժամանակակից արվեստն էր ինձ գրավում: Միջնադարյան արվեստի կանոնիկ ու միստիկ էությունը և ժամանակակից արվեստի անկանխատեսելի ազատությունը: Չէի ուզում հրաժարվել երկուսից էլ և սկսեցի ցուցադրել ժամանակակից արվեստագետներին՝ զուգահեռաբար գրելով հոդվածներ խորանային վարագույրների մասին: Ընդհանրապես, համադրող դառնալն իրոք կախված է մարդու խառնվածքից՝ անընդհատ պրպտելու ձգտումից: Ես որ գնում եմ ցանկացած ցուցադրության, ինձնից անկախ սկսում եմ ուսումնասիրել ցուցահանդեսի տրամաբանությունը, լուսավորությունը, պիտակի գտնվելու տեղը, անգամ տեքստի մեջ արված կետադրական սխալները: Պետք է ուզես լինել էդ բոլոր դետալների մեջ, կազմակերպել, համապարփակ հետևել պրոցեսին:

Արմեն. Շատ տիպիկ բան նշեց Էմման, մեր մասնագիտական անեծքն է՝ չես կարողանում ուղղակի հանգիստ ցուցահանդես նայել, սկսում ես մտածել՝ էս պատն ուրիշ գույն էր պետք անել, էն լույսն ուժեղ է, իսկ ինչ ֆոնտ են ընտրել, կարող է պետք գա, և այլն, և այլն:

Էմմա. Բայց սա սնոբություն չի, ամենայն լրջությամբ՝ ամենաչնչին դետալը կարող է փչացնել ամբողջ մտահղացումը:

Եթե փորձենք մի քիչ ավելի լավ պատկերացնել ներքին խոհանոցը, ինչպիսին է ձեր կուրատորական առօրյան:

Էմմա. Քանի որ ես անկախ կուրատոր եմ, ով միշտ չէ, որ կարելի է ասել ինքն է որոշում իր ժամանակացույցն ու առաջադրանքները, իմ սովորական առօրյան բաղկացած է փնտրտուքներից, հանդիպումներից, մտորումներից: Հետաքրքիր նոր վայրեր եմ որոնում, որտեղ կարելի է ցուցադրություն անել, պլանավորում եմ, թե երազանքիս որ ցուցահանդեսներն ինչպես կարելի է անցկացնել, հանդիպում եմ արվեստագետների հետ, հետազոտություն անում: Իսկ երբ բանը հասնում է կոնկրետ ցուցահանդեսին, ապա էդտեղ կուրատորն անում է բառացիորեն ամեն ինչ՝ սկսած թիմ հավաքելուց, ցուցահանդեսի կոնցեպտ մշակելուց մինչև ցուցափեղկերի մաքրությանը հետևելը: Թիմի պահը երևի թե ամենակարևորն է. ըստ իս, ամեն ցուցահանդես պիտի ունենա իր առանձին թիմը: Համաձայնեք, որ ստալինյան ռեպրեսիաների մասին ինստալյացիան և ժամանակակից դիզայնի ցուցահանդեսն իսկապես արմատապես տարբեր նպատակներ և գործիքակազմ ունեն:

Արմեն, իսկ ինստիտուցիոնալ կուրատորի դեպքո՞ւմ:

Արմեն. Մենք ունենք ցուցահանդեսային ծրագիր, որը կազմվում է նախօրոք՝ մոտ երկու տարվա կտրվածքով: Հիմնականում նախապատրաստական աշխատանքներ ենք տանում ու աշխատում ընթացիկ ցուցադրությունների վրա: Համագործակցություն արվեստագետների ու կազմակերպությունների հետ, զանգեր, պայմանավորվածություններ... Հենց հիմա մի իտալացի արվեստագետի ցուցահանդեսի բացումն ենք պատրաստում, ակտիվ աշխատում ենք դեսպանատան հետ, արվեստանմուշներն ենք ընդունում, և այլն, և այլն:

Որպես համադրող դու ներգրավված ես այդ ամենի մեջ:

Արմեն. Ընդհանրապես, կուրատորը, ըստ էության, տասնյակ գլխարկներ կրող մարդ է, եթե անգլերեն արտահայտությունը շատ կոպիտ թարգմանենք: Ստեղծագործություններ ընտրել, կոնցեպտ մշակել, տեքստն ու դիզայնը ղեկավարել, իլյուստրատիվ նյութերի ընդունում, լրատվականների հետ շփում՝ ամբողջ

պատասխանատվությունը կուրատորի վրա է լինում: Կա թիմ, իհարկե, մեր դեպքում ստաբիլ աշխատողներ, բայց ըստ էության, վերջնական պատասխանատուն կուրատորն է:

Իսկ համագործակցություն այլ կուրատորների հետ լինում են:

Արմեն. Այո՛, դա էլ մեր քաղաքականության մի մասն է: Վիգեն Գալստյանի հետ ենք աշխատել, Նայիրի Խաչատուրեանի, Նազարեթ Կարոյանի: Այս ցուցահանդեսի համար էլ արվեստագետ Ուգո Նեսպոլոն ունի կուրատոր Էրմենեջիլդո Ֆրիոնին, որը մեզ հետ զուգահեռ ներգրավված է: Մի խոսքով, սա անընդհատ գործընթաց է, հանդիպումներ, քննարկումներ, ընտրություն, փոփոխություն, վերլուծություններ և այլն: Շատ բաներ նախապես որոշված սրահում կարող են փոխվել: Ինստիտուցիոնալ ցուցահանդեսը նաև ավելի երկար ճանապարհ է անցնում, քանի որ բազում ինստանցիաներ են ներգրավված: Պատասխանատվությունն էլ մի փոքր ուրիշ է. բացի քո անձնական մոտեցումից, պիտի գիտակցես, թե ինչն է առաջնային ու կարևոր թանգարանի համար:

Կուրատորը փաստացի ցուցադրության հեղինակն է, ռեժիսորի պես մի բան:

Էմմա. Այո՛: Երևի մինչև հիմա սա ինձ համար ամենահամոզիչ համեմատությունն է:

Արմեն. Ավելին, վերջերս նույնիսկ խնդիր կա. 90-ականներից սկսած հայտնվեց այսպես կոչված՝ աստղային կուրատորների մի կաստա, երբ հենց համադրողն է առաջին պլան գալիս, մարդիկ հետաքրքրվում են առավել շատ ցուցադրությունը կազմակերպած անձով, ոչ թե ցուցադրվող գործերով: Եվ հիմա քննարկում են ծավալվում, թե ինչպես վերահիմաստավորել այդ ամենը: Օրինակ, կան կուրատորներ, ովքեր ուղղակի կարող են խառնվել արվեստագետի, կամ արվեստագետների ստեղծագործական պրոցեսին, ուղղություն տալ, հուշել: Ես ինքս դեռ այդտեղ չեմ հասել երևի, քանի որ փորձում եմ հնարավորինս անմասն մնալ, առաջին պլան չգալ, առավել շատ «թարգմանել», ներկայացնել արվեստը, բայց չխառնվել դրա ստեղծման պրոցեսի ու բովանդակության մեջ:

Ըստ էության, ամեն ցուցադրություն մի ճամփորդություն է՝ առաջին ցուցանմուշից մինչև վերջինը, որի քարտեզագրումն անում են համադրողները: Բայց արդյոք այդ քարտեզից ճի՞շտ են օգտվում: Եղել են դեպքեր, որ ես ինչ-որ թանգարանում մի ժամ քայլելուց հետո հանկարծ հասկացել եմ, որ լրիվ այլ հերթականությամբ եմ դիտում, քան նախատեսված էր...

Էմմա. Կարծեմ կուրատոր Լյուսի Լիպպարդի խոսքերը հրաշալի են նկարագրում համադրողին: Նա ասում է, որ համադրողը շամանի պես անդադար պտտվում է իր ստեղծած տարածության մեջ, էներգիա ստեղծում, բայց հենց սկսվում է ցուցադրությունը, նա վերանում է: Իր ստեղծած միջավայրը և կոնցեպտն արդեն կուրատորի ներկայության կարիքը չունեն: Ու հետո կգա ինչ-որ մի այցելու, կգտնի էն ամենամութ անկյունը, որը գուցե համադրողը հատուկ չի առանձնացրել ու անգամ երկրորդական է համարել, բայց դա կոնկրետ մարդու համար ամենաազդեցիկը կդառնա: Մեր մասնագիտության մեջ հենց սա է հրաշալի, որ կանխատեսումներն ավելորդ են:

Արմեն. Հա, գրեթե իրար հետ կարող են կապ չունենալ՝ ոնց ես դու նախատեսում ու պատկերացնում, ու ոնց է իրականում անցնում: Կամ նախատեսում ես ցուցադրության որոշակի ընթացք, ըստ այդմ, կոպիտ ասած, այդպես ես դասավորում հերթականությունը, հաշվարկում ես, թե որը որից հետո մարդիկ պիտի տեսնեն, ընկղմվեն բովանդակության մեջ, զգան ասելիքը: Բայց գալիս ու լրիվ այլ կողմով են շարժվում:

Էմմա. Միևնույն ժամանակ, էդ պատահականության էֆեկտին հասնելու համար պիտի էդ ողջ շամանությունը նախօրոք անես: Իսկ երբ բացվեց, արդեն վերջ, դու պիտի մտածես հաջորդ ցուցադրության մասին: Ամենաէյֆորիկ շրջանը նախապատրաստական աշխատանքներն են, իսկ հենց ցուցահանդեսը բացվում է ու այցելուները մտնում են, իմ էմոցիաները զրոյանում են, որովհետև էլ բան չկա անելու: Հենց այդ պահից ես մտքերով արդեն ուրիշ ցուցահանդեսի հետ եմ:

→ Լուսկու կուտիերի պիկնիկների թանգարան, Թումանյան քաղաք, Լոռի, համադրող՝ Էմմա Հարությունյան

↓ «Վարեն Օհանյան. Սևան», ԳԱԿ, համադրող՝ Արմեն Եսայան

Արմեն. Իմ մոտ միշտ լինում է էսպես. հենց ցուցահանդեսը բացվեց, առաջին րոպեին ես միանգամից հասկանում եմ, թե ինչն ուրիշ ձև կանեի: Ինչպես ճարտարապետության դեպքում են ասում, շենքից պիտի դուրս գաս, որ շենքը կողքից տեսնես, դրա պես մի բան:

Իսկ ունեք ցուցահանդեսի հաջողության գնահատման որևէ համակարգ:

Էմմա. Եթե երկրորդ անգամ են գալիս նայելու, մի բան էլ՝ եթե հետները մարդ են բերում և արդեն իրենք են սկսում գիդի կամ համադրողի դերը տանել, բացատրում են, մի նոր բան են բացահայտում:

Հաճա՞խ ես գնում երկրորդ անգամ:

Էմմա. Պատահում է, այո՛: Վերջերս երկու անգամ գնացել եմ Գաֆէսճեան՝ Կարեն Օհանյանի ցուցահանդեսին: Մի անգամ էլ իր արվեստանոց եմ գնացել:

Արմեն. Շատ են էդպիսի մարդիկ, կոնկրետ էս ցուցահանդեսին: Հաճելիորեն զարմացած եմ, որովհետև անակնկալ նախագիծ էր, համ էլ երեք նկարով ցուցադրությունը շատերի համար տարակուսանք էր, բայց հետո արդեն տեղն էր ընկնում...

Էմմա. Ես մի նկարի ցուցադրությանն էլ կգայի՜:

Որպես պարզապես թանգարանային այցելու՝ մի էսպիսի թեմա բացեմ. վերջերս շատ հաճախ լինում են ցուցադրություններ կամ ամբողջ



Թանգարաններ, որտեղ գուցե չկան բուն ֆիզիկական նմուշներ, այլ թեման ավելի շատ բացահայտվում է ինտերակտիվ լուծումներով: Չնայած մինչև վերջերս ինձ թվում էր, որ կարևորը մի ինչ-որ բացառիկ առարկայի համար են մարդիկ գնում-հասնում թանգարաններ...

Էմմա. Մեր իրականության պայմաններում լրիվ նորմալ եմ համարում, առավել ևս, որ հիմա շատ ցուցանմուշներ իրենք հենց էլեկտրոնային են: Կանդինսկին դեռ մի դար առաջ էր պնդում, որ երբ արվեստի գործն ունի ներքին բովանդակություն, ֆիզիկական ֆորման ամենևին կարևոր չի: Հիմա մեր ֆիզիկական ձևը մասամբ դարձել է էլեկտրոնային ու նորմալ է, որ արվեստն էլ է առապտացվում:

Արմեն. Ի վերջո, ցուցահանդեսում կարևորը ոչ թե նմուշն է, այլ այցելուն: Այցելուի դերը գնալով մեծանում է: Միևնույն ժամանակ այցելուն փոխվում է, ուզում է ներգրավված լինի, ինքն իրենով կարևոր ցուցադրություն, այլ կերպ ասած՝ ինտերակտիվություն է ուզում:

Էմմա. Օբյեկտիվորեն ժամանակի թելադրանք է, մի կամ երկու համադրողների քմահաճույքը չի: Էս առումով իմ սիրելի օրինակներից է Մոսկվայի Հրեական թանգարանը, որը գրեթե ամբողջությամբ ինտերակտիվ է՝ կարդում ես, լսում ես, եռաչափ պատկերներ ես դիտում: Քեզ ներգրավում են ու պատմում են պատմություն, որը շատ ազդեցիկ է: Ի դեպ, իրենց ժամանակավոր ցուցահանդեսներն էլ շատ թարմ ու դիպուկ են միշտ: Եկեք չմոռանանք նաև ժամանակակից կյանքի տեմպի մասին. մենք հիմա ապրում ենք շատ արագ կյանքով ու տեխնոլոգիական հնարքներով թանգարանները մեզ ուշադրությունն են ուզում ստանալ և համապատասխանել ռիթմին:

Ստացվում է՝ մարդու անձնական փորձառությունն է կարևորը՝ անկախ մեթոդներից:

Արմեն. Հաստատ: Թանգարան գնում են փորձառության հետևից: Այն, ինչ քեզ տալիս են թանգարանում, դու չես կարող հետդ տանել ու կիսել ուրիշների հետ: Նույնիսկ եթե ընկերոջդ հետ ես քայլում սրահներով, մեկ է՝ ամեն մեկն անհատական է զգում: Ու արդեն երկրորդական հարց է, թե քեզ էդ փորձառությունը ոնց են հասցնում՝ պատից կախած նկարո՞վ, թե՞ վիրտուալ իրականության ակնոցով:

Հիմա գլոբալից անցնենք լոկալի. ո՞րն է մեր թանգարանների ամենամեծ խնդիրը:

Էմմա. Չեք զարմանա, չէ՞, որ ասեմ՝ խնդիրները շատ-շատ են, բայց եթե պետք է նշել ընդհանուր մի բան, երևի դա մասնագետների և ինստիտուցիաների համագործակցության սղությունն է: Բոլորն առաջինը հիշում են ֆինանսական խնդիրները, բայց, կարծում եմ, ուժեղ թիմի ու կոնցեպտի պայմաններում, նույնիսկ ամենախելահեղ մտքի համար կարելի է գտնել գումար: Իսկ թանգարանները պիտի փոխվեն, բացվեն, և դա պարզապես մի օր լինելու է:

Արմեն. Աշխարհի բոլոր պետությունները մշակույթին ու թանգարաններին վերաբերվում են որպես բեռ: Դրա համար Արևմուտքում կան երկրներ, որոնք այս հարցը լուծում են մասնավոր սեկտորին ակտիվ ներգրավելով, լինում է՝ ծախսերի մինչև 40 տոկոսն իրենց վրա են վերցնում կորպորացիաները: Բայց դա էլ բնավ բարի կամքի դրսևորում չէ, պարզապես պետությունը դրա դիմաց հազար ու մի արտոնություն է խոստանում՝ գումարած, իհարկե, իմիջը: Արդյունքում շատ հաճախ ամենախոշոր ֆինանսավորողները շատ վատ իմիջով ընկերություններն են, օրինակ՝ British Petroleum-ը կամ Սակլերների ընտանիքը:

Եվ ինչ անել, որ մեզ մոտ իրավիճակը փոխվի:

Արմեն. Սկզբի համար գիտակցել խնդրի պատճառները: Ես, իրականում, չեմ կարող մեղադրել մեր պետական թանգարաններին պասիվության համար, քանի որ կա հսկայական օրենսդրական բաց: Մենք մինչև հիմա չունենք թանգարանների մասին օրենք: Մենք Գաֆէսճեանում անկախ հիմնադրամ ենք, պետության հետ կապ չունենք, ավելի ճկուն ու հանգիստ ենք աշխատում, բայց մենք էլ բոլորի պես կուրախանանք, երբ ոլորտը ոտքի կանգնի:

Էմմա. Ես հաճախ առնչվել եմ հայաստանյան թանգարանների հետ, ու միակ լուծումը տեսնում եմ նրանում, որ թանգարանների տնօրեններն ու աշխատակիցները պետք է դառնան թույն, առաջադեմ, վախերից ազատված, էդ համակարգի մեջ նախկինում ընդհանրապես չեղած, անընդհատ նոր համագործակցություններ ու հանդիսատես գրավող վառ մարդիկ:

Արմեն. Ոչ մեկ չի գնա: Գիտե՞ս ինչ աշխատավարձ են ստանում որպես պետական աշխատող: Ամենախոշոր ու կարևորագույն թանգարանների ղեկավարները: Ամոթ է նույնիսկ բարձրաձայնել էդ կոպեկների մասին: Ինչի՞ մասին է խոսքը... Ուզում եմ ասել, դա մի քայլով լուծվող հարց չէ, պիտի շատ մեծ համակարգային փոփոխություններ մտցվեն, ու պետք է սկսել հիմա: Բայց հիմա կարծես բոլորն ուրիշ խնդիրներով են տարված, չգիտեմ:

Էմմա. Դե դա էլ վախեցնում է: Ձվի ու հավի դիլեման: Կամ կգան նման մարդիկ ու կլինեն փոփոխություններ, կամ կմնանք սիստեմի փոփոխությանը սպասելով: Ես դեռ հավատում եմ, որ մարդիկ են փոխում սիստեմը:

Իսկ եթե լավի մասին խոսենք ամեն դեպքում: Ո՞րն է ձեր սիրելի թանգարանը Երևանում:

Էմմա. Սիրում եմ Պատմության թանգարանը: Միշտ կարող եմ գնալ: Բայց թարմ հիասթափությունս, ավաղ, էլի կապված էր էդ թանգարանի վերջին ժամանակավոր ցուցադրության հետ: Ի դեպ, մեծ խնդիր է էն, որ մարդիկ քաշվում են անկեղծ քննադատելուց ու քննադատվելուց, դա շատ խանգարում է ոլորտի առաջխաղացմանը: Ես գրեթե բոլոր թանգարաններն էլ սիրում եմ: Շատ ուրախացնում է, որ ունենք Yerevan Print Biennale, Գաֆէսճեան կենտրոն ու ակտիվացող կուրատորական համայնք:

Արմեն. Ես սիրում եմ նոր, հավես, ժամանակակից դեմքերի հետ ծանոթանալ, վերջինը Մերի Բաղալյանի ցուցահանդեսն էր Դալանում: Չգիտեի իրեն, հիմա արդեն կհետևեմ, տպավորված եմ: Ու մեր կենտրոնի հարևանությամբ Ռուսական արվեստի թանգարանում Վրուբելի շատ կարևոր ցուցահանդես է, հավաքել են Հայաստանում եղած բոլոր հնարավոր գործերը՝ 10-12 հատ: Ի դեպ, էլի թարմ տպավորություններից՝ երբ բացվում էր մեր վերջին ցուցադրությունը, այդ նույն օրը Երևանում կար ևս երեք ցուցահանդեսի շնորհանդես: Դա արդեն իսկ խոսում է որոշակի ակտիվության մասին, որը հատկապես ուրախալի է համավարակային պասիվությունից հետո, ու որոշակի հույս է ներշնչում, որ դրական փոփոխություններն ավելի մոտ են, քան պատկերացնում ենք: Ես ամեն դեպքում մշտապես փորձում եմ լավատես մնալ:

Արտավազդ Եղիազարյան
ԳԱԼ, Սոնոս Մարտիրոսյան, Էմմա Հարությունյան

Ձեռագրերի բժիշկները

ԵՐԵՎԱՆ-ի թիմը պկրկվել է Մատենադարանի նոր մասնաշենքով, կրուցել վերականգնողական բաժնի ղեկավար Գայանե Էլիազյանի և բաժնի այլ ձեռագրերի «բժիշկների» հետ:

Այստեղ ապրում է պատմությունը

Ես վեցերորդ դասարանի աշակերտ էի, երբ առաջին անգամ եղա Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում կամ, ինչպես ասում էինք երեխաներով, «Մատենում»: Հիշում եմ, որ չէի հասկանում, թե ինչի համար էր պետք ստիպել 26 երեխայի ճոճոան արևի տակ բարձրանալ այդ անվերջ թվացող աստիճանները, կանգնել մռայլ քարե քանդակների դիմաց, հետո անհասկանալի հանդիսավորությամբ մտնել մեծ փայտե դռներով, որոնց մասին դասղեկն ասաց. «Հենց այդ դռների հետևում ապրում է ձեր պատմությունը»: Մյուս զարմանքն արդեն ներսում էր՝ բարձր սյուները, պատկերները, մարդկանց ձայների և քայլերի արձագանքները: Բայց մի քանի րոպեից արդեն այնքան ցնցված էի տեսածովս, որ ամբողջ տարակուսանքս անցյալում մնաց: Իսկապես դժվար էր չզգալը, որ հենց այստեղ էլ ապրում է մեր պատմությունը՝ մեծ ու փոքր ձեռագրերի և մագաղաթների մեջ, մանրանկարչության, գույների և զարմացնող ձեռագրերի մեջ: Հաջորդ անգամ, երբ եղա Մատենադարանում, արդեն ավարտական դասարանում էի, սեփական աչքերով տեսա, թե ինչպես է այդ պատմությունը պահպանվում ու հասնում մեզ: Վերականգնողական բաժինն ուներ մեծ պատուհաններ: Այդ լուսավոր սենյակում ամենուր մագաղաթներ ու ձեռագրեր էին: Սեղանների մոտ նստած և կենտրոնացած աշխատում էին մասնագետները բժշկական համազգեստ հիշեցնող խալաթներով, բայց նրանց «հիվանդը» մարդը չէր, այլ՝ գիրքը:

Եվ ահա ես վերադառնում եմ նոր մասնաշենքի այն կախարդական անկյունը, որտեղ տարիներով պատրաստված մասնագետները սեփական ձեռքերով բուժում են ձեռագրերն ու հոգատարությամբ պահպանում դարերի խորքից եկած պատմությունը:

Ձեռագրերի բժիշկները

«Վերականգնողական բաժնի աշխատանքի հիմքում չվնասելու գաղափարն է: Մենք, ինչպես և բժիշկները, իրավունք չունենք սխալվելու, քանի որ կարող ենք կորցնել հիվանդին»,– ասում է բաժնի ղեկավար, գիտությունների թեկնածու Գայանե Էլիազյանը, որը ղեկավարում է Մատենադարանի վերականգնողական բաժինն արդեն ավելի քան երկու տասնամյակ: Ընդ որում, դեպի ձեռագրեր անցումը կատարել է բնական գիտություններից. մասնագիտությամբ քիմիկոս է: Նրա խոսքով՝ մինչ այստեղ աշխատելը Մատենադարանի մասին իր պատկերացումները սահմանափակվում էին դպրոցական տարիներին տեղի ունեցած մեկ կամ երկու այցերով: Սակայն, երբ եկավ այստեղ և ծանոթացավ աշխատանքին, ամբողջությամբ ներքաշվեց:

Ասում է՝ թեև մասնագետները շատ բարձր վարձատրություն չեն ստանում, շատ քչերն են հեռանում իրենց մոտից, քանի որ ձեռագրերի հետ աշխատելիս մոռանում ես քո առօրյա հոգսերն ու դժվարությունները՝ բացելով «դռնակը» մեկ այլ՝ բոլորովին տարբեր մի աշխարհ: Տեղի մասնագիտական

↑ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան վերականգնողական բաժնի ղեկավար Գայանե Էլիազյանը

բառարանում «դոնակ» է կոչվում կազմի այն հատվածը, որը ծածկում է թերթերը գրքի բացման հատվածից՝ պաշտպանելով դրանք: Մասնագետներից մեկի՝ Լուսինե Մարգարյանի խոսքով, այդ «դոնակները» հոգևոր իմաստ ունեն՝ դրանք համարվում են դուռ դեպի դրախտ: Հենց այդ դոնով էլ մասնագետները մուտք են գործում այլ իրականություն և ցանկանում են անընդհատ վերադառնալ այնտեղ:

Սիսելով փորջը

Այսօր ռեստավրացիոն բաժինն ինքնուրույն է վերապատրաստում իր մասնագետներին, բայց 1959 թվականին, երբ բաժինը դեռ նոր էր բացել իր դռները, մասնագետները վերապատրաստվում էին Մոսկվայում և Պետերբուրգում, իսկ արդեն ԽՍՀՄ փլուզումից հետո հնարավոր դարձավ մեկնել նաև Եվրոպա, Ամերիկա և վերապատրաստումն անցնել այնտեղ:

Այսինքն՝ կարելի է ասել, որ իր գործունեության տասնամյակների ընթացքում կառույցը ձևավորել է լուրջ մասնագիտական հիմք և գիտելիք՝ համեմված միջազգային փորձով: Հենց այդ գործնական գիտելիքի հետևից են այսօր Մատենադարան վերապատրաստվելու գալիս մասնագետներ տարբեր երկրներից՝ Ռուսաստանից, Ֆրանսիայից, Շվեյցարիայից, ԱՄՆ-ից և այլն: Իրենց հերթին՝ Մատենադարանի մասնագետները մեկնում են այլ երկրներ սեփական գիտելիքը կիսելու նպատակով:

Ամենաուշագրավ այցերից մեկը, ինչպես նշում է տիկին Էլիազյանը, Սիրիայի Հալեպի առաջնորդարանում պատահական հայտնաբերված հայկական գրքերի հավաքածուի հետ էր կապված. «Շուրջ 70-80 տարի զմռսված է եղել Սրբոց Քառասնից Մանկանց Մայր եկեղեցում: Երբ որոշել էին վերանորոգել եկեղեցին, պատը քանդելիս ձեռագրերը դուրս էին թափվել: Այդ ժամանակ մեզ կանչեցին: Շատ վատ վիճակում էին գրքերը: Մկներն ու բորբոսն իրենց գործն արել

ՔՋԵՐՆ ԵՆ ՀԵՌԱՆՈՒՄ ԻՐԵՆՑ ՄՈՏԻՑ, ՔԱՆԻ ՈՐ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼԻՍ ՄՈՌԱՆՈՒՄ ԵՍ ՔՈ ԱՌՕՐՅԱ ՀՈԳՍԵՐՆ ՈՒ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

էին»: Հայ մասնագետների թիմը տեղում սկսեց աշխատել, ախտահանեցին և նույնիսկ մասնակի նորոգեցին ձեռագրերը, սակայն Սիրիայում վրա հասավ պատերազմը և աշխատանքը մնաց կիսատ:

Բացի այդ, հնարավորություն եղավ Երուսաղեմի պատրիարքարանի աջակցությամբ ռեստավրացիոն բաժին հիմնել: Մինչև քովիդային համավարակը, նրանք հաճախ էին լինում այնտեղ, սակայն գլոբալ մեկուսացումը թույլ չտվեց շարունակել աշխատանքը: Այսօր շատ փոքր թիմով աշխատանքները Երուսաղեմում շարունակվում են:

Քայլ առ քայլ

Երբ մտնում ես ռեստավրացիոն բաժնի լուսավոր սենյակը, քեզ թվում է՝ հայտնվել ես բժշկական լաբորատորիայում. սրվակներ, տարատեսակ նյութեր, գործիքներ, որոնք շատ

← Վերականգնողական բաժնի աշխատակիցները մաքրման և լրացման աշխատանքներ կատարելիս

← Ձեռագրերի առազնային և վերականգնված կարբերակները

↓ Ռեստավրացիայի համար նախապատրաստված գործիքները

հաճախ հիշեցնում են վիրահատական պինցետն ու լանցետը: Մասնագետները՝ բժշկական խալաթները հագին, ընկղմված են աշխատանքի մեջ: Բոլորի դեմքին կա դիմակ, բայց, ի տարբերություն մնացած մարդկանց, առաջին պատճառը ոչ թե համավարակային պայմաններն են, այլ ձեռագրին որևէ վնաս չհասցնելը. այստեղ դիմակներ կկրեն նաև քովիդից հետո: Այսպիսով, ցանկացած ձեռագիր, որը գալիս է Մատենադարան, նախ և առաջ հայտնվում է ռեստավրացիայի բաժնում, որտեղ անցնում է «բժշկական զննություն». առաջին գործնական քայլը կոնսերվացումն է՝ փոշեհանում, ախտահանում: Մասնագետները սկսում են ուսումնասիրություններ կատարել, որպեսզի հասկանան՝ արդյոք նյութն ախտահարվա՞ծ է, թե ոչ, արդյոք թերթերի վրա հայտնվել են սնկեր կամ բակտերիաներ:

Տասնամյակների ընթացքում օգտվելով և վերծանելով Մատենադարանում առկա հնագույն ձեռագրերը՝ մասնագետները դուրս են բերել բնական բույսերից պատրաստված հականեխիչ և բուժիչ թուրմերի բանաձևեր (ու կրկին թվում է, թե խոսքը բժշկության ու կենսաբանության մասին է, ոչ թե հին ձեռագրերի):

Ստացված թուրմերն օգտագործում են, օրինակ՝ սնկերի աճը կասեցնելու համար: «Աշխարհում դեռ չկա մի նյութ, որն ընդհանրապես կվերացնի սնկերը և հաճախ սխալ պայմաններում պահելու հետևանքով նրանց աճն ակտիվանում է,– ասում է տիկին Էլիազյանը,– սակայն այս թուրմերի միջոցով հնարավոր է որոշակի չափով կասեցնել նրանց աճը: Բնականաբար, մենք չենք խոսում Մատենադարանում պահվող գրքերի մասին, քանի որ այստեղ կան բոլոր անհրաժեշտ պայմանները ճիշտ պահպանում իրականացնելու համար»: Խոսքը Մատենադարանի ֆոնդ ներդրված նոր ձեռագրերի մասին է, որոնք մինչև բացահայտվելը վատ պայմաններում են գտնվել, որոշները եկեղեցիների պատերի մեջ, մարդկանց տներում, գոմերում և նույնիսկ ջրհորներում:

Կոնսերվացիայի փուլից հետո, եթե կրկին հայտնաբերվում են սնկեր, ապա ձեռագիրը թերթային բուժում է ստանում, այսինքն՝ էջ առ էջ, թերթ առ թերթ կրկին այդ թուրմերի միջոցով մաքրվում է:

Հաջորդ փուլն արդեն ձեռագրում օգտագործված թանաքի և ներկերի վիճակի ուսումնասիրությունն է, հատուկ մասնագիտացված մանրադիտակների միջոցով: Ինչո՞վ է կարևոր այս ուսումնասիրությունը: Հաջորդ ամենամեծ խնդիրը թանաքների թթվակերությունն է: Ձեռագրերը սխալ պայմաններում պահելու հետևանքով, խոնավությունից այդ թանաքները կարող են ակտիվանալ և աշխատել ի վնաս թղթի, «ուտել» նյութը և արդյունքում հնարավոր է տեքստերի հատվածներ կորսվեն:

«Նախկինում Մատենադարանը համապատասխան սարքավորումներ չի ունեցել և ստիպված պիգմենտների նմուշներն ուղարկվել են արտասահման, ինչը զգալիորեն դժվարացրել է աշխատանքը,– ասում է տիկին Էլիազյանը,– այսօր, ունենալով անհրաժեշտ գործիքակազմը, Մատենադարանն ինքն է ուսումնասիրում միջնադարյան ձեռագրերի ներկերը, պիգմենտները, թանաքները»:

Վերածնունդ

«Բուժումից» հետո հասունանում է հենց վերականգման պահը: Բաժնում մեր հայտնվելու պահին մասնագետներից մեկը հեռացնում էր հին սոսինձը, որպեսզի հետագայում հատուկ նախատեսված թղթով վերականգնի թերթերի

→ Ձեռագրերը մաքրման ընթացքի մեջ

կորուստները: Ռեստավրացիոն աշխատանքում օգտագործվող թուղթը մեկ այլ պատմություն է: Ամբողջ աշխարհում դրանք պատրաստվում են թթազգիների ծառերի ճյուղերի միջոցով: Դա բավական թանկ հաճույք է և պարբերաբար դեֆիցիտ է առաջանում:
Մատենադարանն այդ թղթերը սովորաբար ձեռք է բերում Ճապոնիայից, վերջերս նաև գերմանական տարբերակ է հայտնվել: Բացի այդ, բաժնի մասնագետները փորձել են հասարակ թթի ծառից ինքնուրույն ստանալ այդ թղթերից: «Գերմանիայից ժամանած մասնագետը, որն այդ թղթերի պատրաստման մեկ շաբաթանոց վարպետության դասեր անցկացրեց մեր մասնագետների համար, ասաց, որ Մատենադարանն ունի բոլոր կարողությունները սեփական թղթեր պատրաստելու համար: Այստեղ միակ խնդիրը ֆինանսական ներդրումն է»,- նշում է բաժնի ղեկավարը:
Լրացվելուց և ռեստավրացիայից հետո գիրքը հավաքվում է նոր կազմով: Կարևոր է նշել, որ մասնագետները պարտավոր են պահպանել ձեռագրի պատմական տեսքը, փոփոխություններ անել չի թույլատրվում: Կազմի տախտակը, կարի ձևը, աստառը, գրքի միացումը տախտակների հետ՝ ամբողջը պետք է արվի նույնությամբ: Հայկական կազմարվեստը շատ առանձնահատուկ մշակույթ է և շատ կարևոր է, որ ռեստավրացիայի ժամանակ այն չխախտվի: «Սերունդները սովորում են իրենց նախնիներից, ու, եթե մենք սխալվենք, ինքնությունը կկորչի»,– ասում է տիկին Էլիազյանը:
Մասնագետները նաև չեն խառնվում ձեռագրերի գունային լուծումների մեջ, պարզապես ամրացնում են դրանք, որպեսզի այդ պահից սկսած գույնը չթափվի և մնա այնպիսին, ինչպիսին եղել է, երբ հայտնաբերվել է:

Երաշխիքի հերևիկ

Վերականգնողական բաժնի մասնագետ Լիլիթ Բաչաչյանի համար ռեստավրատոր դառնալն անհաս երազանքի նման մի բան էր: Նա մասնագիտությամբ նկարչուհի է և հենց այդ ուղղվածությամբ էլ դասավանդել է, բայց միշտ երազել է մի օր «բարձրանալ վերև՝ Մատենադարան»: Նրա խոսքով՝ այստեղ աշխատանքը երբևէ ձանձրալի չի լինում, քանի որ մի մասնագետը սկզբից մինչև վերջ տանում է ձեռագիրը՝ անցնելով բոլոր փուլերը:
Բնականաբար, իրական ձեռագրերի հետ աշխատելու համար պետք է բավարար ժամանակ անցնի, մասնագետը փորձ ձեռք բերի: Գալով ռեստավրացիոն բաժին՝ նորաթուխ մասնագետը սկսում է իր աշխատանքը հասարակ գրքերից, հետո գուցե հնատիպ գրքերի անցնի, վավերագրերի և այլն: Դա տևում է շուրջ երկու տարի, և մի պահից մասնագետին սկսում են վստահել հին ձեռագրերի տարբեր մասեր: «Մեծ երջանկություն է, երբ վերջապես հասնում ես ձեռագրին,– ասում է Լիլիթը,– դա շատ պատասխանատու պահ է, սկսում ես գիտակցել, որ քեզ արդեն վստահում են»:

ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ ՊԱՀՊԱՆԵԼ ՁԵՌԱԳՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՔԸ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆԵԼ ՉԻ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ

Տիկին Էլիազյանի խոսքով՝ ռեստավրացիայի մասնագետը պետք է գլուխ ունենա և խիղճ: Ղեկավարը չի կարող անընդհատ կանգնել աշխատողի գլխին և գուցե նորաթուխ մասնագետը որոշի սեփական խմբագրումներն անել: Բացի այդ, ձեռագրերում օգտագործվող թանաքները ջրալույծ են, ու եթե անփույթ աշխատես, դա կարող է բավական վատ ավարտ ունենալ:

Դրախտ կանող դռները

Ներկայումս Լիլիթ Բաչաչյանն աշխատում է 17-րդ դարի ճաշոցի (եկեղեցական ծեսերի ընդհանուր բնութագիր) վրա, որը գրվել է Վանում՝ Աղթամար կղզում: Լիլիթի նախնիներն էլ Վանից են, այնպես որ պատասխանատվությունը կրկնապատկվում է: Նա արդեն ախտահանել և փոշեհանել է ձեռագիրը, անցել է կոնսերվացիայի բոլոր փուլերով և այժմ փազլի պես, էջ առ էջ վերականգնում է թերթերը: Այնուհետև նյութը կհայտնվի հատուկ մամլիչի տակ, որտեղ կխոնավեցվի և կհարթեցվի, որպեսզի թերթերը միասեռ դառնան: «Հետագայում գուցե գույնով զգացվի տարբերությունը, սակայն փակ աչքերով երբևէ չես հասկանա, որ դա այլ թղթի կտոր է»,– վստահեցնում է Լիլիթը:
Հաջորդ քայլը՝ կարն ու կազմը, արվում է միջնադարյան մեթոդով, հայկական ձեռագրերին բնորոշ ցորենահյուսքով: Մամուլ առ մամուլ դրվում են ակոսի տեղերը, նշվում են հիմքի թելերի տեղադրման վայրերը, հետո ցորենահյուսով միացվում իրար՝ օգտագործելով վիրաբուժության մեջ կիրառվող կորաձև ասեղ: Վերականգնվում են կազմն ու փայտե տախտակները, աստառը, կապիչները, դռնակը:
Եվ ահա, ձեռագիրը կրկին պատրաստ է բացել իր դռները դեպի դրախտ:

Մարգարիտ Միրզոյան
Հրանտ Ռաչայրյան

Արարատն ու սեփական ինքնության բանալին

Պապրմություն այն մասին, թե ինչպես է ARARAT թանգարանն օգնում մեկ նայել երևանյան թանգարաններին զբոսաշրջիկի աչքով ու այդպես ավելի լավ ճանաչել ինքներս մեզ, իսկ հետո հպարտանալ հայկական կոնյակի մրցանակների բազմաթիվ հավաքածուով:

Եվ ծագում է արևը

Կիզիչ երևանյան արևից պատսպարվել հաջողվեց ARARAT թանգարանի զով սրահում: Ճիշտ է՝ այստեղ գալու համար առիթ պետք չէ, բայց այս անգամ այցը պատահական չէր. Երևանի կոնյակի գործարանի շենքում, որը նույնքան ճանաչելի Երևանի խորհրդանիշ է, որքան լեգենդար կոնյակները՝ Հայաստանի սիմվոլ, տոնում էին Արարատի հերթական միջազգային հաղթանակը: Լեգենդար կոնյակների համաշխարհային հռչակը վաղուց նորություն չէ բոլորիս համար, ըստ այդմ՝ արդեն սովորականի պես են ընկալվում նաև հաղթանակները բազում ցուցահանդեսներում: Հիմա դրանք արդեն այնքան շատ են, որ մի առանձին թանգարանային ցուցահանդես են կազմում: Եվ այսպես, վայելում ենք զովն ու սկսում զննել մեդալների ու դիպլոմների ընտրանին...

«Եվ ծագում է արևը» խորագրով ցուցահանդեսում արևը չի այրում, այլ պայծառ շողշողում է տասնյակ մեդալներով ու հաղթական հպարտությամբ: Նմուշների շարքում են այնպիսի մրցանակներ, ինչպիսիք են լեգենդար հայկական կոնյակի առաջին դիպլոմը՝ նվաճած 1907 թվականին Ֆրանսիայում, «Դվին» կոնյակի հաղթանակները և ARARAT-ի վերջին մրցանակը՝ ստացած Ծագող արևի երկրում: Որպեսզի պատումն ավելի ամբողջական լինի, այստեղ ներկայացնում են նաև պատմական կոնտեքստը, պատմում այն մարդկանց մասին, ովքեր ստեղծել են լեգենդար կուպաժներն ու Հայաստանին մրցանակներ ապահովել: Մի խոսքով, հպարտանալու առիթ տվող մի ցուցադրություն:

Գտնել բանալին

Ի դեպ, հպարտության մասին: Մի քանի շաբաթ առաջ այս նույն շենքից մի ճամփորդություն սկսվեց, որ ստիպեց ինձ զգալ ինչպես երջանիկ զբոսաշրջիկ: Թանգարանների միջազգային օրվա նախաշեմին էր, երբ ARARAT թանգարանը մի խումբ լրագրողների համար կազմակերպեց շրջայց երեք երևանյան թանգարաններով՝ ճիշտ այնպես, ինչպես կանեինք, եթե լինեինք Ֆլորենցիայում կամ Բեռլինում, երբ ուզում ես մի օրում տեսնել ինչ հնարավոր է, առանց ոտքերը խնայելու: Այդպես, Երևանի կոնյակի գործարանի մուտքի մոտ նստում ենք մինիվենն ու սլանում դեպի Ժողովրդական արվեստների թանգարան:

Մինչ մինիվենը կհաղթահարեր Պլանի գլուխ տանող խցանումները, Երևանի կոնյակի գործարանի հասարակայնության հետ կապերի մենեջեր Զարուհի Սարիբեկյանը հարցիս, թե ինչու հենց այս ձևաչափը, ինչու հենց այս թանգարանները, պատասխանում է. «Որովհետև ARARAT թանգարանը, որպես Թանգարանային միջազգային խորհրդի անդամ, ուզում է ցույց տալ, որ մեր թանգարաններում կարելի է գտնել սեփական ինքնության բանալին»: Հարցեր չկան, փոխադրամիջոցը հասավ կանգառ:

Շուշեցի Բադամյանց Շուշանիկի սոխակը

Թանգարանի տնօրենը, ի դեպ, ARARAT թանգարանի նախկին զբոսավար Լուսինե Թորոյանն է, այնպես որ մեր անցումը կոնյակից դեպի ժողարվեստ հնարավորինս սահուն է անցնում: Իսկ շրջայցը թանգարանի սրահներում մոռացնել է տալիս դրսի տապը, աղմուկն ու անհանգստությունները: Այստեղ մենք տուրիստ ենք, մեր գործը ցուցանմուշներով զմայլվելն է ու զբոսավարին անվերջ հարցեր տալը:

Զբոսավարուհին, ի դեպ, քառասուն տարվա փորձով (նա այստեղ է թանգարանի բացման օրվանից), ներկայացնում է անհավանական թվացող գաթանախշիչները՝ հայկական գաթաների մակերեսները գեղեցկացնող կավե կնիքներ, հմայիլներ չարի դեմ, գդալնոցներ, որոնցում պահվում էր ուղիղ այնքան գդալ, որքան տան անդամների թիվն էր: Թվում է՝ մանրուքներ են, բայց ամեն ժողովրդի հիրավի ճանաչելու համար պետք է մոտիկից տեսնել նրա կենցաղային արվեստը: Մեր ժամանակներում ստեղծած աշխատանքները նույնպես կարևոր են, քանի որ, ըստ էության, շարունակում են անցած ժամանակների ավանդույթները: Եվ ովքե՞ր են այդ վարպետները. հաշվապահ մետաղագործը վերաիմաստավորում է Վան-Վասպուրականի դպրոցը, իսկ օդաչու փայտագործը ստեղծում շլացուցիչ փայտե քանդակներ:

Դուրս գալուց առաջ ցնցող տպավորություն է թողնում շուշեցի Բադամյանց Շուշանիկի ասեղնագործած ոսկեգույն սոխակը: Կարո՞ղ էր արդյոք հեռավոր 1908 թվին Շուշանիկն այս աշխատանքը ստեղծելիս մտքի ծայրով ենթադրել, թե ինչեր են սպասում իր քաղաքին հաջորդ տասնամյակներում... Չեմ հարցրել, բայց ենթադրում եմ, թե մեր խմբի անդամներն ինչ երազանք են պահում հազարաշեն կամարի երդիկի տակ դրված Երազանքների փայտյա աթոռին նստող գործընկերներս:

← «Եվ ծագում է արևը» յուցահանդեսը ARARAT թանգարանում

← «Արա Հարությունյան. Կոմիտասիկ Կոմիտաս» ցուցադրությունը՝ Կոմիտասի թանգարան-ինստիտուտում



↓ Կոնյակի գործարանի շենքի էսքիզն ու Միկոյանի մակագրությունը

Հետո այդ նույն երդիկի տակ մի գավաթ հայկական սուրճ ենք խմում, թարմանում ու սլանում դեպի մյուս թանգարանը: Այն նվիրված է մարդու, ով ամբողջ կյանքը նվիրել է հայ ժողովրդին ճանաչելուն ու մեզ բոլորիս այդ ճանաչումը փոխանցելուն:

Կոմիտասիկ Կոմիտաս

«Արդեն քանի տարի է աշխատում եմ Կոմիտասի կերպարի վրա... Տարիներ շարունակ կրկին ու կրկին վերադարձել եմ այդ նվիրական կերպարին, որի կյանքն ու ճակատագիրն այնքան սերտորեն կապված են մեր ժողովրդի ճակատագրին». Արա Հարությունյանի այս խոսքերը, որ դաջված են պատին, կարծես հակիրճ բնութագրում են Կոմիտասի թանգարան-ինստիտուտում անցկացվող ապշեցուցիչ ցուցահանդեսը: Այստեղ՝ մի քանի տարի առաջ բացված թանգարանի սրահներից մեկում, կարելի է ծանոթանալ քանդակագործի կոմիտասյան որոնումին 1954 թվականի դիպլոմային աշխատանքից, որն ի վերջո տեղադրվեց Պանթեոնում՝ Վարդապետի շիրիմի վրա և որը կարելի է տեսնել թանգարանից մի քանի քայլ անելով, մինչև 1988-ին կոնսերվատորիայի դիմաց կանգնեցված հայտնի քանդակը: Այդ երկուսի միջև՝ երեք տասնյակ աշխատանք՝ էսքիզներ, փորձեր, գծագրեր ու մատիտանկարներ: Ֆանտաստիկ զգացողություն է, երբ քայլում ես, իսկ չորս կողմից քեզ է նայում Կոմիտասը՝ տխուր, խոր, գեղեցիկ հայացքով: Ու չես էլ կասկածում, որ Հարությունյանն այդ տասնամյակների ընթացքում կարողացել է բռնացնել իրական Կոմիտասին, Կոմիտասի իրական հոգին: Իսկ երբ դահլիճի խորքում, թանգարանի յուրահատուկ զանգակատան ներքևում տեղակայված կիսանդրու հետ ես հանդիպում հայացքներով, տեսնում ես նրա վրա ընկած լույսի մի շողը, իսկ երգչախումբը կատարում է կոմիտասյան երգեր...

Հասկանում եմ

Կոմիտասից պոկվելը դժվար է, բայց պետք է: Մեր արարատյան ավտոբուսը սլանում է դեպի երրորդ նշակետը՝ Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության թանգարան, որտեղ անցկացվում է Հովհաննես Մարգարյանի 120-ամյակին նվիրված ցուցահանդեսը: Այո, առավոտյան մենք չմտանք կոնյակի գործարանի՝ նրա նախագծած շենքը, բայց ահա ունենք հնարավորություն մոտիկից զննելու նրա ժառանգությունը: Մարգարյանը, ինչպես մեզ պատմում է թանգարանի տնօրենը՝ Երևանի մեծ գիտակ Մարկ Գրիգորյանը, այն մարդկանցից էր, որ 20-30-ական թվականներին եկել էին նոր Հայաստան ու նոր Երևան կառուցելու: Պատերից կախված գծագրերին նայելով մտածում ես՝ օհ՜, երանի այս բոլոր նախագծերն իրագործված լինեին, կունենայինք ֆանտաստիկ, դեպի ապագան հպարտ քայլող քաղաք... Հետո հասկանում ես, որ այդ անհավանական թվացող կառույցները ստեղծվել են, կառուցվել են, նրանք փոխել են Երևանի դեմքը, պարզապես... կիսատ են մնացել, կամ այնպես են աղավաղվել, որ նախնական գծագրերին նայելով չես կարող նույնացնել: Օրինակ՝ Մանկական աշխարհի սլացիկ շենքը, որ կարծես Նյու Յորքի համայնապատկերից վերցրած լինի, շախմատաձև պատշգամբներով բնակելի շենքը, որ խորհրդային կոնստրուկտիվիզմի գոհարների մեջ կարող էր լինել, Երրորդ մասի լեգենդար բնակելի համալիրը՝ ռոմբավոր պատուհաններով ու ներքին բակերի շատրվաններով... Չնայած այսօր այս բոլորը հեռու են հեղինակի նախնական գաղափարից՝ կցակառույցներ, առաջ բերված տարածքներ, փակված պատշգամբներ և այլ ահավոր բաներ, միևնույն է, դրանք մնում են մեր ամեն օրվա, բայց իրականում մեզ ոչ մինչև վերջ հայտնի Երևանի ինքնության կարևոր մասնիկները: Լավ է, որ կոնյակի գործարանի բախտն է բերել այդ առումով. 1950-ականներին կառուցված շենքը պահպանվել է իդեալական վիճակում: Համեմատության համար կարելի է ուսումնասիրել ցուցահանդեսի վերջին հատվածում ներկայացվող գծագրերը, էսքիզներն ու լուսանկարները: Դրանցից ամենահիշարժանը, թերևս, գործարանի շենքի վերջնական էսքիզն է՝ ԽՍՀՄ արտաքին առևտրի մինիստր Անաստաս Միկոյանի մակագրությամբ: Կապույտ մատիտով արված հակիրճ գրությունն ասում է. «Հաստատում եմ»:

Մենք էլ, մեր հերթին, արդեն Phoenix Bar-ում մեկական գավաթ Ararat Coffee ըմպելով և օրվա հարուստ տպավորություններն իրար հետ կիսելով, հաստատում ենք՝ երջանիկ են այն զբոսաշրջիկները, որ այսպես գալիս ու բացահայտում են Հայաստանն ու հայերին: Եվ երանի մենք էլ ավելի հաճախ այսպիսի զբոսանքներ կատարենք ինքներս մեզ ավելի լավ ճանաչելու համար: Թող Ուֆֆիցին ու Պերգամոնը մի քիչ էլ սպասեն, մենք մեզ մոտ էլ շատ բան ունենք տեսնելու:

Արտավազդ Եղիազարյան
Երևանի կոնյակի գործարան

Էրեբունի. պեղումը՝ կեղում

Մենք երկար մտածում էինք, թե ինչ նոր կեսանկյունից խոսենք միակ ու անկրկնելի Էրեբունի արգելոց-թանգարանի մասին և, ի վերջո, որոշեցինք առազադրանքը հանձնել մեր այն միակ թղթակցին, որ երբեք չէր եղել այնտեղ, որտեղից սկսվում է Երևանի պատմությունը: Ինչպես պարզվեց, նա, ավաղ, միակը չէ, որ տարբեր պատճառներով երբևէ չի եղել Արգիշտի Ա-ի հին տներում:

↑ Էրեբունի ամրոցի պատերը



→ Արա Հարությունյանի ֆանդակներից մեկը՝ թանգարանի պատին

Բարև՛, սիրելի Արգիշտի

Թանգարան այցելությանս ճանապարհին մտածում եմ, որ ես ընդհանրապես իսկական երևանցի չեմ կարող կոչվել, որովհետև թանգարանում լինելու էի առաջին անգամ: Երևի այդ պատճառով էր, որ հենց սկզբից սա նման չէր սովորական թանգարանային այցելության: Նախապատրաստվել էի այնպես, ասես գնում էի կարևոր ժամադրության՝ հագուստը, մազերը, կոշիկներն ու պայուսակը հատուկ ընտրված էին: Չէ՞ որ պետք է աչքովս տեսնեի պատմությունը, որի կրողն էլ ես եմ, մեկ էլ դու (երևի): Եվ ահա, երթուղայինի վարորդն ինձ հուշում է, որ թանգարանի կանգառում ենք: Իջնելուն պես իմ առջև Արգիշտի Ա-ի քարե քանդակն է և դրա ետևում դեպի թանգարան տանող աստիճանները: Բարև՛, սիրելի Արգիշտի:

Թանգարանի ներսում՝ մինչ տնօրենի հետ հարցազրույցս, հետևում էի մի քանի օտարերկրացի զբոսաշրջիկների, ովքեր անցնում էին ժամանակավոր ցուցադրության սրահով և շուտով թանգարանի ընդունարանը լցվում է հիացական բացականչությունների արձագանքներով: Այնքան ոգևորիչ է, որ ուզում եմ շտապել ու միանալ իրենց ու տուրիստի աչքերով նայել այս ժառանգությանը, բայց ճիշտ ժամանակին հիշում եմ, որ ես այստեղ նաև առաջադրանք ունեմ կատարելու: Այն է՝ զրուցել թանգարանի տնօրեն Միքայել Բաղալյանի հետ:

2750-ամյակից ի վեր

Պարոն Բաղալյանն իր ճանապարհն Էրեբունիում սկսել է կրտսեր գիտաշխատողից, իսկ հիմա արդեն ղեկավարում է կառույցը: Այժմ ինձ հետ ուրախությամբ կիսվում է ձեռքբերումների, հաղթանակների և դժվարությունների մասին, որոնք այս տարիների ընթացքում դարձել են թանգարանի և իր պատմությունը:

Այստեղ յուրաքանչյուր աշխատակից, ինչպես և տնօրենը, առանձնահատուկ ձայնային շեշտադրմամբ են խոսում արդեն հեռավոր 1968 թվականի հոկտեմբերի 19-ի մասին, երբ Երևանի 2750-րդ տարեդարձին ընդառաջ պաշտոնապես բացվում է թանգարանը և սկիզբ դրվում մեզ արդեն քաջ հայտնի Էրեբունի-Երևան տոնախմբությանը, տոնախմբությունն էլ իր հերթին ծնում է տասնյակ, եթե ոչ հարյուրավոր երգեր՝ նվիրված հին ամրոցին ու դրա շուրջ ծավալված քաղաքին:

Բայց 68 թիվը վաղուց էր, իսկ այսօր ավելի կարևոր է նկատել խնդիրները: Պարոն Բաղալյանը ցավով նշում է. «Պատկերացնում եք, թանգարան այցելուների թվի մեջ գերակշռում են օտարերկրացիները, քան տեղացիները, քանի որ շատերն անգամ չգիտեն, որ Երևանում նման թանգարան գոյություն ունի, ուր մնաց խոսելը Կարմիր Բլուր և Շենգավիթ մասնաճյուղերի մասին»: Հիշեցի, որ ես էլ մինչ այժմ այստեղ չէի եղել: Փաստորեն, ես մենակ չեմ, այս դեպքում՝ ավաղ: Ներկայումս թանգարանի գործունեությունը միտված է խթանելու նաև կրթական, մշակութային տարաբնույթ ծրագրերի իրականացմանը, որոնք, ըստ պարոն Բաղալյանի, մեկ կարևոր առաքելություն ունեն. «Մինչև այս պահն իրականացրած կրթական, մշակութային ծրագրերն ուսուցանում են խնամատարության գաղափարը, ըստ որի անհրաժեշտ է հատուկ խնամք տանել պատմական հուշարձանների և պատմամշակութային արժեքների նկատմամբ: Այս ճանապարհով ձևավորվում է պատասխանատվության զգացում սեփական արժեքներն ու պատմությունն արժանապատվորեն կրելու համար»:

↑ Հայտնի սեպագիր արձանագրության հատվածներից մեկը

Նմանօրինակ նախաձեռնություններից է 2012 թվականից Թանգարանում իրականացվող «Պատանի հնագետ» դպրոցը, որի շրջանակներում երկու ամիս շարունակ պատանիները հնարավորություն են ստանում ուսումնասիրելու ուրարտական և նախաուրարտական դարաշրջանները, իսկ գործնական հատվածում մասնակիցները կարողանում են ծանոթանալ պեղումներ իրականացնելու հմտություններին: Այս պարապմունքներն անցկացվում են Թանգարանին կից արհեստական պեղավայրում, որը տեղակայված է դեպի ամրոց տանող ճանապարհին:

Անդադար պեղումներ

Հետո զբոսնում ենք: Եթե դուք էլ իմ պես դեռ չեք եղել Երեբունիում, նախօրոք զգուշացնում եմ՝ այստեղ անհրաժեշտություն կա ծանոթանալու ներսի և դրսի հատվածներին՝ առանձին: Զգացողությունները միանշանակ տարբեր են: Ներսի սրահներում ապակե ցուցափեղկերի տակ գտածո ցուցանմուշներ են ներկայացված, իսկ դրսում Երեբունի ամրոցի տարածքն է, որտեղ ամեն քայլափոխի նախ ամաչում ես, որ այդ ամենը տեսնում ես առաջին անգամ, հետո մտավախություն ես ունենում, թե ժամանակդ չի բավականացնի կարգին ծանոթանալու համար:

↑ Եզթարդարար այսպիսի տեսք է ունեցել Արգիշտի Ա-ն

Երեբունի ամրոցի տարածքում պեղումները սկսվել են դեռևս 1890-ականներից և որոշակի դադարներով հասել մեր օրեր, մինչև նախորդ տարվա սկիզբ, երբ համավարակը խանգարեց բոլորին ու ամենուր: Սակայն 2021-ին աշխատանքները կրկին վերսկսել են, ինչը սեփական աչքերովս տեսա քիչ անց. «Այս տարի հայ-ֆրանսիական համատեղ արշավախումբը նախատեսում է պեղումներ իրականացնել ոչ միայն Երեբունի ամրոցի ներսում, այլ նաև շրջակայքում՝ Երբեմնի բանուկ հատվածում: Ներկա պահին սպասում ենք համապատասխան թույլտվության՝ մեկնարկելու մեր աշխատանք-

↓ Հայոց անողոք վանդալիզմի հետքերը

ները,– ոգևորությամբ պատմում է տնօրենը, երևում է, որ վաղուց գործող արգելոցում նորանոր հայտնագործություններ անելու հնարավորությունը մինչև հիմա անհավատալի է թվում ամենափորձառու մասնագետներին նույնիսկ,– այժմ աշխատում ենք առանձնացնել այն հատվածները, որտեղ նախատեսում ենք ուսումնասիրություն իրականացնել: Հուրախություն մեզ, այս տարի հայկական կողմը վերջապես կարողացել է համաֆինանսավորող լինել՝ օժանդակելու պեղումների ընթացքին՝ ի տարբերություն նախորդ տարիների»:

↑ Ամրոցի հիմնադրման մասին ևս մի ֆանի արձանագրություն

Երևանի ծննդյան վկայականն ու շլայուցիչ Կակուլին

Թանգարանն այժմ ունի երկու ցուցադրություն՝ մշտական և ժամանակավոր: Դեպի հիմնական ցուցադրություն մեր թիմին ուղեկցում է Թանգարանի աշխատակիցներից Ռուբենը, որն այստեղ զբաղվում է նաև Էրեբունու ամրոցի կառույցների եռաչափ վերակազմմբ: Աստիճաններով դեպի վեր

↑ Կանայի զարդերին նվիրված ժամանակավոր ցուցադրությունը

↓ Թանգարանի ամենահայտնի նմուշներից՝ եղջերագավաթները, մ.թ.ա. IV դար

և մեր առաջ ընդարձակ սրահն է, որտեղ ցուցադրված են Վանի թագավորության քարտեզը, Էրեբունի ամրոցի մանրակերտը, Էրեբունու տարածքից պեղված սեպագիր արձանագրությունները: Քիչ է մնում կրկնեմ քիչ առաջ հանդիպած արտասահմանցի զբոսաշրջիկների հիացական բացականչությունները, չնայած դրանք միմյանցից կտարբերվեն՝ չէ՞ որ սրանք բոլորն իմ պատմության մասնիկներն են:
Շուտով կանգ ենք առնում Երևան քաղաքի ծննդյան վկայականի՝ Արգիշտի Ա արքայի թողած արձանագրության մոտ (այն բաղկացած է մի քանի քարերից, սա դրանցից մեկն է միայն) և Ռուբենի օգնությամբ մեր հայացքները սահում են ինչպես կարգն է՝ ձախից աջ և վերևից ներքև: Երբ Ռուբենին խնդրեցի վերծանել սեպագրերի նշանակությունը, գաղափար անգամ չունեի, որ արտասանած յուրաքանչյուր բառից հետոյի լռությունը սրահում գտնվողներիս կտանի ինչ-որ տեղ և այցը շարունակելու համար մի քանի րոպե կպահանջվի: Հասկանալու համար, թե ինչպիսի զգացողություն է դա, հարկավոր է միայն հայտնվել ցուցասրահի այս մասում: Սրահում խորանալով դեպի աջ՝ առանձին ցուցափեղկերով ներկայացված են Ուրարտուի ճարտարապետությանն ու կերպարվեստին բնորոշ ցուցանմուշներ, որոնցով զարդարվել կամ պատվել են պալատական սրահների պատերը, ոռոգման և ամրաշինական համակարգեր, ինչպիսիք են ջրամատակարարման տուֆե խողովակները, որոնք ծառայել են դեպի ամրոց ջուր մատակարարելու գործում, շինարարական և կենցաղային տեխնիկա՝ ցորենից ալյուր ստանալու և այլ տնային գործողություններ կատարելու համար, որմնանկարչության, խեցեգործության նյութեղեն ցուցանմուշներ, այգեգործական առանձին ցուցանմուշներ՝ հացահատիկեղենի տեսքով, կավե սափորներ, ռազմական նշանակության գործիքներ, հանդերձանքներ, զրահներ, նետեր և այլ ցուցանմուշներ:
Իսկ ահա ժամանակավոր ցուցադրությունն այս պահին նվիրված է կանացի զարդերին, որոնք ցուցադրված են ազնվական կնոջ կերպարի վերականգնված տարբերակով՝ բրդյա կարմիր և ոսկեգույն շրջազգեստով, որի վրա իջնում է ագաթից պատրաստված վզնոցը: Ձեռքում ոսկե կոթով հովհար է, որի բնօրինակն ըստ երևույթին պատկանել է Ռուսա Երկրորդի կնոջը՝ Կակուլիին: Կակուլիի լուքը տպավորիչ է նույնիսկ այսօր, հաստատ կցնցեր համացանցը, եթե Ինստագրամ ունենար: Խիստ աղջկական զգացողություն է, երբ որևէ կնոջ փոխարեն պատկերացնում ես ինքդ քեզ:

Հենց նույն զգացողությունն ինձ մոտ էր, երբ ցուցասրահից տեղափոխվեցի պալատական սրահ, որտեղ ես 1 ու 76 հասակով, ագաթե վզնոցով և կարմիր շրջազգեստով անցնում եմ դեպի պալատի հաջորդ սրահ (չարաճճի միտք՝ տեսնես ի՞նչ կպատահեր, երբ նախկին սերերիցս մեկն ինձ կանացի այս զգեստով ու զարդերով նկատեր)։

Գագոն, Անուլիկը և սովեպմությունը

Այսպիսով, անցնելով Թանգարանի հիմնական և ժամանակավոր ցուցադրությունների սրահներով՝ մենք քայլում ենք դուրս՝ ուղևորվելով դեպի բուն Երեբունու ամրոց։ Ճաղավանդակների բացվելուն պես իմ ձախ կողմում արհեստական պեղավայրն է, որտեղ պատանի հնագետները շերտ առ շերտ ավազն առանձնացնում են գտածոյից ու իրենց զգում ինչպես իսկական պրոֆեսիոնալներ։
Իսկ արդեն պարիսպներից ներս, երբ մոտենում ենք Խալդ աստծո տաճարին, հասկանում եմ, թե ինչու են հույժ կարևոր բոլոր այն ծրագրերը, որոնք միտված են երեխաներին կրթելուն ու սեփական ժառանգությունը գնահատելը սովորեցնելուն։ Որովհետև ես չէի գալիս Երեբունի, որպեսզի խեղճ Խալդին նվիրված սրբավայրի պատերից պարզեի, որ Գագոն սիրում է Անուլիկին, իսկ Խաչիկը եղել է այստեղ 95 թվին։ Մինչ Ռուբենը ներկայացնում է այս և այլ գրությունները (կարծես դրանք արդեն սերտաճել են պատմական կառույցին ու իրենք իրենցով արդեն ցուցանմուշ են՝ հայոց անողոք վանդալիզմի սիմվոլներ), մտքովս անցնում է, որ գուցե ավելի լավ է մարդիկ անտեղյակ լինեն հնագույն ամրոցի մասին, ալարեն գալ այս Թանգարանը, տեղը չիմանան, քան գան հասնեն ու այսպիսի հետքեր թողնեն։ Երբեմն սերը թաքուն պիտի մնա, Գագոն թող սիրեր Անուլիկին առանց մեզ ներքաշելու։

↓ Ամրոցի մանրակերպը թանգարանում

Ընդհանուր տեղեկություն

Էրեբունի պետական արգելոց թանգարանի հասցեն է՝ ք. Երևան, Էրեբունի փ. 38, թանգարանն աշխատում է երեքշաբթիից մինչև կիրակի, ժամը 10:30-ից մինչև 16:30-ը: Չափահասների կոմսը՝ 1000 ՀՀ դրամ, ուսանողներինը՝ 300 ՀՀ դրամ: Էքսկուրսիան հայերենով արժե 2000 ՀՀ դրամ, օտար լեզվով 2500 ՀՀ դրամ:

↑ Արգելոցում մինչ օրս շարունակվում են պեղումները

Ամրոցի երկրորդ՝ Սուսիի տաճարում կարելի է նկատել գրեթե նույն պատկերը: Արդեն չեմ զարմանում... Մեր ուղեկից Ռուբենը, սակայն, հավաստիացնում է, որ թանգարանն այսօր հոգում է վանդալիզմից խուսափելու խնդիրը՝ միջոցառումներ ձեռնարկելով պահպանելու ամրոցի երբեմնի տեսքը: Նոր պատանի վանդալները սրանից հետո լավ կանեն իրենց մտքերն ու զգացողություններն արտահայտեն դրան ավելի հարմարեցված թվային՝ սոցցանցային պատերին: Բայց անհատական վանդալիզմից բացի կա մեկ ուրիշ խնդիր. Խորհրդային Միությունից մնացած բետոնային վերակառուցումը, որն աղավաղում է ամրոցի իրական պատկերը: Հիմա էլ անզեն աչքով կարելի է տեսնել որտեղ է իրական ուրարտական պատը, որտեղ՝ «սովետմիությունը», ինչպես նկարագրեց մեր ուղեկցորդը:

Վերջինը չլինի

Ջննելով ամրոցի հիմնական հատվածները՝ մենք հայտնվում ենք դիտահարթակում, որտեղից մեր առջև բացվում է այն քաղաքը, որ սկիզբ է առել այս պատերից՝ Էրեբունի, Նոր Արեշ, Մասիվ Թաղամասերով: Այս հատվածում մեզնից յուրաքանչյուրը ձեռքի սահուն շարժումով ցույց է տալիս իր շենքն ու ասում՝ սա էլ իմ տունը, իսկ մեր հետևում Էրեբունի բերդաքաղաքն է, բոլորիս երբեմնի տունը, որն ունի խնամքի ու հոգատարության կարիք:

Իմ առաջին այցն Էրեբունի արգելոց-թանգարան ավարտվեց: Վերջինը չլինի... Համենայն դեպս, այստեղից ես հեռանում եմ որպես (արդեն) իսկական երևանցի և կարող եմ այսուհետ երևակայել, որ գրեթե արժանի եմ վարդագույն քաղաքի սիրուն:

Շուշանիկ Փափազյան
Հարություն Մալխասյան

Ելքը՝ հուշանվերների խանութով

ԵՐԵՎԱՆը մտել է Երևանի մի քանի թանգարաններ և դուրս գալիս գնել է հուշանվերներ (300-7000 ՀՀ դրամի սահմաններում): Ներկայացնում ենք մեզ ամենից շատ դուր եկած թանգարանային հուշանվերները:

Թանգարան, իհարկե, գնումներ կատարելու համար չեն այցելում և հարկ է լինում հավելյալ միջոցներ ձեռնարկել թանգարանի խանութն ավելի գրավիչ դարձնելու համար: Թանգարանային խանութները ժամանակի հետ ավելի ու ավելի ակտուալ են դառնում: Ամբողջ աշխարհում ջանք չեն խնայում դրանք հնարավորինս եկամտաբեր դարձնելու համար: Մագնիսներ, էջանիշեր, կախազարդեր, պայուսակներ, ալբոմներ, գրքեր ու էլի լիքը բան, որոնք այցելուին հնարավորություն են տալիս ավելի մոտ լինել այն ամենին, ինչ տեսել է թանգարանում ու չեղարկում ցուցադրված նմուշների հանդեպ անհասանելիի ու «չի կարելիի» զգացողությունը:
Իսկ ի՞նչ են վաճառում մեր թանգարաններում: ԵՐԵՎԱՆը մի քանի թանգարան է այցելել ու գնումներ կատարել՝ փորձելով պարզել, թե ինչ խանութներ կան, և թե ապրանքատեսականու ու արժեքների ինչ բազմազանություն կա: Պետք է խոստովանենք, որ բազմազանության մասին խոսել չենք կարող: Ցավոք, որպես կանոն, թանգարանային խանութ ասելով՝ նկատի ենք ունենում տոմսարկղին կից մի անկյուն և ոչ առանձին ու ինքնուրույն տարածք: Վաճառվող որոշ իրեր, իհարկե, հետաքրքրական են, սակայն մեր թանգարանները միանշանակ ավելի մեծ վիզուալ ու բովանդակային ներուժ ունեն, որը գրեթե չի օգտագործվում: Ինչևէ, իրեն հարգող ցանկացած այցելուի պես մենք էլ չէինք կարող դատարկաձեռն վերադառնալ մեր այցերից:

1. **Բաժակի տակդիրներ՝ Ռաֆայել Իսրայելյանի էսքիզներով**
   Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ
2. **Էջանշան**
   Եղիշե Չարենցի տուն-թանգարան
3. **Մետաքսագրություն սահմանափակ քանակով, Արա Հայթայան, «Ձայնային իմպրովիզացիաներ», 2021**
   Գաֆէսճեան արվեստի կենտրոն
4. **Բաժակի տակդիրներ**
   Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան
5. **Դիմակ**
   Երվանդ Քոչարի թանգարան
6. **Հուշամեդալ Հակոբ Մեղապարտի պատկերով**
   Գրատպության թանգարան
7. **Բուժիչ էլիքսիր «Որդան կարմիր»**
   Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան
8. **Կրծքանշան**
   Երվանդ Քոչարի թանգարան
9. **Մագնիս**
   Սերգեյ Փարաջանովի թանգարան
10. **Փոստային բացիկ**
    Երևանի ժամանակակից արվեստի թանգարան
11. **Ձեռագործ գորգ**
    Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան
12. **Փայտե ձեռագործ հմայիլ**
    Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան
13. **Հովհաննես Թումանյանի հեղինակած հայկական հանելուկների խաղ**
    Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան
14. **Բաժակ**
    Ռուսական արվեստի թանգարան
15. **«Համատարած աշխարհացույց», առաջին հայալեզու տպագիր աշխարհի քարտեզի կրկնօրինակ**
    Գրատպության թանգարան

Հարություն Մալխասյան

Մենք ենք մեր կինոն

2020-ին Հայաստանի ազգային կինոկենտրոնը տնօրեն Շուշանիկ Միրզախանյանի զանգերի շնորհիվ վերզապես ունեցավ կինոժառանգության բաժին, որը սպանգնեց թե՛ հավաքչական և թե՛ պահպանման, վերականգնման ու վերաշուկայադրման բարդ գործառույթներ: Նորաստեղծ բաժնի ղեկավարն արվեստաբան, կինոյի պատմաբան և համադրող Վիգեն Գալստյանն է, որի հետ ԵՐԵՎԱՆը զրուցել է հայկական կինոժառանգության հիմնախնդիրների, «Հայֆիլմ»ի տարածքից գտնված ու փրկված ահռելի նյութի ու հայկական կինոթանգարանի ստեղծման հեռանկարների մասին:

← Վիգեն Գալստյանը

Ասում ենք «Հայֆիլմից» փրկված նյութեր, իսկ ինչ է դա նշանակում, ինչու՞ փրկված: Իրոք դժվար է պատկերացնել աղետի ծավալը, մինչև որ սեփական աչքերով չես հասնում այն վայրը, որտեղ ժամանակին բաբախել է հայ կինոյի սիրտը: Հենց մուտքի մոտ՝ ստուդիայի գլխավոր շենքի ֆասադից դիմավորում է լղոզված մի հետք՝ միանգամից ճանաչելի Սասունցի Դավթի արձանի պատկերից է մնացել: Դա «Հայֆիլմ» կինոստուդիայի տարբերանշանն է, որով սկսվում են մեր և ձեր սիրելի, հայտնի ու ոչ այնքան հայկական կինոնկարները: Հայ կինոյի ուրվական:

Բայց հետոն շատ ավելի վախենալի է: Առաջին հարկը դեռ ոչինչ, իսկ այ մոնտաժի ու ձայնագրման բաժինները կարծես հոլիվուդյան աղետ-ֆիլմերից դուրս պրծած լինեն, պարզապես շատ ավելի իրական են: Փայտե դռան մեծ ծխնիների ճռռոցի ներքո մտնում ես ներս ու ակամայից մտածում՝ երկրաշարժ չի եղել, չէ՞, ու ոչ էլ պայթյուն: Երկար միջանցքի աջ ու ձախ կողմերում նախկին կինոստուդիայի լքված ու աղբակույտի վերածված աշխատասենյակներն են: Հատակին՝ փոշու մեջ, մի կարճ, վնասված ժապավեն գտա, կադրում Կարպ Խաչվանքյանն էր (պահել եմ ինձ, ոչ մեկին չասեք): Որոշ սենյակներում դեռևս պահպանվել է աշխատանքային դասավորությունն ու տեխնիկան:

Համատարած փոշու և աղբի մեջ այնուամենայնիվ կային սենյակներ, որտեղ ժապավենները ոչ թե լցված էին մի կույտի մեջ, այլ խնամքով դասավորված էին: Ազգային կինոկենտրոնի կինոժառանգության բաժնի աշխատանքի արդյունքն է: Դժվար է պատկերացնել, թե ինչպես է հնարավոր եղել աշխատել այդ պայմաններում, բայց մեր կինոյի փրկարարներն իրենց գործը լավ գիտեն:

↑ Փրկված պաստառները՝ Ազգային պատկերասրահի ռեստավրացիոն բաժնում

← Արդեն փրկված ու դասակարգված ժապավենները

ԴԺՎԱՐ Է ՊԱՏԿԵՐԱՑՆԵԼ, ԹԵ ԻՆՉՈՒ ԵՎ ԻՆՉ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ Է ՈՉՆՉԱՑՎԵԼ ԿԻՆՈՍՏՈՒԴԻԱՅԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԻ ՄԵԾ ՄԱՍԸ

Կինոժառանգության նորաթուխ բաժինը

Վիգեն Գալստյանը երկար տարիներ զբաղվել է կինոյի պատմությամբ և կինոյի ժառանգության հարցերով: Տարիների փորձը ցույց է տվել հայկական կինոյի պատմության ու ժառանգության պահպանման համար ինստիտուցիոնալ մոտեցման անհրաժեշտությունը: Ըստ Վիգենի՝ կինոն ամբողջացնում է ինքնության հավաքական կերպարներ, օգնում հասկանալ, թե ով ենք մենք և թե ինչ արժեքների շուրջ է կառուցված մեր հասարակությունն առհասարակ: Եվ, ինչպես Վիգենն է ասում, եթե ազգային կինոն մեր արդի ինքնության մասը չի կազմում, ուրեմն ինչ-որ մի բան այն չէ ու պետք է աշխատել այն ուղղությամբ, որ մեր հասարակությունն իրապես ճանաչի և ընդունի հայկական կինոն:
Վիգենի հետ, որպես բաժնի աշխատակիցներ, նորաստեղծ բաժնում գործի անցան Սոնա Կարապետյանն ու Վարյա Հովհաննիսյանը՝ երիտասարդ, բայց արդեն իսկ բավական փորձ ունեցող մասնագետներ: Միասին փորձ արվեց հասկանալու, թե ինչ իրավիճակ է ու ինչից պետք է սկսել աշխատանքը: Անշուշտ, կային առաջնահերթություններ: «Կարևոր էր ցույց տալ, որ կինոժառանգությունն ինչ-որ օժանդակ ոլորտ չէ, այլ լուրջ ֆինանսական ռեսուրսներ և ուշադրություն պահանջող բնագավառ է և որ հայկական կինոյի պահպանման հարցը մեր ընթացիկ և ապագա մշակութային քաղաքականության կարևոր մասը պիտի կազմի»,– ասում է Վիգենը:
Միևնույն ժամանակ, քանի որ կինոկենտրոնի գրասենյակը տեղակայված էր նախկին «Հայֆիլմ» կինոստուդիայի տարածքում և հնարավորություն կար ուսումնասիրելու տարածքը, պարզ դարձավ, որ հաջորդ առաջնահերթությունը պիտի լինի այնտեղից դուրս բերել լքված ու ոչնչացման եզրին գտնվող ժապավենային և վարչական արխիվների նյութերը, որոնց զգալի մասը, ցավոք, արդեն իսկ ոչնչացված կամ կորած է:
Կինոժառանգության բաժնի ղեկավարը մինչև հիմա տարակուսում է. «Դժվար է պատկերացնել, թե ինչու և ինչ պայմաններում է ոչնչացվել արխիվային նյութի մեծ մասը, քանի որ 2005-ին կինոստուդիան մասնավորեցվել էր, ընդ որում՝ մասնավոր շահառուին էր փոխանցվել նաև պետական ֆիլմերի օգտագործման իրավունքը և միայն 2015-ին, երբ արդեն տեղի էր ունեցել թալանման ու ավերման գործընթաց, այն կրկին պետականացվել է»: Բարեբախտաբար այսօր «Հայֆիլմ» կինոստուդիայի իրավահաջորդը հենց Ազգային կինոկենտրոնն է:

Հայկական կինոժառանգության փրկարարական աշխատանքները

2020-ին՝ բավական բարդ ժամանակներում, սկսվեցին բաժնի աշխատանքները: Օրեր շարունակ բաժնի աշխատակիցներն անց էին կացնում նախկին ազգային ստուդիայի սենյակներում՝ աղբի և փոշու միջից փորձելով գտնել ու փրկել այն, ինչը դեռ հնարավոր է:

Ի վերջո, գտնվեցին 70-ականներից ի վեր նկարահանված մի քանի տասնյակ ֆիլմերի նկարահանման ամբողջական նյութեր, այդ թվում, օրինակ՝ Վիգեն Չալդրանյանի «Լռության սիմֆոնիա», «Տեր ողորմեա», Առնոլդ Աղաբաբովի «Որտե՞ղ էիր, մարդ աստծո», Դմիտրի Կեսայանցի «Աղետը», «Անիծվածները», Լևոն Իսահակյանի «Գիքորը» և շատ ավելին: Հայտնաբերվեցին նաև Սերգեյ Փարաջանովի «Նոռան գույնը» ֆիլմի օրիգինալ նեգատիվային հատվածներ, ինչպես նաև մի քանի վավերագրական նյութեր, օրինակ՝ երկրաշարժին կամ 90-ականների իրադարձություններին վերաբերվող: Գտնվել են նաև արտասահմանյան ֆիլմերի հայերեն հնչյունավորումներ: Ձայնագրման բաժնից ևս մեծ քանակությամբ նյութ է գտնվել՝ մագնիսային ժապավեններով, ինչը ևս մեծ նշանակություն ունի այդ ֆիլմերի պատշաճ վերականգնումն ապահովելու համար:

Ընդհանուր առմամբ, աղբակույտերից դուրս է բերվել մոտ 3000 տարաներ (բոբինաներ), որոնք պարունակում են թե՛ 35մմ պոզիտիվ ժապավեններ, թե՛ նեգատիվային հատվածներ և թե՛ մագնիսային ձայնավորումներ: Եթե կողմնակի անձին սա չի տպավորում, Վիգենը բացատրում է. «Այս ամենն անչափ հետաքրքիր ու կարևոր է հատկապես հայ կինոյի հետազոտողների համար, քանի որ շատ ֆիլմերի նկարահանման ամբողջական նյութերի այլ տարբերակներ չեն պահպանվել, չկան դրանց նեգատիվները և գտածոները հենց աշխատանքային նյութերն են՝ դրվագներ, դուբլներ, ինչպես նաև կադրեր՝ որոնք վավերագրում են բուն նկարահանման ընթացքը»:

Ըստ Վիգենի՝ նույնքան կարևոր են նաև գտնված վարչական արխիվի նյութերը, որոնք բառացիորեն աղբից են հանվել: Դրանք լայն պատկերացում են տալիս ստուդիայի աշխատակազմի՝ ընդհուպ մինչև տնօրենների, գեղարվեստական խորհուրդների և հատկապես ռեժիսորների աշխատանքի մասին: Օրինակ՝ գտնվել է տնօրեն Լաերտ Վաղարշյանի անձնական գործը, որտեղ կա իր իսկ ձեռքով գրված շատ ուշագրավ ինքնակենսագրությունը կամ ռեժիսոր Կարեն Գևորգյանի արգելված «Հրաժեշտ սահմանագծից այն կողմ» ֆիլմի գործը: Այս նյութերն այժմ ինվենտարիզացման փուլում են, ինչը բավական ծավալուն աշխատանք է՝ հաշվի առնելով, որ կա մի քանի հազար անուն փաստաթուղթ: Հաշվառումանը զուգահեռ դրանք թվայնացվում են ուսումնասիրողներին հասանելի դարձնելու նպատակով:

Վիգեն Գալստյանին ճանաչողները գիտեն, որ նրա ուսումնասիրությունների կարևորագույն ոլորտներից մեկն արդեն

↑ Գրնված բալմաթիվ փաստաթղթերից ու սցենարային թերթերից

← Արդեն փրկված ու դասավորված ժապավենները

վաղուց լուսանկարչությունն է (բավական է միայն նշել նրա Լուսադարան հիմնադրամը, որը զբաղվում է հայ ֆոտոարվեստի պահպանմամբ): Այնպես որ Վիգենի համար հատուկ նշանակություն ուներ Հայֆիլմի հսկայական ֆոտոարխիվի բացահայտումը: Ստուդիայում գործող լուսանկարչական բաժինը տարիներ շարունակ վավերացրել էր ֆիլմերի ստեղծման գործընթացը և հարակից իրադարձությունները: Այժմ գտնվել են շուրջ 100 ֆիլմերի կինոկադրային պատկերներ, դերասանների լուսանկարներ, դրվագներ փորձերից, աշխատանքային կադրեր, մի խոսքով, մոտ 6 հազար լուսանկար և նեգատիվ՝ ահռելի քանակությամբ վավերագրական նյութ: Հայտնաբերվել են նաև մի քանի տասնյակ կինոպաստառներ, որոնցից հինգը մինչ հիմա անհայտ էին և այժմ վերականգնվում են Ազգային պատկերասրահի ռեստավրացիոն բաժնում ու պատրաստվում ցուցադրության (սա էլ՝ յուրահատուկ շարունակություն Վիգենի՝ հայկական կինոպլակատներին նվիրված ուսումնասիրություններին և դրանց նվիրված «Մոռացված արվեստ» պատկերագրքին):

Աշխատանքի ընթացքում ժամանակ առ ժամանակ բաժնի աշխատանքներին օգնության էին հասնում կամավորներ հենց կինոյի ոլորտից: Դա ոչ միայն զուտ ֆիզիկական օգնություն էր, այլև շատ կարևոր քայլ հայկական կինոյի պահպանման հիմնախնդրի հանրայնացման տեսանկյունից: Աշխատանքների ընթացքում շնորհիվ նաև այդ կամավորների սոցիալական ցանցերում հաճախ կարելի էր հանդիպել աշխատանքային պրոցեսի մասին հրապարակումներ ու կադրեր:

«Մենք աշխատում էինք, որ հանրությունը գիտակցի, որ ժառանգություն ասվածն իրոք շատ փխրուն ու խոցելի է: Հաճախ կինոն մեզ համար ինչ-որ վերացական բան է, որ հայտնվում է հեռուստացույցի էկրանին, հետո անհետանում, ու մեզ թվում է, թե դա հենց այդպես էլ պիտի լինի ու այն նյութականի հետ չի կապվում, իսկ իրականում կինոն շատ նյութական բան է, որը լուրջ խնամքի կարիք ունի՝ անկախ նրանից՝ ժապավենի վրա է նկարահանվել, վիդեոյի, թե թվային կրիչի»,– ասում է Վիգենն ու նշում, որ անտարբերությունն ու չիմացությունը նման դեպքերում բերում է մշակութային հիշողության աղետալի կորուստների:

Կինոթանգարան-ինստիտուտի կարևորության մասին

Հավաքված նյութն այնքան ծավալուն է, բազմաբովանդակ ու բազմապրոֆիլ, որ միանշանակ ունի ոչ միայն զուտ արխիվային նշանակություն, այլ նաև թանգարանային կարգավիճակի հավակնություն և ներուժ:

«Հայֆիլմ» կինոստուդիայի տարածքից փրկված նյութի մասշտաբն ու կարևորությունը թույլ է տալիս մտածել ի վերջո Հայաստանում կինոթանգարան-ինստիտուտ ունենալու հեռանկարի մասին, ինչպիսինը չունենք և չենք ունեցել երբեք: Այն, ըստ Վիգենի, պիտի կատարի ոչ այնքան ցուցադրական, որքան հետազոտական գործառույթ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԺԱՄԱՆԱԿ ԱՌ ԺԱՄԱՆԱԿ ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԷԻՆ ՀԱՍՆՈՒՄ ԿԱՄԱՎՈՐՆԵՐ՝ ՀԵՆՑ ԿԻՆՈՅԻ ՈԼՈՐՏԻՑ

↑ Աղբի մեջ հայտնված ժապավենները

«Կինոթանգարան-ինստիտուտը թույլ կտա ստեղծել ազգային կինոյի լայն պատում, թույլ կտա սահմանել, թե ի վերջո որն է հայկական կինոն: Ուստի, մեր աշխատանքը տանում է դեպի թանգարանի ստեղծումը, որպեսզի գտնված նյութերը համակարգված կերպով ներկայացվեն հանրությանը և ստեղծվի հայկական կինոժառանգության պահպանման և հետազոտման մի էպիկենտրոն»: Վիգենը վստահ է, որ նման ինստիտուտի բացակայությունը բերում է նրան, որ Հայաստանում փաստորեն բացակայում է կինոգիտությունն իբրև գիտակարգ: «Կան ֆիլմեր, որոնք մենք սովոր ենք ընկալել իբրև պարզապես պատում, զվարճալի, հուզիչ պատմություն, սակայն չգիտենք, թե դրանք ինչ մշակութային և պատմական հարացույցների են վերաբերում կամ արտահայտում, այսինքն՝ բուն ֆիլմերի քննադատական նեցուկները մեզ հասանելի չեն և մնում են ֆոլկլյորի մակարդակի վրա: Թանգարան-ինստիտուտը կարող է փոխել այս պատկերը և դառնալ այն շարժիչ ուժը, որը հնարավորություն կտա հայկական ֆիլմերի շուրջ ստեղծել դիսկուրս և հանրայնացման նոր մեխանիզմներ՝ ընդհուպ մինչև դրանց թվային տիրույթում տարածելն ու մասնագիտական փառատոնների, գիտաժողովների ներկայացնելը»,– նշում է Վիգենը:

Ծրագրեր, ծրագրեր, ծրագրեր

Ազգային կինոկենտրոնի կինոժառանգության բաժնի կարևորագույն գործառույթներից է նաև ֆիլմերի վերականգնումը, ինչը բավական բազմաշերտ և մեծ դրամական ռեսուրսներ պահանջող աշխատանք է: Խոսքը մոտ 400 գեղարվեստական և մի քանի հազար վավերագրական ֆիլմերի և խրոնիկային նյութերի վերականգնման մասին է: Սա նախ և առաջ պահանջում է բավական երկար հետազոտական աշխատանք, սկզբնաղբյուրների հայտնաբերում. բազմաթիվ նեգատիվներ էլ ոչնչացվել են, քանի որ եղել են հեշտ բռնկվող նիտրատի հիմքի վրա: Բացի այդ, «Հայֆիլմի» ֆիլմերի սկզբնաղբյուրները գրեթե միշտ ուղարկվել են Մոսկվա՝ երևակման, նեգատիվները մնացել են այնտեղ և այժմ պահվում են աշխարհի առաջին պրոֆեսիոնալ արխիվներից մեկում՝ «Բելլյե ստոլբի» ֆիլմադարանում: Մոսկովյան արխիվից դրանք պարզապես վերցնել հնարավոր չէ, իսկ տեղում թվայնացնելը կապված է ահռելի դրամական միջոցների հետ: Այնուամենայնիվ, Վիգենը փաստում է, որ պետությունը փորձում է օգնել՝ օգտագործելով այլ լծակներ: Եվ չնայած բոլոր դժվարություններին՝ արդեն իսկ հաջողվել է համագործակցել լեհական «Ֆիքսաֆիքս» ստուդիայի հետ և վերականգնել Սերգեյ Փարաջանովի «Հակոբ Հովնաթանյան» կարճամետրաժ ֆիլմն ու այն ցուցադրել բազմաթիվ միջազգային կինոփառատոներում ու գրանցել հաջողություններ: Ծավալուն աշխատանք է տարվել նաև Փարաջանովի «Նոռան գույնը» ֆիլմի չօգտագործված տեսարանների, դրվագների վերականգնման և թվայնացման մասով: Առաջիկայում ակնկալվում է նաև հայ կին ռեժիսորների քանակապես սակավաթիվ, սակայն մշակութային ու պատմական տեսանկյունից չափազանց կարևոր շուրջ տասը ֆիլմերի թվայնացում ու վերականգնում: Մեկ այլ նախագիծ, որի ուղղությամբ ակտիվորեն աշխատում է Կինոկենտրոնը՝ Համո Բեկնազարյանի կինոժառանգության ամբողջական թվայնացումն ու վերականգնումն է:

Քաջ գիտակցելով հայկական կինոն օտար հանդիսատեսին ներկայացնելու կարևորությունը՝ կինոժառանգության բաժինը պատրաստել է 10 ֆիլմի ենթագիր և նախատեսում է 10-15 ֆիլմի ենթագրեր պատրաստել յուրաքանչյուր տարի: Պայմանագիր կնքելով անգլիական «Կինոկլասիկա» սթրիմինգային հարթակի հետ՝ արդեն իսկ երկու հայկական ֆիլմ, ինչպես Հենրիկ Մալյանի «Կտոր մը երկինք» և Ֆրունզե Դովլաթյանի «Բարև՛, ես եմ»-ը, ցուցադրվեցին անգլերեն ենթագրերով և մեծ հաջողություն ունեցան բրիտանական տիրույթում: 2023-ին՝ Հայ կինոյի հիմնադրման 100-ամյակին ընդառաջ, կիրականացվեն բազմաթիվ այլ ծրագրեր, որոնց թվում է հայկական ֆիլմերը գովազդող արտասահմանյան կինոպաստառների մասշտաբային ցուցահանդեսը, մի շարք հրատարակություններ և ցուցադրություններ:

Այսպես՝ քիչ ռեսուրսներով, մեծ էնտուզիազմի շնորհիվ Ազգային կինոկենտրոնի կինոժառանգության բաժինը վստահ քայլերով իրականացնում է իր բարդ ու կարևոր աշխատանքը: Մնում է հուսալ, որ տարեցտարի կավելանա ոչ միայն պետական աջակցությունը, այլև հանրության շրջանում ազգային կինոժառանգության հանդեպ հոգատար վերաբերմունքը:

Համլիկ Բարխուդարյան
Հարություն Մալխասյան

Սամո Նիգարյանի հեղինակային թանգարանները

Սամո Նիգարյանի արվեստը դեռևս մինչև վերջ բացահայտված չէ: Ծայրահեղ ակտիվ ու բազմաշերտ այս արվեստագետի գործունեության մի մեծ բաժին պատկանում է թանգարանային դիզայնին: Քչերը գիտեն, որ նա հայաստանյան թանգարանային դիզայնի ոլորտի իրական հեղափոխական էր: Սամո Նիգարյանի մոդելյումների, հեղինակային թանգարանի՝ գեղարվեստա-առասպելաբանական մեթոդի ու ցուցադրությունների իրականացման մասին կրուցեցինք արվեստագետի կնոջ՝ թանգարանագետ Մարինե Հարոյանի հետ, ով ոչ միայն մեծ ոգևորությամբ պատմեց Նիգարյանի մասին, այլև փրամադրեց նյութեր ու արխիվային լուսանկարներ:

↓ Եղիշե Չարենցի կուն-թանգարանի ձևավորումը, 1991

Հեղինակային թանգարան

Անցյալ դարի 60-80-ականներին թանգարանային ցուցադրությունների նախագծման ոլորտում ներդրված գեղարվեստա-առասպելաբանական մեթոդը հիմք դրեց թանգարանային ցուցադրության մի նոր տեսակի, որը հետագայում կոչվեց հեղինակային ցուցադրություն: Արևմուտքում այն առավել ցայտուն արտահայտվեց թանգարանային շենքերի ճարտարապետության մեջ, Խորհրդային Միությունում՝ առավելապես թանգարանային ինտերիերի ձևավորման ոլորտում: Նույն տարիներին աշխարհում ձևավորվեց գեղարվեստա-առասպելաբանական մեթոդը, որը սինթեզում է ճարտարապետության, գեղանկարչության, դիզայնի, թատրոնի, դրամատուրգիայի տարրեր և ցուցադրությունը հասցնում է արվեստի ինքնուրույն տեսակի: Թանգարանային նյութը վերածվում է գրեթե թատերականացված ներկայացման:

Մեզանում այս մեթոդն առաջինը կիրառեց նկարիչ ձևավորող Կամո Նիգարյանը: Արվեստագետը, ով արդեն 1978-ին ձևավորել էր Սարդարապատի ազգագրության թանգարանը՝ Հայկազ Քոչարի և Էդուարդ Սադոյանի հետ համահեղինակությամբ, 1984-ին՝ Գյումրու Ժողովրդական ճարտարապետության և կենցաղի թանգարանը և Սերգեյ Մերկուրովի թանգարանը, իսկ 1985-ին՝ Մեծ Հայրենական պատերազմի թանգարանը, աստիճանաբար մոտենում էր գեղարվեստա-առասպելաբանական մեթոդին և հետագա երեք աշխատանքները պիտի դրա վառ օրինակները լինեին:

← Հեղափոխության թանգարանի ձևավորումը, 1987

Ճանապարհը, սակայն, հեշտ չէր։ Դեռևս Տեխնիկական գեղագիտության համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի հայկական մասնաճյուղում աշխատելու տարիներին ստացավ իր առաջին՝ Սարդարապատի թանգարանի ձևավորման պատվերը, հետո եղավ Գյումրիում Ժողովրդական ճարտարապետության և կենցաղի թանգարանի ձևավորումը։ Իսկ ահա Հայրենական մեծ պատերազմի թանգարանի նախագիծը բարդ պատմություն ուներ։ Մարինե Հարոյանը պատմում է, որ այդ թանգարանը պատվիրված է եղել Մոսկվայից հրավիրված նկարիչների կողմից, ովքեր եկել, գումարը վերցրել էին, սակայն գործը չէին արել։ Արդյունքում կրկին դիմեցին Նիգարյանին՝ շատ կարճ ժամանակում թանգարանը գլուխ բերելու խնդրանքով։ Վերջինս համաձայնեց ու ստեղծեց շատ հաջողված ցուցադրություն՝ յուրահատուկ թանգարանային ինստալյացիաներով։

Սակայն մի միջադեպ եղավ։ Աշխատանքի ընթացքում արվեստագետը գերմանացի զինվորի սաղավարտ էր դրել գլխին և լուսանկարվել։ Լուրը հասել էր թանգարանի տնօրենին, որը հրաժարվել է վճարել կատարված աշխատանքի դիմաց և սպառնացել դիմել ԿԳԲ։ Նիգարյանը համաձայնել է չվարձատրվել այն պայմանով, որ իր հետ աշխատող թիմն աշխատավարձ ստանա։ Համաձայնության են եկել։



↓ → Եղիշե Չարենցի կուն-թանգարանի ֆևափորումը, 1991

↓ Հեղափոխության թանգարանի ֆևափորումը, 1987

Տիկին Հարոյանն ասում է. «Ես շատ զարմացա, Կամոն սարսափելի անվախ ու ազատ մարդ էր, նրան հարցրի՝ դու իսկապե՞ս ԿԳԲ-ից վախեցա՞ր, ախր հայրդ մեկ րոպեում հարցը կլուծեր (դե իր հայրը նախկին հետախույզ էր)։ Ու ինքն ասաց, որ համաձայնեց պայմանին հենց նրա համար, որ հոր անունը հանկարծ նման կերպ չարծարծվի»։

Շինելապար թունելով դեպի հեղափոխության թանգարան

Հեղափոխության թանգարանն (1987) առաջին ցուցադրությունն էր, որտեղ Նիգարյանը կիրառեց գեղարվեստա-առասպելաբանական մեթոդը։ Սա շատ համարձակ քայլ էր գաղափարաբանական պարտադրանքի տարիներին։ Մեթոդի կիրառումը հնարավորություն տվեց հեղինակին պատմել սոցիալիստական պատումին հակասող, դրա հետ չհամընկնող ուրիշ մի պատմություն, որը թաքնված էր նկարչի կողմից կիրառված նշանագրության մեջ։ Մուտքը թունելանման ճանապարհ էր, որի երկու կողմերը՝ շինելի կտորով պաստառված, մռայլ, անվերջանալի թվացող պատեր էին։ Այդ մուտքը, սակայն, Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի ընդունող խորհուրդը ստիպեց փոխել։ Եվ հեղինակը գտավ այլ լուծում՝ այսուհետ դեպի ցուցադրություն տանող ուղին անցնում էր նեղ ու անհարթ գլաքարե ճանապարհով։ Յուրահատուկ էր սոցիալիստական հեղափոխության սկիզբը խորհրդանշող պաստառում 1917 թվականի գրելու կերպը։ Այնպես էր գրված, որ օրվա որոշակի ժամերին արևի լույսի փոփոխության հետ այն անհետանում էր։

Տիկին Հարոյանն ասում է. «Քչերը գիտեին այդ մասին, երբեմն հատուկ այդ ժամերին էինք գնում թանգարան, որ հետևեինք, թե ո՞նց է թիվն անհետանում։ Դե ըստ կոմունիստների՝ ամեն բան սկսվում էր 1917-ից, կարծես դրանից առաջ աշխարհում ոչինչ չի եղել։ Իսկ Կամոն



Կամո Նիգարյան

Կամո Նիգարյանն (1950-2011) ուշ խորհրդահայ շրջանի արվեստի վառ ներկայացուցիչներից է, Հայաստանի ժամանակակից արվեստի հիմնադիրներից: Նա այն արվեստագետներից էր, որի ներդին ստեղծագործական ապստությունը թույլ էր տալիս դեմ գնալ սոցռեալիստական ընդունված գեղագիտական կանոններին: Արվեստագետի ապստությունն արտահայտվում էր արվեստի այն բազմաթիվ մեդիաներում, որտեղ փորձել է իրեն. գեղանկարչություն, գրաֆիկա, լուսանկարչություն, արդյունաբերական դիզայն, գրաֆիկական դիզայն և թանգարանային դիզայն:

↓ *Եղիշե Չարենցի տուն-թանգարանի ֆնաիլիրումը, 1991*

մի բան գիտեր»: Ցուցադրական կահույքը ևս պատված էր շինելի կտորով: Բացառիկ էր նաև այն, որ ընդունված մեծածավալ կտավների փոխարեն Նիգարյանն օգտագործեց լուսանկարը: Առաջին անգամ հայաստանյան թանգարանում մի ամբողջ պատ ծածկվեց լուսանկարով, ինչը տպագրության տեսանկյունից իրականացնելն ամենևին էլ հեշտ չէր: Ֆոտոինստալյացիան ուղեկցվում էր առաստաղից կախված լուսանկարներով, որոնք ըստ Նիգարյանի պիտի լինեին էկրաններ ու շարժանկարներ: Հայաստանում առաջին անգամ հենց Նիգարյանը թանգարանային ցուցադրության մեջ տեսաֆիլմ օգտագործեց: Տեխնիկապես բարդ էր, բայց ոչ անհնար: Ցավոք, նորանկախ Հայաստանում չգիտակցվեց և չարժևորվեց այս ցուցադրությունը և անմիջապես ապամոնտաժվեց թանգարանի լուծարմանը զուգահեռ:

Պոետի կյանքը երեք հարկում: Եղիշե Չարենցի տուն-թանգարանը

Չարենցի տուն-թանգարանը (1991) Կամո Նիգարյանի երկրորդ բացառիկ աշխատանքն էր՝ հեղինակային թանգարանի վառ օրինակ: Այս շրջանում արվեստագետն արդեն ավելի ազատ էր ստեղծագործում, նորանկախ Հայաստանում չկար նախկին ցենզուրան: Չարենցի թանգարանի ցուցադրությունը Նիգարյանը կառուցեց մետաֆորների վրա: Նկուղային հարկը բանաստեղծի կյանքի վաղ շրջանի՝ մանկության, Կարսի իր տան մասին էր պատմում: Այստեղ Նիգարյանը չէր մոռացել նաև Մեծ Եղեռնի թեման և երիտասարդ, ուժեղ տղայի գրկում ցեղասպանությունից մազապուրծ եղած ծեր կնոջ լուսանկար տեղավորեց՝ իբրև վերածնվող Հայաստանի խորհրդանիշ: Մաքսային կետերի գծանշանները հիշեցնում էին Ռուսաստանի հետ սահմանային քաղաք լինելու մասին:

Ցուցադրության այս հատվածում Նիգարյանն անպայման գորգ օգտագործեց, քանի որ Չարենցի հայրը գորգավաճառ էր: Հենց գորգի վրա ոսկեգույն շրջանակի մեջ հոգևորականի խորհրդանշական դիմանկար տեղավորեց և ըստ ժամանակաշրջանի երկրորդ շրջանակն արդեն կարմիր էր ու թեքված, իսկ 1937-ը խորհրդանշող հատվածում՝ ճղված, բզկտված: Երկրորդ հարկը միանգամայն այլ էր՝ ժամանակաշրջան է փոխվել. կոնստրուկտիվիզմ, Եղիշե Չարենցի, Կարո Հալաբյանի ու Միքայել Մազմանյանի թողարկած առաջին ավանգարդ «Ստանդարտ» ամսագրի ոգով, իսկ արդեն երկրորդ հարկ տանող աստիճաններին ամսագրի անվանումն էր՝ STANDARD: Այդ հարկում էին ներկայացված Չարենցի «Երկիր Նաիրին» ու «Դանթեական առասպելը»:

Երրորդ հարկում ցուցադրված էին ստալինյան բռնապետության սարսափի ժամանակները, որին զոհ գնաց նաև մեծ բանաստեղծը, և հոգևորականի նույն լուսանկարն արդեն պատռված: Ուշագրավ էր նաև Չարենցի սիլուետով հայելին, որի միջով կարծես անցնում էին ամեն անգամ թանգարանով տեղաշարժվելիս: 2004-ին այս բացառիկ ցուցադրությունը, ցավոք, փոխվեց:

Սերգեյ Մերկուրովի տուն-թանգարանը

Մերկուրովի տուն-թանգարանը հիմնադրվել է 1984-ին, քանդակագործի հայրական տանը՝ Գյումրիում: Թանգարանն ունեցել է երկու մշտական ցուցադրություն՝ 1984 և 2004, որոնք երկուսն էլ նախագծել է Նիգարյանը: Առաջին ցուցադրությունը, ստեղծված լինելով խորհրդային տարիներին, կրում էր այդ տարիների գաղափարական կնիքը: Գիտական և ստեղծագործական թիմի առջև խնդիր էր դրված Մերկուրովին

← Հեղափոխության թանգարանի ցուցափրոմը, 1987

→ Կամո Նիգարյանը՝ Սերգեյ Մերկուրովի կուն-թանգարանի ցուցադրման աշխատանքների ընթացքում, 2004

↑ ↓ Սերգեյ Մերկուրովի կուն-թանգարանի ցուցափրոմը, 2004

ներկայացնել որպես «հեղափոխության երգիչ» և ցուցադրել առավելապես հեղինակի հեղափոխական թեմաներով և հեղափոխական գործիչներին նվիրված աշխատանքները: Սա էր պատճառը, որ ցուցադրությունը կառուցվեց առավելապես պատկերա-նկարագրական սկզբունքով, որտեղ գերակշռող նյութը լուսանկարն էր:

Երկրորդ՝ 2004-ի ցուցադրությունն աչքի էր ընկնում արդեն հեղինակի անձնական վերաբերմունքի արտահայտմամբ: Թանգարանի ցուցադրությունն իրականացված էր երեք հիմնական սրահներում: Գերիշխող գույնը սպիտակն է՝ ներս հորդող բնական լույսով, նյութը՝ գիպս, որը քանդակագործի կողմից ամենաշատ օգտագործվող նյութն է:

Սերգեյ Մերկուրովի արվեստում առանձնահատուկ տեղ են գրավում հետմահու դիմակները: Այդ արվեստը նա հասցրեց նոր որակի: Երկրորդ ցուցադրության համար հաջողվեց Հայաստան բերել դիմակներն ու այս անգամ, ի տարբերություն առաջին ցուցադրության, առանցքը մահադիմակներն են:

Ցուցադրված են մշակույթի և կրոնական գործիչների՝ Խրիմյան Հայրիկի, Հովհաննես Թումանյանի, Վլադիմիր Մայակովսկու, Լև Տոլստոյի, Վասիլի Սուրիկովի, Մաքսիմ Գորկու և այլոց մահադիմակները, առանձին սրահում ներկայացված են քաղաքական գործիչների մահադիմակները: Հետմահու դիմակների այս եզակի հավաքածուն ցուցադրվում է համաշխարհային քաղաքակրթության երեք խորհրդանիշների՝ խորանարդի, զիկուրատի և բուրգի տեսք ունեցող ցուցափեղկերի մեջ: Ինչո՞ւ: Քանի որ դրանք

↓ Սերգեյ Մերկուրովի կուն-թանգարանի ցուցափրոմը, 2004

հենց դամբարաններ ու պաշտամունքային կառույցներ են և մարդկության պատմության խորհրդանիշներ: Բացի այդ, դրանք նաև ճարտարապետական ֆորմաներ են և Նիգարյանի դիտարկմամբ, եթե մտովի այդ երեք ֆորմաները պատկերացնենք իրար վրա դրված ուղղահայաց կառուցվածքով՝ կտեսնենք և՛ ստալինյան ժամանակաշրջանի ճարտարապետական կառույցներ, և՛ քառանիստ հայկական եկեղեցի: Մտավորականների այս համաստեղության մեջ յուրաքանչյուրի նկատմամբ Նիգարյանն արտահայտել է իր վերաբերմունքը: Մի դեպքում՝ խմբից առանձնացնելով, ինչպես, օրինակ՝ Մայակովսկուն: Մեկ այլ տեղ էլ միևնույն ցուցափեղկին տարբեր հարթությունների վրա է ցուցադրել մի քանի մահադիմակ: Օրինակ՝ Խրիմյան Հայրիկի մահադիմակն ամենաբարձրն է, որպես ամենամոտն Աստծուն, երկրորդ մակարդակում բանաստեղծի՝ Հովհաննես Թումանյանի մահադիմակն է, ով երկրի ու երկնքի արանքում է, իսկ նրանց ստորադասված է քաղաքական գործիչը, տվյալ դեպքում՝ Վառլամ Ավանեսովը:

Ապշեցուցիչ է 20-րդ դարի առաջին կեսի քաղաքական էլիտայի (հանձին կոմունիստական ընտրախավի. Լենին, Պլեխանով, Ձերժինսկի, Կիրով և այլն) մահադիմակների սրահը: Սրահի առանցքը ձգված եռանկյունաձև ցուցափեղկի հայերեն ու լատիներեն արձանագրությունն է. «Մահացածների մասին կամ լավ, կամ ոչինչ» (De Mortius aut Bene, aut Nihil): Փոխելով ստանդարտ, ակադեմիական ցուցադրման մեթոդը՝ գրեթե բոլոր գործերը տեղադրված են աչքի մակարդակից ավելի ցածր կետի վրա: Հեղինակը փոխել է նաև թանգարանային առարկայի և դիտողի միջև գոյություն ունեցող հիերարխիկ հարաբերությունները: Քաղաքական գործիչների մահադիմակները խորհրդանշական կեռից են կախված:

Տիկին Հարոյանը նշում է, որ Մերկուրովի տուն-թանգարանի երկու ցուցադրությունները դասական օրինակ են թանգարանագիտության մեջ՝ այն բանի, թե ինչպես միևնույն անձին վերաբերող հավաքածուն նոր գեղագիտական հայեցակարգով և նյութի մեկնաբանման այլ մեթոդի կիրառմամբ ներկայացնելու պարագայում կարող է ստացվել միանգամայն «այլ» թանգարան:

Համիկ Բարխուդարյան
Մարինե Հարոյանի արխիվ

Հայոց ցեղասպանության Թանգարանի կառուցումը, 1995 թ.

1994 թվականին որոշում կայացվեց հաջորդ տարի՝ Մեծ եղեռնի 80-րդ տարելիցին, Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի տարածքում բացել Հայոց ցեղասպանության Թանգարան-ինստիտուտ: 1995-ի ապրիլի 24-ին տեղի ունեցավ պաշտոնական բացումը, թեև Թանգարանը վերջնականապես գործարկվեց սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի Հանրապետության անկախության տարեդարձի օրը:
Ճարտարապետներ Սաշուր Քալաշյանի և Արթուր Թարխանյանի ու քանդակագործ Ֆերդինանտ Առաքելյանի նախագծով Թանգարանի կառուցումն իրականացվել է Հայ բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) և «Հայաստան» համահայկական հիմնադրամի ֆինանսական ներդրումներով:
Թանգարանի ցուցադրության ծրագիրը մշակվել էր Հայոց ցեղասպանության 80-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողովի էքսպոզիցիոն ենթահանձնաժողովի անդամների՝ անվանի հայ նկարիչ, գեղանկարիչ Գրիգոր Խանջյանի, պատմաբան-արևելագետ, պատմական գիտությունների դոկտոր Ռուբեն Սահակյանի, պատմաբան, պատմական գիտությունների թեկնածու, Հայոց ցեղասպանության Թանգարան-ինստիտուտի հիմնադիր-տնօրեն Լավրենտի Բարսեղյանի և ուրիշների կողմից՝ ենթահանձնաժողովի նախագահ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. Կոնստանտին Խուդավերդյանի գլխավորությամբ:



Արմենպրես

evnmag.com
կարդայեք առցանց



The Main
Design Store

@TheMainDesignStore

/

TheMain.am

/

Միեր Մկրտչյան 10
(Միրզոյան գրադարան,
առաջին հարկ)